ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուղեցույց



2026 թվականի
սեպտեմբեր

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Կազմել են՝
ի.գ.թ., դոցենտ **Նարինե Ալեքսանյանը**
և ի.գ.թ. **Նարինե Սոլոմոնյանը**

Պատրաստվել է Եվրոպայի խորհրդի «Աջակցություն սահմանադրական արդարադատության զարգացմանը Հայաստանում՝ եվրոպական չափանիշներին համապատասխան» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար 2023-2026թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում

2026 թվականի սեպտեմբեր

Եվրոպայի խորհուրդ

Original:
Guide on Admissibility Criteria for Individual Applications to the Constitutional Court of the Republic of Armenia

Սույն աշխատության մեջ արտահայտված կարծիքները հեղինակ(ներ)ի պատասխանատվությունն են և կարող են չարտացոլել Եվրոպայի խորհրդի պաշտոնական քաղաքականությունը:

Քաղվածքների վերարտադրումը (մինչև 500 բառ) թույլատրվում է, բացառությամբ կոմերցիոն նպատակների, քանի դեռ պահպանվում է տեքստի ամբողջականությունը, հատվածը չի օգտագործվում համատեքստից դուրս, չի տրամադրում թերի տեղեկատվություն կամ այլ կերպ չի մոլորեցնում ընթերցողին՝ տեքստի բնույթի, շրջանակի կամ բովանդակության վերաբերյալ: Ամբողջական տեքստը միշտ պետք է նշվի հետևյալ կերպ՝ «Եվրոպայի խորհուրդ, հրատարակման տարի»:

Փաստաթղթի ամբողջական կամ մի մասի վերարտադրման/թարգմանության հետ կապված բոլոր հարցումները պետք է ուղղվեն Հաղորդակցության տնօրինությանը (F-67075 Ստրասբուրգ, Սեդեքս կամ publishing@coe.int):

Էջադրումը՝ «ԲՐԵՆԴԲՈՒՔ» ՍՊԸ

Շապիկի լուսանկար. Եվրոպայի խորհուրդ

© Եվրոպայի խորհուրդ, սեպտեմբեր, 2026թ.

GUIDE ON ADMISSIBILITY CRITERIA FOR INDIVIDUAL APPLICATIONS TO THE CONSTITUTIONAL COURT OF THE REPUBLIC OF ARMENIA

EXECUTIVE SUMMARY

1 BACKGROUND AND RATIONALE FOR THE GUIDE.

The right to apply to the RA Constitutional Court is one of the most significant mechanisms for the protection of human rights and the effective implementation of constitutional justice. Since its establishment through the 2005 constitutional amendments, this right has allowed individuals to challenge legal norms that they believe violate their constitutional rights, thereby playing a vital role in upholding the supremacy of the Constitution.

Despite this progress, during recent years a considerable number of individual applications are dismissed at the admissibility stage. The proportion of individual applications that result in a substantive review by the Constitutional Court remains consistently low[1]. This highlights a key challenge: many potential applicants — including individuals, legal entities, and even legal practitioners — lack sufficient awareness of the standards and procedures that govern individual applications to the Constitutional Court.

In response to this gap, the **"Guide on Admissibility Criteria for Individual Applications to the Constitutional Court"** has been developed within the framework of the Council of Europe's project *"Support to the Development of Constitutional Justice in Armenia in Compliance with European Standards,"* implemented by the Council of Europe Yerevan Office. The guide is intended to serve as a practical tool for improving the accessibility and effectiveness of constitutional justice in Armenia, strengthening the transparency of the Court's operations, and ensuring that applicants are better informed about their rights and obligations in the process.

2 OBJECTIVES AND SCOPE

The Guide seeks to achieve the following key objectives:

1. Raise awareness among the public and legal professionals about the admissibility requirements for individual applications;
2. Enhance the accessibility of constitutional justice;
3. Promote the transparency of the Constitutional Court's activities;

1 Annual report on the Constitutional Court Decisions 2024 (available only in Armenian), Annual report on the Constitutional Court Decisions 2023 (available only in Armenian)

4. Present in a clear manner the admissibility criteria and procedures for individual applications;
5. Improve the practice of submitting applications.

The Guide is based on a comprehensive review of Armenia's constitutional and legal framework. It draws upon the Constitution of the Republic of Armenia, the Constitutional Law on the Constitutional Court of the Republic of Armenia, the legal regulations of the Rules of Procedure of the Constitutional Court, case law of the Constitutional Court regarding admissibility of applications, as well as relevant international documents and the practice of the European Court of Human Rights.

3 STRUCTURE AND CONTENT

The core of the Guide is structured around **19 key questions,** each addressing the most frequent practical challenges and issues faced by individuals and their legal representatives when submitting an individual constitutional application to the Constitutional Court of Armenia. These questions are designed to reflect the applicant's journey—from understanding the nature of the application to navigating procedural requirements and outcomes. They address topics such as:

1. **Eligibility and scope:** Who can apply and what issues fall within (or outside) the Court's jurisdiction.
2. **Legal and procedural requirements:** Procedural and substantive criteria, including time limits, exhaustion of all legal remedies, necessary references to legal norms, and supporting documentation.
3. **Application process:** Step-by-step guidance on submission, registration, preliminary review, and admissibility stages.
4. **Substantive evaluation:** What constitutes a well-founded application and how the Court evaluates admissibility on the merits.
5. **Post-submission Scenarios:** Grounds for rejection, the possibility of resubmission, and rules around withdrawal.

Each question is answered in **clear, plain language,** making the Guide accessible to a broad audience—including those without legal training. Legal terminology is carefully explained, and procedural steps are laid out in practical detail. The result is a user-friendly resource that balances legal accuracy with inclusivity, supporting wider access to constitutional justice in Armenia.

The Guide is written in a clear and accessible language, with the aim of making it useful for a broader audience, including individuals without formal legal training. The legal regulations on admissibility criteria, as well as the Constitutional Court's relevant case law, are presented in separate annexes. This structural approach allows natural persons, legal entities, and legal professionals to systematically study the Court's legal positions and, where appropriate, apply them effectively in practice.

To complement the main content, the Guide includes **six annexes** that offer hands-on tools and reference materials to assist with the preparation and submission of individual applications:

1. Excerpts from relevant legal acts – Key provisions from the Constitution, RA Constitutional law on the Constitutional Court and Procedural Rules of Constitutional Court governing individual applications.
2. Overview of Constitutional court case law – A summary of significant rulings that illustrate how the Court has interpreted admissibility criteria over time.
3. Preliminary self-assessment checklist – A practical tool to help applicants evaluate whether their submission meets basic admissibility standards before filing.
4. Model individual application form – A structured template outlining the necessary components and format of a complete application.
5. Power of attorney template – A sample document for use when an applicant is represented by another person.
6. Sample motion for exemption from state fee – For applicants seeking relief from payment obligations due to financial hardship.

These annexes serve as valuable resources for first-time applicants, legal aid providers, and practicing attorneys working in the fields of constitutional law and human rights, helping ensure that applications are both complete and compliant with legal requirements.

4 TARGET AUDIENCE AND USE

While the Guide is primarily intended to support individual applicants and their legal representatives in navigating the constitutional application process, its relevance extends to a broader audience. It is a useful resource for lawyers and legal consultants, civil society organizations, law students and researchers. In addition to its practical value for case preparation, the Guide can also be effectively integrated into training programs, academic courses, and public awareness campaigns aimed at enhancing constitutional literacy and promoting the right to constitutional justice in Armenia.

5 LIMITATIONS AND LEGAL DISCLAIMER

It is important to note that the Guide is informational in nature and does not constitute legal advice. The interpretations and recommendations it contains must be understood in the context of the facts of each individual case. The Constitutional Court retains full discretion in determining the admissibility of each application, and the examples or templates provided cannot by themselves guarantee acceptance into proceedings.

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՍԴ	Սահմանադրական դատարան
ՍԴՈ	Սահմանադրական դատարանի որոշում
ՍԴԱՈ	Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշում
ԱԴԴԿՈ	Սահմանադրական դատարանի դատական կազմի որոշում
ԲԴԽ	Բարձրագույն դատական խորհուրդ
ՍԴԱ	Սահմանադրական դատարանի աշխատակարգ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ԻՆՉ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԸ 6

2. Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ 7

3. ԻՆՉ ՀԱՐՑՈՎ ԿԱՐՈՂ ԵՔ ԴԻՄԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 9

4. ԻՆՉ ՀԱՐՑՈՎ ՉԵՔ ԿԱՐՈՂ ԴԻՄԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 13

5. Ո՞Ր ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ԴԻՄԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 16

6. ԻՆՉ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ԴԻՄԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 23

7. ԱՐԴՅՈ՞Ք ՊԵՏՔ Է ԴԻՄՈՒՄԸ ՊԱՐՈՒՆԱԿԻ ՀՍՏԱԿ ՀՂՈՒՄՆԵՐ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԱԿՏԻ ՆՈՐՄԵՐԻՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԵՐԻՆ 23

8. ԱՐԴՅՈ՞Ք ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԸ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՔՆՆՎԵԼ Է ՍԴ ԿՈՂՄԻՑ ԵՎ ԿԱՅԱՑՎԵԼ Է ՈՐՈՇՈՒՄ 24

9. ԱՐԴՅՈ՞Ք ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ Է ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԱՅԼ ԱՆՁԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ 25

10. ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 25

11. ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ 27

12. ԻՆՉՊԵ՞Ս ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԸ 28

13. ԻՆՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԵՏՔ Է ՆԵՐԱՌԵԼ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՈՒՄ 30

14. ԻՆՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՆ ԿՑՎՈՒՄ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻՆ 30

15. ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ԴԻՄՈՒՄԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ 33

16. ԻՆՉ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ ԴԻՄՈՒՄԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ 35

17. ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ 36

18. ԱՐԴՅՈ՞Ք ԿԱՐՈՂ Է ԴԻՄՈՂԸ ԿՐԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՄԵՐԺՎԱԾ ԴԻՄՈՒՄԸ 37

19. ԱՐԴՅՈ՞Ք ԿԱՐՈՂ Է ԴԻՄՈՂԸ ՍԴ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՄՈՒՄԸ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼ 38

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԼԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻՑ ՔԱՂՎԱԾՔՆԵՐ 39

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 57

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՏԻՊՕՐԻՆԱԿ 98

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԼԻԱԶՈՐԱԳՐԻ ՏԻՊՕՐԻՆԱԿ 102

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՏԻՊՕՐԻՆԱԿ 103

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ 104

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը մարդու իրավունքների պաշտպանության և սահմանադրական արդարադատության իրականացման կարևոր մեխանիզմ է: Այն անձինք, ովքեր գտնում են, որ իրենց նկատմամբ կիրառված իրավական նորմը չի համապատասխանում Սահմանադրությանը, կարող են դիմել ՀՀ սահմանադրական դատարան:

ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իրավունքը անհատների համար սահմանվել է 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում: Վերջին տարիներին (2018-2024թթ. ընթացքում) ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից Սահմանադրական դատարան է ներկայացվել 965 դիմում[1]: Սահմանադրական անհատական դիմումը ընդունվում է վարույթ միայն այն դեպքում, երբ պահպանված են օրենքով սահմանված բոլոր պահանջները:

Անհատական դիմումների ընդունելիության պրակտիկան ցույց է տալիս, որ Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումների շատ քիչ տոկոսն է հաղթահարում ընդունելիության չափանիշները և հասնում գործի ըստ էության քննության փուլ[2]: Անհատական դիմումների մերժման բարձր ցուցանիշը ցույց է տալիս, որ, ի թիվս այլոց, առկա է դիմումների ընդունելիության չափանիշների վերաբերյալ իրազեկվածության պակաս, հետևաբար անհրաժեշտ է պոտենցիալ դիմումատուներին տրամադրել համապարփակ տեղեկատվություն Սահմանադրական դատարան դիմելու ընթացակարգի և դիմումի ընդունելիության պահանջների վերաբերյալ:

Սահմանադրական անհատական դիմումների ընդունելիության չափանիշների վերաբերյալ սույն ուղեցույցը մշակվել է Եվրոպայի խորհրդի «Աջակցություն սահմանադրական արդարադատության զարգացմանը Հայաստանում ՝ եվրոպական չափանիշներին համապատասխան» ծրագրի շրջանակներում: Ուղեցույցի մշակման նպատակն է բարձրացնել սահմանադրական արդարադատության մատչելիությունն ու խթանել Սահմանադրական դատարանի գործունեության թափանցիկությունը,

1 Հիմք են ընդունվել Սահմանադրական դատարանի համապատասխան տարիների տարեկան հաղորդումներում առկա պաշտոնական տվյալները: Տարեկան հաղորդումները հասանելի են հետևյալ հղմամբ https://concourt.am/constitutional-court/annual-reports

2 Ըստ ՍԴ տարեկան հաղորդումներում ներկայացված պաշտոնական տվյալների՝ **2024 թ.** ՍԴ է մուտքագրվել **103** անհատական դիմում, որոնց հիման վրա նույն տարում ըստ էության քննվել և որոշում է կայացվել **5** գործով: **2023 թ.** մուտքագրվել է **123** դիմում, ըստ էության քննվել և որոշում է կայացվել **5** գործով , իսկ **2022 թ.** մուտքագրված **121** դիմումներից ըստ էության քննվել և որոշում է կայացվել **4** գործով:

ինչպես նաև պարզ կերպով ներկայացնել անհատական դիմումների ընդունելիության չափանիշները և ընթացակարգերը:

Ուղեցույցի մշակման իրավական հիմք են հանդիսացել ՀՀ սահմանադրության, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի, Սահմանադրական դատարանի աշխատակարգի իրավական կարգավորումները, անհատական դիմումի ընդունելիության չափանիշների վերաբերյալ Սահմանադրական դատարանի նախադեպային որոշումները, ինչպես նաև համապատասխան միջազգային փաստաթղթերը և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի փորձը:

Ուղեցույցը օգտակար կլինի դիմողների, փաստաբանների, ինչպես նաև Սահմանադրական դատարանում դիմողի շահերը ներկայացնող անձանց համար: Միաժամանակ, այն կարող է նաև օգտակար լինել իրավաբան-հետազոտողների, ուսանողների և մարդու իրավունքների սահմանադրական պաշտպանության հարցերով հետաքրքրված անձանց համար: Ուղեցույցը շարադրված է հասկանալի և մատչելի լեզվով , նպատակ ունենալով այն օգտակար դարձնել նաև հանրության ավելի լայն շրջանակների համար:

Ուղեցույցը ներկայացված է հարցադրումների տեսքով , ներառում է 19 հարց, որոնք վերաբերում են Սահմանադրական դատարան դիմելու իրավասությանը, դիմումի առարկային, դատական պաշտպանության միջոցների սպառման, դիմումի հիմնավորման պահանջներին և այլ ընդունելիության չափանիշներին, ինչպես նաև Սահմանադրական դատարան դիմելու ընթացակարգային կանոններին: Հարցադրումներն ուղեկցվում են գործնական օրինակներով և կիրառական բնույթի խորհուրդներով:

Ուղեցույցն առանձին հավելվածներով ներկայացնում է անհատական դիմումների ընդունելիության չափանիշների վերաբերյալ իրավակարգավորումները (Հավելված 1), ինչպես նաև Սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքը անհատական դիմումների ընդունելիության վերաբերյալ (Հավելված 2): Այս մոտեցումը հնարավորություն կտա փաստաբաններին և իրավաբան-մասնագետներին ուսումնասիրելու ՍԴ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները առավել համակարգված, և ըստ անհրաժեշտության օգտագործել դրանք իրենց պրակտիկայում: Ուղեցույցին կից ներկայացված են նաև անհատական դիմումների ընդունելիության չափանիշների պահպանման նախնական գնահատման ստուգաթերթ, դիմումի, լիազորագրի և միջնորդության օրինակելի ձևանմուշներ:

Ուղեցույցը կրում է **բացառապես տեղեկատվական բնույթ**, և դրանում ներկայացված մեկնաբանություններն ու օգտագործված հղումները պետք է դիտարկվեն և մեկնաբանվեն՝ **ելնելով յուրաքանչյուր կոնկրետ գործի առանձնահատկություններից:** Անհատական դիմումի ընդունելիության հարցը ենթակա է Սահմանադրական դատարանի կողմից հատուկ իրավական գնահատման՝ հիմք ընդունելով դրա փաստական և իրավական հանգամանքները, **հետևաբար ուղեցույցում առկա հղումներն ու օրինակները չեն կարող ինքնին կանխորոշել կամ երաշխավորել Սահմանադրական դատարանի կողմից դիմումի ընդունումը վարույթ:**

1 ԻՆՉ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԸ

Սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատության իրականացման միջոցով երաշխավորում է բոլոր նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը և կյանքի է կոչում Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժ ունենալու սահմանադրական սկզբունքը:

Սահմանադրական արդարադատությունն իրականացվում է բացառապես համապատասխան դիմումների հիման վրա: Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումների շարքում հատուկ տեղ են զբաղեցնում սահմանադրական անհատական դիմումները (այսուհետ՝ անհատական դիմում), քանի որ դրանց միջոցով յուրաքանչյուր ոք հնարավորություն է ստանում ստուգելու իր նկատմամբ կիրառված նորմի համապատասխանությունը Սահմանադրությանը:

Անհատական դիմումը ոչ միայն հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ գործիք է, այլև ազգային մակարդակում մարդու իրավունքների պաշտպանության խթանման միջոց, ինչը նպաստում է Սահմանադրության դրույթների անմիջական գործողության և Սահմանադրության գերակայության ապահովմանը:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ



Սահմանադրական դատարան դիմելը չի կասեցնում արդեն կայացված դատական ակտի կիրառումը. այն շարունակում է մնալ ուժի մեջ:



Եթե Սահմանադրական դատարանը հակասահմանադրական ճանաչի այն նորմը, որը Դուք վիճարկում եք, ապա ՍԴ այդ որոշումը Ձեր գործի վերանայման հիմք է:



Դատարանում Ձեր գործի քննության ընթացքում կարող եք միջնորդել, որպեսզի դատարանը դիմի Սահմանադրական դատարան՝ ստուգելու Ձեր գործով կիրառման ենթակա նորմի Սահմանադրությանը համապատասխանելու հարցը:

2 Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ

Սահմանադրական դատարան անհատական դիմում կարող են ներկայացնել ինչպես **ֆիզիկական անձինք**, այնպես էլ **իրավաբանական անձինք**: Սահմանադրական նորմերը ամրագրում են մի շարք պայմաններ, որոնց բավարարման դեպքում միայն դիմողները կարող են դիմել Սահմանադրական դատարան[3]:

Եթե Դուք անհատ (ֆիզիկական անձ) եք կամ կազմակերպություն (իրավաբանական անձ[4]), ապա կարող եք դիմել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ՝

- Առկա է **կոնկրետ գործ,**
- Ձեր նկատմամբ այդ գործով **կիրառվել է նորմատիվ իրավական ակտի** (օրենք, ենթաօրենսդրական ակտ) նորմ,
- Կիրառված նորմը, ըստ Ձեզ, **հակասում է Սահմանադրությամբ ամրագրված Ձեր հիմնական իրավունքներին և ազատություններին,**
- Դատական գործով վերջնական ակտն արդեն կայացված է,
- Դուք սպառել եք դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Օրինակ՝ *Վճռաբեկ դատարանը Ձեր նկատմամբ կիրառել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նորմ, որը, ըստ Ձեզ, խախտում է Ձեր արդար դատաքննության իրավունքը: Այդ դեպքում կարող եք դիմել Սահմանադրական դատարան՝ ստուգելու նորմի համապատասխանությունը Սահմանադրությանը:*

ԻՆՉՈ՞Վ ԵՆ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ֆիզիկական և իրավաբանական անձանց համար Սահմանադրական դատարան դիմելու պայմանների տարբերությունն այն է, որ անհատները կարող են հղում անել Սահմանադրության 2-րդ գլխով սահմանված **բոլոր հիմնական իրավունքներին ու ազատություններին**, իսկ կազմակերպությունները՝ նույն գլխով սահմանված **միայն այն իրավունքներին ու ազատություններին, որոնք իրենց էությամբ կիրառելի են իրավաբանական անձանց նկատմամբ**[5]:

3 ՀՀ սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 69

4 Սահմանադրության 74-րդ հոդվածի իմաստով «իրավաբանական անձ» հասկացությունը եւ դրա տեսակները սահմանված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով (հոդված 50 եւ 51)

5 Սահմանադրության 74-րդ հոդված, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մաս, 69 հոդված

Ո՞Ր ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ ԿԻՐԱՌԵԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Կազմակերպությունները (իրավաբանական անձինք) կարող են օգտվել միայն այն հիմնական իրավունքներից ու ազատություններից, որոնք իրենց բնույթով **վերաբերում են ոչ միայն մարդկանց, այլ նաև կազմակերպություններին:** Եթե իրավունքը կապված է միայն մարդու՝ **մարմնական կամ հոգևոր էակ** լինելու փաստի հետ, ապա այն չի կարող վերաբերել կազմակերպությանը:

Կիրառելի են

- Սեփականության իրավունքը
- Դատարանի մատչելիության իրավունքը
- Արդար դատաքննության իրավունքը
- և այլն

Կիրառելի չեն

- Կյանքի իրավունքը
- Ֆիզիկական և հոգևոր անձեռնմխելիության իրավունքը
- խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը
- ամուսնանալու ազատությունը
- և այլն

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

Նոտարը, որպես հանրային իրավական սուբյեկտ, իր հանրային գործառույթների կատարման ընթացքում առաջացած հարցերով չի կարող անհատական դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան[6]:

Անհատական դիմում կարող եք ներկայացնել միայն այն դեպքում, երբ հենց Դուք եք հիմնական իրավունքի կրողը, կամ առնվազն ունեք իրավունքի ձեռքբերման հիմնավոր ակնկալիքներ:

6 2023 թ. հուլիսի 7, ՍԴԱՈ-80

Օրինակ՝ *ՍԴ պրակտիկայից (պարզեցված)՝*
Դիմողը վիճարկել էր իրավական նորմ՝ պնդելով, որ այն խախտել է իր սեփականության իրավունքը՝ կապված գրավադրված բնակարանի հետ: Սակայն, ՍԴ-ը գտել է, որ դիմողը գույքի սեփականատերը չէր, այլ պարտատեր էր, այսինքն՝ անձ, ում պետք է վերադարձվեին դրամական միջոցներ, որոնց ապահովման միջոցը գրավադրված բնակարանն էր: Սահմանադրական դատարանը մերժել է դիմումի ընդունումը՝ պարզաբանելով, որ վիճարկվող նորմով իրավունքի խախտման հարց կարող է առաջադրել այն անձը, ով այդ իրավունքի իրական կրողն է կամ ունի դրա նկատմամբ օրինական ակնկալիք[7]:

3 ԻՆՉ ՀԱՐՑՈՎ ԿԱՐՈՂ ԵՔ ԴԻՄԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Անհատական դիմում ներկայացնելուց առաջ կարևոր է հասկանալ, թե ի՞նչ հարցով կարող եք դիմել Սահմանադրական դատարան: Այս հարցին պատասխանելու համար պետք է պարզել, թե **Սահմանադրական դատարանը ո՞ր հարցերով կարող է գործ քննել անհատական դիմումի հիման վրա**, և ո՞ր հարցերն են նրա իրավասության շրջանակից դուրս:

Սահմանադրական դատարանում վիճարկել կարող եք միայն նորմատիվ իրավական ակտը կամ դրա կոնկրետ նորմը, որը՝

- կիրառվել է Ձեր գործով, և
- հանգեցրել է Ձեր սահմանադրական իրավունքների խախտմանը:

Նորմատիվ իրավական ակտը[8] **օրենքն է կամ ենթաօրենսդրական ակտը** *(օրինակ՝ կառավարության որոշում, նախարարի հրաման և այլն)*, որը՝

- *ընդունվել է սահմանված կարգով,*
- *հրապարակվել է,*
- *և պարունակում է պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար*[9]:

7 2020թ. դեկտեմբերի 29, ՍԴԱՈ-244

8 Նորմատիվ իրավական ակտը իրենից ներկայացնում է «Հայաստանի Հանրապետության ժողովրդի, ինչպես նաեւ Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ընդունած գրավոր իրավական ակտ, որը պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար (Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենք, հոդված 2,մաս 1, կետ 1)

9 2020թ. մայիսի 7, ՍԴԴԿՈ-25

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ՝



Եթե իրավական նորմը փոփոխվել է Ձեր նկատմամբ կիրառվելուց հետո, ապա դուք կարող եք վիճարկել այն միայն այն խմբագրությամբ, որը առկա է եղել Ձեր նկատմամբ կիրառվելու պահին[10]:



Եթե իրավական նորմը իր ուժը կորցրել է Ձեր նկատմամբ կիրառվելուց հետո, ապա դուք կարող եք վիճարկել այն, քանի որ կիրառվել է Ձեր նկատմամբ և Ձեզ համար իրավական հետևանքներ է առաջացրել[11]:

ՆՈՐՄԻ ՎԻՃԱՐԿՈՒՄԸ՝ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ԴՐԱՆ ՏՐՎԱԾ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

Իրավական նորմի Սահմանադրությանը համապատասխանությունը պայմանավորված է ոչ միայն նրանով , թե ինչպես է այն շարադրված իրավական ակտում, այլեւ նրանով , թե ինչպես է այն ընկալվում ու կիրառվում իրավակիրառ պրակտիկայում[12]: Եթե նորմն ինքնին չի հակասում Սահմանադրությանը, սակայն դատարանների **մեկնաբանության արդյունքում այն կիրառվել է այնպիսի բովանդակությամբ, որը խախտել է Ձեր հիմնական իրավունքը կամ ազատությունը**, ապա կարող եք վիճարկել նորմը՝ հաշվի առնելով այդ **մեկնաբանությամբ ձևավորված պրակտիկան:**

Այս դեպքում անհատական դիմումում պետք է՝

- **հստակ մատնանշեք**, թե իրավակիրառ պրակտիկայում ինչպես է մեկնաբանվել վիճարկվող նորմը,
- **հիմնավորեք**, թե այդ մեկնաբանությունն ինչպես է հանգեցրել Ձեր սահմանա-դրական իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման կամ խախտման,
- **ցույց տաք** մեկնաբանության և խախտված սահմանադրական իրավունքի միջև **պատճառահետևանքային կապը**[13]:

10 2009թ. հուլիսի 21, ՍԴՈ-817

11 «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 29

12 2011թ. հուլիսի 15, ՍԴՈ-984

13 2022թ. հունվարի 20, ՍԴԱՈ-14

Օրինակ՝ *ՍԴ պրակտիկայից (պարզեցված)*[14]

*Դիմողը վիճարկել է ՀՀ դատական օրենսգրքի այն դրույթը, որը վերաբերում է ԲԴԽ որոշումների կայացման կարգին: Այդ դրույթի համաձայն՝ որոշումները պետք է ընդունվեն նիստին **մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ**: Սակայն, իրավակիրառ պրակտիկայում այդ դրույթը ԲԴԽ կողմից մեկնաբանվել և կիրառվել է այնպես, որ որոշումների ընդունման ժամանակ **հաշվի չեն առնվում նիստին ներկա, բայց քվեարկությանը չմասնակցած անդամների ձայները**: Նիստին մասնակցել են 10 անդամ, սակայն քվեարկությանը մասնակցել է 8 անդամ և որոշումն ընդունվել է միայն 5 ձայնով:*

Ըստ դիմողի ՀՀ դատական օրենսգրքի տվյալ նորմը՝ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ հակասում է Սահմանադրության 61-րդ (դատական պաշտպանության իրավունք) և 63-րդ (արդար դատաքննության իրավունք) հոդվածներին:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՑԻ (ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲԱՑԻ) ՎԻՃԱՐԿՈՒՄԸ

Դուք կարող եք դիմել Սահմանադրական դատարան նաև այն դեպքերում, երբ Ձեր գործով կիրառված իրավակարգավորումը **թերի է կամ ոչ լիարժեք**, ինչի հետևանքով խախտվել է Ձեր սահմանադրական իրավունքը կամ ազատությունը (այսինքն՝ առկա է **օրենսդրական բաց** կամ **իրավունքի բաց**):

Սահմանադրական դատարանի դիրքորոշումների[15] համաձայն, օրենսդրական բացը կարող է դառնալ քննարկման առարկա այն դեպքում, երբ.

- այն **իրավակարգավորման թերություն է,** այլ ոչ թե օրենսդրի ընտրություն՝ այդ հարաբերությունը չկարգավորելու հարցում,
- այն **հնարավոր չէ հաղթահարել** արդեն գոյություն ունեցող իրավական նորմերի մեկնաբանման կամ կիրառման միջոցով,
- դրա հետևանքով առաջացել է **իրավական անորոշություն կամ հակասական իրավակիրառ պրակտիկա,** որը փաստացի **չի հաղթահարվել** ընդհանուր իրավասության դատարանների կողմից,
- և արդյունքում խախտվել կամ սահմանափակվել է Սահմանադրության 2-րդ գլխով սահմանված Ձեր **կոնկրետ իրավունքը:**

14 2025թ. ապրիլի 22, ՍԴՈ-1780

15 2010թ. փետրվարի 5, ՍԴՈ-864, 2019թ. սեպտեմբերի 4, ՍԴՈ-1476

Օրինակ՝ *ՍԴ պրակտիկայից[16] (պարզեցված)*
Դիմողը վիճարկել է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի նորմը, որը չի նախատեսում արդյունավետ կառուցակարգ անձանց գույքային իրավունքների պաշտպանության և նոտարի գործողությունների հետևանքով կրած վնասի վերականգնման համար: Սահմանադրական դատարանը գտել է, որ վիճարկվող նորմը հակասում է ՀՀ սահմանադրությանը, քանի որ չի երաշխավորում նոտարի կողմից ՀՀ անունից իրականացված գործողության հետևանքով պատճառված վնասի իրավաչափ հատուցումը և անձի սահմանադրական իրավունքների երաշխավորված պաշտպանությունը:

Օրինակ՝ *ՍԴ պրակտիկայից[17] (պարզեցված)*
Դիմողը վիճարկել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի գլուխը, որը չի նախատեսում ընթացակարգեր բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու վերաբերյալ կառավարության որոշումը վիճարկելու համար: Սահմանադրական դատարանը մերժել է դիմումը վարույթ ընդունել, քանի որ գտել է, որ երբ հարցը կարգավորող նորմը ընդհանրապես բացակայում է, ապա նման օրենքի բացը պետք է հաղթահարվի Ազգային ժողովի կողմից:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԱՐՑԸ

Դուք կարող եք դիմել Սահմանադրական դատարան այն դեպքում, երբ ցանկանում եք, որ ՍԴ-ը վերանայի **իր նախկին որոշումը**, եթե՝ (ա) այդ որոշմամբ կիրառված սահմանադրական նորմը հետագայում **փոփոխվել է**, կամ (բ) այդ նորմի վերաբերյալ առկա է այնպիսի **նոր իրավական ընկալում**, որը կարող է հանգեցնել **այլ որոշման** և հարցը ունի **սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն**[18]:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ



Սահմանադրական դատարանը կարող է վերանայել **միայն իր այն որոշումները**, որոնցով վիճարկվող նորմը ճանաչվել է **Սահմանադրությանը համապատասխանող**, այդ թվում ՝ ՍԴ կողմից տրված մեկնաբանությամբ:

16 2016թ. մայիսի 10, ՍԴՈ-1271

17 2016թ. հոկտեմբերի 31, ՍԴԴԿՈ/1-32

18 «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 68, մաս 16

4 ԻՆՉ ՀԱՐՑՈՎ ՉԵՔ ԿԱՐՈՂ ԴԻՄԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Սահմանադրական դատարանը քննում է միայն այնպիսի անհատական դիմումներ, որոնք վերաբերում են **նորմատիվ իրավական ակտերի կամ դրանց դրույթների սահմանադրականությանը**: Սահմանադրական դատարանը **չի կատարում վերադաս ատյանի դեր, չի հանդիսանում չորրորդ ատյան** և չի կարող քննել իր իրավասությունից դուրս գտնվող հարցեր:

Սահմանադրական դատարան չեք կարող դիմել հետևյալ հարցերով՝

1. Անհատական իրավական ակտի վիճարկում

Սահմանադրական դատարանում չեք կարող վիճարկել այն իրավական ակտը, որը՝

- վերաբերում է կոնկրետ անձին կամ անձանց,
- ժամանակավոր կամ մեկանգամյա բնույթ ունի,
- և չի պարունակում նորմատիվ (ընդհանրական) կարգավորումներ[19]:

Այսպիսի ակտերը նորմատիվ իրավական ակտ չեն համարվում և, հետևաբար, **չեն կարող** քննության առնվել Սահմանադրական դատարանի կողմից:

Օրինակ՝ *աշխատանքից հեռացման կամ կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ հրամանները[20], որոնք վերաբերվում են միայն Ձեզ , **անհատական իրավական ակտ են**, ոչ թե նորմատիվ, և դուրս են ՍԴ իրավասության շրջանակից:*

2. Դատական ակտերի վիճարկում

Սահմանադրական դատարանը **չի հանդիսանում վերաքննիչ կամ չորրորդ ատյան** այլ դատարանների համար: Այն՝

- չի գնահատում կոնկրետ գործի փաստական և/կամ իրավական հանգամանքները,
- չի վերանայում դատարանների կայացրած ակտերը,
- չի քննում՝ արդյոք գործով ընդունված որոշումները օրինական են կամ արդար[21]:

19 2020թ. փետրվարի 7, ՍԴԿՈ-5

20 2025թ. հունիսի 26, ՍԴԿՈ-30

21 2022 թ. հուլիսի 12, ՍԴԱՈ-126

Եթե Դուք համաձայն չեք Ձեր գործով դատարանի կայացրած որոշման հետ, ապա այն կարող եք բողոքարկել միայն վերադաս դատարանում (եթե այդպիսին առկա է), սակայն ոչ **Սահմանադրական դատարանում**:

Օրինակ՝ *Դուք հայց եք ներկայացրել դատարան՝ պահանջելով պատասխանողից վերադարձնել Ձեր պարտքը: Դատարանը, ուսումնասիրելով փաստերն ու ապացույցները, որոշել է, որ Դուք չեք կարողացել ապացուցել պարտքի առկայությունը, և մերժել է հայցը: **Դուք չեք կարող դիմել Սահմանադրական դատարան՝** պատճառաբանելով, թե դատարանն անարդար որոշում է կայացրել կամ ապացույցները ճիշտ չի գնահատել:*

3. Նորմի կիրառման իրավաչափության հարցի առաջադրում

Դուք ***չեք կարող դիմել Սահմանադրական դատարան,*** եթե Ձեր դիմումը փաստացի վերաբերվում է ոչ թե նորմատիվ ակտի սահմանադրականությանը, այլ այն հարցին՝ թե ***արդյոք դատարանը նորմը ճիշտ և արդարացի է կիրառել Ձեր գործով թե ոչ (կիրառման իրավաչափություն):***

Այսինքն՝ եթե Դուք ձևականորեն վիճարկում եք նորմատիվ ակտի նորմի սահմանադրականությունը, բայց իրականում գտնում եք, որ այն սխալ է կիրառվել Ձեր գործով, ապա Սահմանադրական դատարանը նման դիմումը ***չի քննի,*** քանի որ դա դուրս է նրա իրավասության շրջանակից[22]:

Օրինակ՝ *Դիմողը վիճարկում է ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածի սահմանադրականությունը՝ պնդելով, որ այն հանգեցրել է իր ազատությունից զրկման: Սակայն իր դիմումում նա փաստացի վիճարկում է ոչ թե այդ հոդվածի անհամապատասխանությունը Սահմանադրությանը, այլ այն, **թե արդյոք դատարանն իրավաչա՞փ է կիրառել այդ հոդվածը՝** հաշվի չառնելով իր անմեղ լինելու ապացույցները:*

22 2022 թ. հուլիսի 12, ՍԴԱՈ-126

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ



Սահմանադրական դատարանը չի կարող քննել այն հարցը, թե արդյոք դատարանները Ձեր գործով նորմը ճիշտ են կիրառել թե ոչ:



4. Նորմի մեկնաբանության պահանջի առաջադրում[23]

Սահմանադրական դատարանը **չունի Սահմանադրության, օրենքների կամ այլ նորմատիվ իրավական ակտերի նորմերի բովանդակության մեկնաբանության <u>առանձին իրավասություն</u>**: Այն մեկնաբանում է իրավական նորմերը նորմատիվ ակտերի սահմանադրականության վերաբերյալ գործեր քննելու իր լիազորությունն իրականացնելիս: Հետևաբար, Ձեր դիմումում **<u>չեք կարող ուղղակիորեն պահանջել</u>** Սահմանադրական դատարանից՝ մեկնաբանել այս կամ այն կոնկրետ նորմը:

Եթե Ձեր դիմումում պահանջեք մեկնաբանել այս կամ այն նորմը, պարզել՝ կոնկրետ հասկացությունը ինչ է նշանակում, ապա նման հարցերը կհամարվեն Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից դուրս և կմերժվեն:



5. Առարկայազուրկ դատական ակտով կիրառված նորմի վիճարկում

Սահմանադրական դատարանը չի քննում այն գործերը, երբ դատական ակտը, որով կիրառվել է նորմը, **այլևս ազդեցություն չունի դիմողի նկատմամբ**: Սահմանադրական դատարանը քննում է միայն այն դիմումները, երբ վիճարկվող նորմը **իրական, գործնական ազդեցություն ունի դիմողի սահմանադրական իրավունքի վրա**: Եթե խնդիրը արդեն լուծված է կամ վիճարկվող նորմը կիրառած դատական ակտի հետևանքներն այլևս առկա չեն, ապա Սահմանադրական դատարանը դիմումը կմերժի որպես **առարկայազուրկ դիմում**:

23 2021թ. փետրվարի 26, ՍԴԱՈ-38

Օրինակ՝ *ՍԴ պրակտիկայից (պարզեցված)*[24]

*Դիմողը Սահմանադրական դատարան է դիմել և վիճարկել այն նորմի համապատասխանությունը Սահմանադրությանը, որն իր նկատմամբ կիրառվել է կալանք կիրառելու վերաբերյալ դատարանի որոշմամբ: Սակայն, Սահմանադրական դատարան դիմելու պահին դիմողի նկատմամբ արդեն իսկ կիրառվել էր գրավը որպես խափանման միջոց: Դիմողը իր հիմնավորումներում հղում է կատարել կալանքի կիրառման վերաբերյալ դատական ակտերին, որոնք գործնականում արդեն ազդեցություն չուներ դիմողի վրա: Սահմանադրական դատարանը գտել է, որ դիմումը **առարկայազուրկ է** և **ենթակա է մերժման:***

5 Ո՞Ր ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ԴԻՄԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ինչպես արդեն նշվել է, Սահմանադրական դատարան դիմելու համար Դուք պետք է **միաժամանակ համապատասխանեք** մի շարք կարևոր պահանջների[25]: **Դուք պետք է հավաստիանաք, որ.**

- Եղել եք դատավարության մասնակից՝ **կոնկրետ գործով** ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանում,
- Ձեր նկատմամբ **կիրառվել է վիճարկվող նորմատիվ ակտի դրույթը,**
- Այդ դրույթը **կիրառվել է գործի վերաբերյալ վերջնական դատական ակտով,**
- Վիճարկվող նորմը **հանգեցրել է հիմնական իրավունքների և ազատությունների խախտմանը,**
- **Դուք սպառել եք դատական պաշտպանության բոլոր միջոցները:**

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

Եթե նշված պահանջներից **որևէ մեկը չի պահպանվում,** ապա Սահմանադրական դատարանը կմերժի Ձեր դիմումը:

24 2019թ. հունիսի 21, ՍԴՈՐ- 63

25 ՀՀ սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մաս

5.1. Ի՞նչ է նշանակում «լինել դատավարության մասնակից կոնկրետ գործով»

Դուք կարող եք դիմել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, **երբ հանդիսացել եք կոնկրետ գործով դատավարության մասնակից** (օրինակ՝ հայցվոր, պատասխանող , մեղադրյալ և այլն) և **այդ գործով վերջնական ակտը կայացվել է հենց Ձեր նկատմամբ**[26]:

Սահմանադրական դատարանը **«կոնկրետ գործ»** հասկացությունը մեկնաբանել է որպես **դատավարական գործընթաց, որն սկսվում է այն պահից, երբ դատավորն ընդունում է գործը վարույթ և ավարտվում է համապատասխան դատական որոշման կայացմամբ**[27]:



Օրինակ՝ *Եթե Դուք դիմել եք վարչական դատարան, վիճարկել եք հարկային մարմնի վարչական ակտը, այդ գործը քննվել է դատարանում և դրա վերաբերյալ կայացվել է դատական ակտ,* ***ապա այս գործը համարվում է «կոնկրետ գործ»:***

Եթե Դուք դիմել եք դատարան որևէ հարցով և դատարանը Ձեր դիմումը չի ընդունել վարույթ, ***ապա դա «կոնկրետ գործ» չի համարվում:***

5.2. Ի՞նչ է նշանակում «վիճարկվող նորմատիվ ակտի դրույթի կիրառում»

Սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ վիճարկվող նորմատիվ ակտի դրույթը համարվում է **«կիրառված»**, եթե այն դատական գործընթացի արդյունքում **դիմողի համար առաջացրել է իրավական հետևանքներ**[28]: Նորմատիվ իրավական ակտի դրույթի կիրառումն առկա է միայն այն ժամանակ, երբ **դատարանը, հիմնվելով վիճարկվող դրույթի վրա, կայացրել է անձի իրավունքներին առնչվող վերջնական դատական ակտ**[29]:



Օրինակ՝ *Եթե Դուք դատապարտվել եք ազատազրկման ՀՀ քրեական օրենսգրքի 161 հոդվածով, և վիճարկում եք այդ հոդվածը Սահմանադրական դատարանում, ապա* ***վիճարկվող նորմը կհամարվի Ձեր նկատմամբ «կիրառված»****, քանի որ հանգեցրել է անձնական ազատությունից զրկման:*

26 2015թ. դեկտեմբերի 7, ՍԴԴԿՈ-2/22

27 25 հունիսի 2021թ. ՍԴԱՈ-123

28 2008թ. ապրիլի 4, ՍԴՈ-747

29 2020թ. մարտի 23, ՍԴԴԿՈ-15

*Եթե Դուք վարչական դատարանում վիճարկել եք Կառավարության որոշման դրույթի՝ օրենքին համապատասխանությունը, և այնուհետև նույն դրույթը վիճարկում եք Սահմանադրական դատարանում, ապա դա **չի կարող համարվել դրույթի կիրառում**, քանի որ վարչական դատարանը ոչ թե կիրառել է այդ նորմը դիմողի նկատմամբ, այլ քննել է դրա՝ օրենքին համապատասխանելու հարցը[30]:*

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ



Նորմի **ցանկացած վկայակոչում դատական ակտում դեռ չի նշանակում, որ այն կիրառվել է Ձեր նկատմամբ:** Այն դեպքում, երբ դատական ակտը հղում է կատարում որևէ նորմի միայն ծանուցման կամ դատարանի գործողությունների օրինականությունը ցույց տալու նպատակով , ապա դա չի կարող դիտարկվել որպես նորմի «կիրառում»[31]:



Օրինակ՝ *Եթե դատական ակտում նշված է՝ «Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը ՈՐՈՇԵՑ…», ապա վկայակոչված նորմերը չեն համարվինորմի «կիրառում»:*

«Օրենքի դրույթը» համարվում է կիրառված նաև այն դեպքում, **երբ դատական ակտը դրան հղում չի կատարում, սակայն դատական ակտերից ակնհայտ է, որ փաստացի կիրառվել է հենց այդ նորմը** և այն իրավական հետևանքներ է առաջացրել դիմողի համար[32]:



Օրինակ՝ *Դատարանը որոշման մեջ չի նշել, որ կալանքը կիրառվում է ՀՀ քրեական օրենսգրքի կոնկրետ հոդվածով, սակայն այն **փաստացի կիրառվել է և իրավական հետևանք է առաջացրել դիմողի համար:***

30 2020թ. մարտի 23, ՍԴԴԿՈ-15

31 2008թ. ապրիլի 4, ՍԴՈ-747

32 2017թ. ապրիլի 4, ՍԴԴԿՈ/1-7, 2019թ. սեպտեմբերի 4, ՍԴՈ-1476, 2021թ. հունվարի 27, ՍԴՈ-1573

Եթե դատարանը կիրառել է ենթաօրենսդրական ակտի նորմ, որի ընդունման իրավական հիմքը օրենքի դրույթն է, ապա օրենքի դրույթը չի համարվում «կիրառված» նորմ[33]:

Օրինակ՝ *Դատարանը կիրառել է Կառավարության որոշման նորմը, իր որոշման մեջ հղում կատարելով նաև այդ նորմի ընդունման իրավական հիմք հանդիսացող օրենքի դրույթին: Սահմանադրական դատարանում այդ օրենքի նորմի վիճարկումը հնարավոր չէ, քանի որ Կառավարության նորմի կիրառումը դեռևս չի նշանակում նաև այդ օրենքի նորմի կիրառում:*

5.3. Ի՞նչ է նշանակում «վերջնական դատական ակտով» նորմի կիրառում

Սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ **«դատարանի վերջնական ակտ»**-ը այն ակտն է, որով ավարտվում է գործի դատաքննությունը, և որը ենթակա չէ բողոքարկման[34]:

Վերջնական դատական ակտ[35] կարող է լինել՝

Գործն ըստ էության լուծող՝

- Առաջին ատյանի դատական ակտը, որը բողոքարկման ենթակա չէ
- Վերաքննիչ դատարանի դատական ակտը, որը բողոքարկման ենթակա չէ
- Վճռաբեկ դատարանի դատական ակտը
- Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարան[36] կայացրած որոշումը[37]

Գործն ըստ էության չլուծող՝

- Անմիջականորեն բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտը *(օրինակ՝ հայցադիմումի ընդունումը մերժելու, հայցադիմումը վերադարձնելու, հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու, գործի վարույթը կասեցնելու մասին որոշումները)[38]*, որով կիրառվել է վիճարկվող նորմը, և որը բողոքարկվել է սահմանված կարգով[39]:

33 2013թ. մայիսի 7, ՍԴՈ-1092

34 ՍԴԱՈ-77, 2015թ. դեկտեմբերի 4

35 2008թ. սեպտեմբերի 9, ՍԴՈ-758

36 2025թ. ապրիլի 22, ՍԴՈ-1780

37 Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու վերաբերյալ որոշումները

(ՀՀ դատական օրենսգիրք, հոդված 90):

38 2010թ. 2 նոյեմբերի, ՍԴՈ-922

39 2019թ. ապրիլի 16, ՍԴՈ-1453

- Հետաձգված բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտը, որով կիրառվել է վիճարկվող նորմը և որը բողոքարկվել է գործն ըստ էության լուծող դատական ակտի շրջանակներում:

Վերջնական դատական ակտ չեն կարող լինել՝

- Դատավարության ընթացքում կայացված արձանագրային այն որոշումները, որոնց հիման վրա չի ավարտվում դատաքննությունը[40]:
- Սահմանադրական դատարանի որոշումը (ներառյալ գործի վարույթը կարճելու ՍԴ աշխատակարգային որոշումը), որով հենց Սահմանադրական դատարանն է կիրառել որևէ նորմ, չի համարվում «վերջնական դատական ակտով նորմի կիրառում»[41]:
- ԲԴԽ որոշումը դատավորների պաշտոնների թափուր տեղեր առաջանալու փաստն արձանագրելու վերաբերյալ[42]:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ



Պարտադիր չէ, որ վերջնական դատական ակտով կիրառված դրույթը կիրառված լինի նաև առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում. նորմի սահմանադրականությունը Սահմանադրական դատարանում վիճարկելու համար բավական է միայն այդ դրույթի կիրառումը վերջնական դատական ակտով[43]:

5.4. Ի՞նչ է նշանակում «հիմնական իրավունքների ու ազատությունների խախտման» պայմանը

Սահմանադրական դատարան դիմելու պայմաններից մեկն այն է, որ **Ձեր նկատմամբ կիրառված նորմը հանգեցրած լինի Ձեր որևէ հիմնական իրավունքի կամ ազատության խախտման:** Սա նշանակում է, որ՝

- Դուք կարող եք վիճարկել **միայն այն նորմը, որը, ըստ Ձեզ, խախտել է Սահմանադրության 2-րդ գլխում սահմանված այս կամ այն իրավունքը կամ ազատությունը** (օրինակ՝ խոսքի ազատությունը, սեփականության իրավունքը, արդար դատաքննության իրավունքը և այլն):

40 ՍԴԱՈ-77, 2015թ. դեկտեմբերի 4

41 2009թ. մարտի 17, ՍԴԱՈ-21, 2025թ. հուլիսի 29, ՍԴԴԿՈ-37

42 2023թ. մայիսի 16, ՍԴԱՈ-47

43 2008թ. սեպտեմբերի 9, ՍԴՈ-758

Օրինակ՝ *ՍԴ պրակտիկայից (պարզեցված)*
Դիմողը վիճարկվող նորմի հակասահմանադրականությունը հիմնավորելու համար հղում է կատարել Սահմանադրության 1-ին և 10-րդ հոդվածներին, որոնք ներառված են Սահմանադրության 1-ին գլխում[44]: ՍԴ-ը դիմումի ընդունումը մերժել է:

- Սահմանադրության 3-րդ գլխով սահմանված սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքները խախտող նորմերը չեն կարող վիճարկվել Սահմանադրական դատարանում[45]:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ



Դիմողը պետք է բարձրացնի իր **անհատական շահերի պաշտպանության խնդիրը** և ցույց տա, որ վիճարկվող նորմը **խախտել է հենց իր սուբյեկտիվ իրավունքը[46]:**

Եթե հանրային-իրավական վեճը սպառվել է, ապա վիճարկվող նորմի Սահմանադրությանը համապատասխանության հարցի քննարկումը չի կարող գործնական հետևանքներ ունենալ կոնկրետ գործի լուծման համար[47]:

Օրինակ՝ *ՍԴ պրակտիկայից[48] (պարզեցված)*
Իսպանական կազմակերպությունը Սահմանադրական դատարան էր դիմել՝ վիճարկելով, որ իր նկատմամբ ՀՀ-ում կիրառվել է սնանկության հարցերը կարգավորող նորմ, որը, իր կարծիքով , հակասում է ՀՀ սահմանադրությանը: Գործի քննության ընթացքում պարզվել է, որ այդ ընկերությունը արդեն իսկ սնանկ է ճանաչվել Իսպանիայի դատարանի կողմից, և այդ հիմքով ՀՀ դատարանը կարճել է սնանկության վարույթը: Սահմանադրական դատարանը մերժել է դիմումով գործի քննությունը, համարելով, որ գործը ավարտվելէ ՍԴ դիմելուց առաջ և հարցի քննարկումը գործի վրա որևէ գործնական ազդեցություն չի կարող ունենալ:

44 2022թ. դեկտեմբերի 9, ՍԴԿՈ-70

45 ՀՀ սահմանադրական դատարանում Սահմանադրության 3-րդ գլխում ամրագրված սոցիալ-տնտեսական իրավունքների վերաբերյալ նորմերի վիճարկման վերաբերյալ իր մտահոգությունն է հայտնել նաև Վենետիկի հանձնաժողովը. Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-7-րդ և 10-րդ գլուխների վերաբերյալ նախնական կարծիք, Վենետիկի հանձնաժողով , Կարծիք No. 757/2014, կետ 64, https://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)015rev-arm ;

46 2008 թ. ապրիլի 15, ՍԴՈ-751, 2021թ. օգոստոսի 6, ՍԴԴԿՈ-49

47 2021 թ. սեպտեմբերի 14, ՍԴԴԿՈ-58 , 2010թ. նոյեմբերի 30, ՍԴՈ-927

48 2021 թ. սեպտեմբերի 14, ՍԴԴԿՈ-58

5.5. Ի՞նչ է նշանակում «դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառում»

Դուք կարող եք դիմել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ **օգտագործել եք օրենքով սահմանված բոլոր իրավական հնարավորությունները**[49] Ձեր ենթադրյալ խախտված իրավունքների վերականգնման համար:

Դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառված են, եթե՝

- Ձեր գործը քննվել է դատական բոլոր ատյաններում, և վերջին ատյանը կայացրել է վերջնական դատական ակտ,
- Դուք օրենքով սահմանված կարգով և ժամկետներում օգտագործել եք բոլոր իրավական հնարավորությունները Ձեր իրավունքների վերականգնման համար:

Դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառված չեն, եթե՝

- Դիմողը հետևողական չի եղել և չի բողոքարկել այն ակտը, որը ենթակա է բողոքարկման[50]:
- Սահմանադրական դատարան դիմելուց հետո Վճռաբեկ դատարանը նոր երևան եկած հանգամանքի հիմքով վերանայել է իր այն դատական ակտը, որով կիրառված նորմը դիմողը վիճարկել է ՍԴ-ում: Դիմումում նշված վերջնական դատական ակտը իր ուժը կորցրել է, և դիմողի համար դեռևս չեն սպառվել դատական պաշտպանության բոլոր միջոցները[51]:
- Վճռաբեկ դատարանը բեկանել է վերաքննիչ դատարանի որոշումը և գործը ուղարկել է նոր քննության, հետևաբար, դատական գործընթացը դեռևս շարունակվում է[52]:
- Վճռաբեկ դատարանն առանց քննության է թողել դիմողի բողոքը, քանի որ այն ներկայացվել է սահմանված ժամկետից հետո (դիմողը չի խնդրել վերականգնել բաց թողնված ժամկետը կամ նման միջնորդությունը չի բավարարվել): Դիմողը իր գործողությունների հետևանքով չի իրականացրել Վճռաբեկ դատարանում իր իրավունքների պաշտպանությունը[53]:
- Վճռաբեկ դատարանը բողոքը թողել է առանց քննության, քանի որ դիմողը ամբողջությամբ չի շտկել բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված բոլոր սխալները:

49 2020թ. հուլիսի 31, ՍԴԴԿՈ-39

50 2023թ. մայիսի 16, ՍԴԱՈ-47

51 2011թ. մարտի 29, ՍԴՈ-946

52 2022թ. հուլիսի 8, ՍԴԱՈ-120

53 2022թ. ապրիլի 1, ՍԴԱՈ-64, 2024թ. նոյեմբերի 18, ՍԴԴԿՈ-61

- Դիմողը դատարանում վիճարկել է վարչական մարմնի անգործությունը, այլ ոչ թե այն ենթաօրենսդրական ակտը, որի նորմի Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել է ՍԴ[54]:

- Դատարանը կայացրել է «Արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքում որոշման կայացումը հետաձգելու մասին» որոշում[55]:

6 ԻՆՉ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ԴԻՄԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելու համար պետք է պահպանեք վեցամսյա ժամկետը, որը սկսվում է **վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու հաջորդ օրվանից:**

Ժամկետը հաշվարկվում է հետևյալ կերպ.

- Վեցամսյա ժամկետը սկսվում է վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու հաջորդ օրվանից:
- Օրենքով սահմանված կարգով՝ ամիսներով հաշվարկվող ժամկետը լրանում է վերջին ամսվա նույն օրը (օրինակ՝ սեպտեմբերի 6-ից հաշվարկվող ժամկետը լրանում է մարտի 6-ին):
- Ժամկետի սկիզբը **ոչ թե դիմողի կողմից դատական ակտը ստանալու օրն է,** այլ՝ ակտի **օրինական ուժի մեջ մտնելու օրը[56]:**

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ



Սահմանադրական դատարան դիմելու վեցամսյա ժամկետը բաց թողնելու դեպքում այն վերականգնել հնարավոր չէ, անգամ եթե դա պայմանավորված է եղել հարգելի պատճառներով[57]:

7 ԱՐԴՅՈ՞Ք ՊԵՏՔ Է ԴԻՄՈՒՄԸ ՊԱՐՈՒՆԱԿԻ ՀՍՏԱԿ ՀՂՈՒՄՆԵՐ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԱԿՏԻ ՆՈՐՄԵՐԻՆ

Դուք Ձեր դիմումում պետք է հստակ նշեք, թե **կոնկրետ ո՞ր իրավական դրույթը** կամ դրույթներն եք վիճարկում Սահմանադրական դատարանում:

---

54 2020թ. մայիսի 7, ՍԴԴԿՈ-25

55 2024թ. նոյեմբերի 29, ՍԴԴԿՈ-63

56 «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 69, 2024թ. ապրիլի 26, ՍԴԱՈ-72

57 2021թ. հունվարի 15, ՍԴԱՈ-8, 2024թ. հոկտեմբերի 18, ՍԴԴԿՈ-59

Նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթներին հղումը հստակ չէ՝

- Եթե դիմողը ընդհանուր ձևակերպմամբ խնդրում է հակասահմանադրական ճանաչել իր նկատմամբ կիրառված նորմերը:

Օրինակ՝ *Դիմողը խնդրում է Սահմանադրությանը հակասող ճանաչել իրեն ներում շնորհելու և պատիժ նշանակելու վերաբերյալ դատական ակտերով կիրառված ՀՀ քրեական և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխան դրույթների մեկնաբանությունը[58]:*

8 ԱՐԴՅՈ՞Ք ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԸ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՔՆՆՎԵԼ Է ՍԴ ԿՈՂՄԻՑ ԵՎ ԿԱՅԱՑՎԵԼ Է ՈՐՈՇՈՒՄ

Սահմանադրական դատարան դիմելուց առաջ պետք է պարզել, **թե արդյոք Ձեր կողմից բարձրացված հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանը նախկինում որոշում չի կայացրել:** Այս կանոնը նշանակում է, որ Դուք՝

- Չեք կարող նույն իրավական հարցը բարձրացնել Սահմանադրական դատարանում, եթե դատարանն իր որոշմամբ արդեն իսկ պատասխանել է այդ հարցին:

Օրինակ՝ *ՍԴ պրակտիկայից (պարզեցված)*
Դիմողը վիճարկել է Քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմը՝ առաջադրելով հետևյալ հարցը. արդյոք Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս ատյանների ակտերից տարբերվող ակտ կայացնելու լիազորությունը համապատասխանում է Սահմանադրությանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողը չունի այլևս հնարավորություն վիճարկելու այդ ակտի հիմքում դրված պատճառաբանությունները: ՍԴ-ը նշել է, որ այդ հարցի վերաբերյալ արդեն իսկ առկա է ՍԴ 2009 թվականի սեպտեմբերի 22-ի ՍԴՈ-832 որոշումը և մերժել է դիմումը[59]:

- Դուք կարող եք վիճարկել այն նորմը, որն արդեն իսկ ՍԴ-ում դարձել է քննարկման առարկա, եթե տվյալ նորմի հետ կապված միանգամայն այլ իրավական հարց եք բարձրացնում Սահմանադրական դատարանում[60]:

58 2021թ. սեպտեմբերի 2,ՍԴԱՈ - 185

59 2018թ. մայիսի 4, ՍԴԴԿՈ/2-15

Ուղեցույց Սահմանադրական անհատական դիմումների ընդունելիության չափանիշների վերաբերյալ ԷՋ ►25

9 ԱՐԴՅՈ՞Ք ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ Է ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԱՅԼ ԱՆՁԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Եթե Սահմանադրական դատարանում արդեն իսկ ընթանում է դատաքննություն Ձեր կողմից բարձրացված հարցի վերաբերյալ այլ անձի դիմումի հիման վրա, ապա դատարանը կմերժի Ձեր դիմումը:

- **Եթե Դուք պարզել եք, որ այլ անձի դիմումի հիման վրա ՍԴ-ում գործ է քննվում, և չեք դիմել ՍԴ, ապա այդ գործով կայացված որոշումը կարող եք օգտագործել Ձեր գործի վերանայման համար՝ որպես նոր հանգամանք հետևյալ դեպքերում՝**

1. ՍԴ-ը վիճարկվող նորմը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր
2. ՍԴ-ը վիճարկվող նորմը ճանաչել է սահմանադրական, սակայն արձանագրել է, որ դիմողի նկատմամբ այն կիրառվել է սխալ մեկնաբանությամբ[61]:

10 ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Անհատական դիմումը **պետք է պարունակի հիմնավորումներ այն մասին, որ վիճարկվող ակտի հակասահմանադրականությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված դիմողի հիմնական իրավունքների և ազատությունների խախտման**՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Անհատական դիմումի «հիմնավորվածությունը» նշանակում է, որ պետք է պահպանեք հետևյալ երեք կարևոր պահանջները.

1. անհատական դիմումը **պետք է պարունակի իրավական փաստարկներ և հիմնավորումներ այն մասին,** թե Ձեր կողմից վիճարկվող նորմը **ինչու է հակասում** Սահմանադրության 2-րդ գլխի կոնկրետ նորմին,
2. դիմումում պետք է հստակ նշեք, **թե կոնկրետ Ձեր որ սահմանադրական իրավունքն է խախտվել վիճարկվող նորմի կիրառման արդյունքում,**
3. **պետք է ցույց տաք պատճառահետևանքային կապը** Ձեր կողմից վիճարկվող նորմի և Ձեր իրավունքների խախտման միջև[62]:

61 «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 69, մաս 10 և 11

62 2018թ. դեկտեմբերի 4, ՍԴԱՈ-91

Դիմումը իրավաբանորեն բավարար կերպով հիմնավորված է[63], եթե՝

- Դուք բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել եք, թե Ձեր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել, և ի՞նչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող նորմի (օրենսդրական բացի) և Ձեր իրավունքների խախտման փաստի միջև:
- Դուք ներկայացրել եք դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր:

Դիմումը «ակնհայտ անհիմն է», եթե՝

- Թեև դիմումում բարձրացված հարցը ենթակա է Սահմանադրական դատարանի քննությանը, սակայն դիմողը չի ներկայացրել բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար[64]:
- Դիմողը պարզապես նշել է, որ իր սահմանադրական իրավունքը խախտվել է, բայց չի բացատրել, **թե ինչպես է վիճարկվող նորմը** հանգեցրել այդ խախտմանը[65]:
- Նույն դիմողը միևնույն «հիմնավորումներով» և «փաստարկներով» վիճարկում է այն նույն նորմի սահմանադրականությունը, որի հիման վրա գործի քննության ընդունումը մերժվել կամ արդեն իսկ ընդունվել է քննության Սահմանադրական դատարանի կողմից[66]:
- Դիմողը հիմնավորել է Սահմանադրության այլ գլուխներում ամրագրված նորմերի ենթադրյալ հակասության արդյունքում իր իրավունքների ենթադրյալ խախտումը[67]:
- Դիմողը ներկայացրել է հիմնավորումներ՝ հղում կատարելով Սահմանադրության 2-րդ գլխի **միայն այն հոդվածներին, որոնք սահմանում են սահմանադրա-իրավական սկզբունքներ, այլ ոչ թե իրավունք կամ ազատություն[68]:**

63 2022թ. սեպտեմբերի 1, ՍԴԱՈ-133

64 2009թ. մարտի 17, ՍԴԱՈ-21

65 2022 թ. հուլիսի 12, ՍԴԱՈ-126, 2022թ. սեպտեմբերի 1, ՍԴԱՈ-133, 2025թ. օգոստոսի 19, ՍԴԴԿՈ-42

66 2009թ. մարտի 17, ՍԴԱՈ-21

67 2022 թ. հուլիսի 12, ՍԴԱՈ-126

68 2025թ. օգոստոսի 19, ՍԴԴԿՈ-42, 2022 թ. հուլիսի 12, ՍԴԱՈ-126

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ՝

Դիմումը հիմնավորելիս՝

- Իրավական փաստարկների միջոցով պարզաբանեք, թե Ձեր կոնկրետ որ սահմանադրական իրավունքը կամ ազատությունն է խախտվել կամ սահմանափակվել (նշեք Սահմանադրության հոդվածը),
- Հստակ ներկայացրեք, որ Ձեր իրավունքը խախտվել է հենց կիրառված (վիճարկվող) նորմի «պատճառով»,
- Ձեր պնդումներն ու եզրահանգումները ներկայացրեք իրավական փաստարկների ու վերլուծության միջոցով:

Մի ներկայացրեք փաստարկներ, որոնց միջոցով՝

- հայտնում եք Ձեր անհամաձայնությունը կայացված դատական ակտերի հետ,
- դժգոհում եք դատական ակտի որակից,
- գնահատում եք դատարանների կողմից նորմի կիրառումը կամ չկիրառումը որպես անարդար և անօրինական,
- կարծիք եք հայտնում, որ դատական ակտը չի համապատասխանում Սահմանադրությանը, ՍԴ նախադեպային որոշումներին և ՄԻԵԴ նախադեպային իրավունքին,
- պահանջում եք դատարանից հաստատել գործի հետ կապված որևէ փաստ,
- քաղաքական կամ ոչ իրավական բնույթի հարցադրումներ եք կատարում:

11 ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելու համար ***անհրաժեշտ է հետևել որոշակի կանոնների***, որոնք վերաբերում են անհատական դիմումի ընդունելիության փուլերին:

Անհատական դիմումի ընդունելիության փուլերն են[69].

- Անհատական **դիմումի ներկայացման** փուլ,
- Անհատական **դիմումի գրանցման կամ դիմումի վերադարձման** փուլ,

69 «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, 22-30 հոդվածներ,

- Անհատական **դիմումի վերադարձման մասին որոշման բողոքարկման** փուլ,
- Անհատական **դիմումի նախնական ուսումնասիրության** փուլ,
- Անհատական **դիմումը վարույթ ընդունելու կամ մերժելու** փուլ,

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ



Սահմանադրական դատարանը կարող է Ձեր դիմումը ընդունել քննության, սակայն գործի քննության ցանկացած փուլում կարող է նաև կարճել վարույթը, եթե բացահայտվել են գործի մերժման հիմքեր[70]:

12 ԻՆՉՊԵ՞Ս ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԸ

Դուք պետք է ներկայացնեք **անհատական դիմումը գրավոր՝ իրավասու անձի կողմից ստորագրված**[71]:

- Եթե դիմումը ներկայացնում եք **անձամբ**, ապա այն պետք է ստորագրվի Ձեր կողմից,
- Եթե Սահմանադրական դատարանում Ձեր շահերը ներկայացնում է լիազորված անձը, ապա դիմումը պետք է ստորագրվի նրա կողմից:

Անչափահասները չեն կարող ներկայացնել իրենց շահերը Սահմանադրական դատարանում: Անչափահասներին Սահմանադրական դատարանում ներկայացնում են **օրինական ներկայացուցիչները՝ ծնողը (որդեգրողը), խնամակալը, հոգաբարձուն կամ օրենքով նման իրավունք ունեցող այլ անձինք:**

Անգործունակ եւ սահմանափակ գործունակ անձինք Սահմանադրական դատարանում կարող են հանդես գալ միայն **իրենց խնամակալների եւ հոգաբարձուների միջոցով,** բացառությամբ այն դեպքերի, երբ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձը իրավունք ունի անմիջականորեն դիմելու դատարան[72]:

70 «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 60, մաս 1, կետ 1

71 «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, 24-րդ հոդված

72 ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 255-րդ հոդված

Ո՞վ կարող է ներկայացնել Ձեր շահերը Սահմանադրական դատարանում՝

- Փաստաբանը,
- Բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող անձը[73]:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ



Սահմանադրական դատարանում Ձեր շահերը ներկայացնելու համար Դուք պետք է լիազորագիր տաք թե՛ փաստաբանին, թե՛ բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող անձին:

Դիմումը պետք է ներկայացնել՝

- ***փաստաթղթային*** (առձեռն, փոստային կապի կամ սուրհանդակային կապի ծառայության միջոցով)
- ***էլեկտրոնային եղանակով***՝ բացառապես էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ armlaw@concourt.am էլեկտրոնային փոստի հասցեի կամ Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով (https://e-request.am):

Դիմումը չեք կարող ներկայացնել՝

- Բանավոր, օրինակ՝ հեռախոսային զանգի, բանավոր պայմանավորվածության կամ նմանատիպ այլ եղանակով,
- Չստորագրված կամ ոչ իրավասու անձի կողմից ստորագրված:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ



Դիմումը չեք կարող ներկայացնել էլեկտրոնային եղանակով, **եթե չունեք էլեկտրոնային թվային ստորագրություն:**

73 «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, 46-րդ հոդված

Էջ ►**30** Ուղեցույց Սահմանադրական անհատական դիմումների ընդունելիության չափանիշների վերաբերյալ

13 ԻՆՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԵՏՔ Է ՆԵՐԱՌԵԼ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՈՒՄ[74]

Անհատական դիմումը կազմելիս պետք է հավաստիանաք, որ նշել եք հետևյալ տեղեկությունները[75]՝

- Սահմանադրական դատարանի անվանումը,
- Դիմողի անունը (իրավաբանական անձի դեպքում ՝ անվանումը), հաշվառման (իրավաբանական անձի դեպքում ՝ գտնվելու վայրի) կամ բնակության վայրի հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման հասցեից,
- Եթե դիմողը հանդես է գալիս ներկայացուցչի միջոցով՝ դիմողի ներկայացուցչի անունը, հաշվառման կամ բնակության վայրի հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման հասցեից,
- Սահմանադրության այն հոդվածը, որը Սահմանադրական դատարան դիմելու հիմք է հանդիսանում,
- Սահմանադրական դատարան ներկայացվող խնդրանքը և դիմողի փաստարկները՝ Սահմանադրության համապատասխան նորմերին կատարված հղումներով,
- Դիմումին կցվող նյութերի ցանկը:

14 ԻՆՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՆ ԿՑՎՈՒՄ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻՆ

Անհատական դիմումին կից պետք է ներկայացնեք հետևյալ փաստաթղթերը[76]՝

1. լիազորագիրը[77],
2. օտար լեզվով շարադրված բոլոր փաստաթղթերի՝ օրենքով սահմանված կարգով վավերացված հայերեն թարգմանությունը,
3. դիմողի հայեցողությամբ՝ գործին առնչվող այլ նյութեր,
4. օրենքով սահմանված չափով պետական տուրք վճարելու վերաբերյալ անդորրագիրը կամ միջնորդություն պետական տուրքի վճարումից ազատելու մասին,
5. ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի այն վերջնական դատական ակտը, որով դիմողի նկատմամբ կիրառվել է նրա կողմից վիճարկվող օրենքի դրույթը,

74 Անհատական դիմումի տիպօրինակը տես Հավելված 3-ում:

75 «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, 24-րդ հոդված, մաս 2

76 «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, 25-րդ հոդված,

77 Լիազորագրի տիպօրինակը տես Հավելված 4-ում:

6. դիմողի անձը հաստատող փաստաթղթի պատճենը, իրավաբանական անձի պետական գրանցման կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը,
7. որպես ներկայացուցիչ հանդես եկող փաստաբանի անձը հաստատող և փաստաբանի կարգավիճակի մասին հավաստող փաստաթղթի պատճենները,
8. որպես ներկայացուցիչ հանդես եկող՝ բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող անձի՝ անձը հաստատող փաստաթղթի և բարձրագույն իրավաբանական կրթությունը հավաստող փաստաթղթի պատճենը:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ



Օտար լեզվով շարադրված բոլոր փաստաթղթերի թարգմանությունները պետք է վավերացվեն նոտարի կողմից[78]: Իրավաբանական անձը պարտավոր է ներկայացնել պետական գրանցման համարը, այլ ոչ թե իրավաբանական անձի պետական գրանցման համարը պարունակող փաստաթուղթը (պատճեն)[79]:

Ո՞րքան է պետական տուրքը և ինչպե՞ս այն վճարել

Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս պետք է վճարել պետական տուրք՝ **30 000 ՀՀ դրամի չափով**.

Պետական տուրքը վճարվում է **9 0000 500 16 08 գանձապետական հաշվեհամարին**:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ



Պետական տուրքի վճարումը կարող է կատարվել նաև www.e-payments.am համակարգով և ներկայացնել այդ համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20 նիշանոց ծածկագիրը[80]:

78 2024թ. հոկտեմբերի 16, ՍԴԴԿՈ-58

79 2021թ. օգոստոսի 24, ՍԴԴԿՈ-53

80 2021թ. օգոստոսի 24, ՍԴԴԿՈ-53

Կարո՞ղ է արդյոք դիմողը ազատվել պետական տուրքի վճարումից

Պետական տուրք վճարելը՝ սահմանադրական պարտականություն է: Սակայն, Սահմանադրական դատարանը, ելնելով դիմողի գույքային վիճակից, կարող է սահմանել հետևյալ արտոնությունները[81] ՝

1. պետական տուրքի վճարումից ազատում,
2. պետական տուրքի նվազեցում,
3. պետական տուրքի դրույքաչափի նվազեցում,
4. պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում,
5. պետական տուրքը սահմանված ժամկետում բյուջե չգանձելու համար հաշվարկված տույժերի վճարումից ազատում, նվազեցում, դրանք վճարելու ժամկետի հետաձգում:

- **Եթե սոցիալապես անապահով եք,** ապա անհատական դիմումին կից կարող եք ներկայացնել միջնորդություն[82]՝ **պետական տուրքից ազատվելու խնդրանքով՝** նշելով ձեր գույքային վիճակը:

- **Սահմանադրական դատարանը,** հաշվի առնելով ձեր սոցիալապես անապահով վիճակը կամ այլ հիմնավոր պատճառներ, կարող է բավարարել միջնորդությունը և ձեզ տրամադրել **պետական տուրքի արտոնություն:**

Օրինակներ՝ *ՍԴ պրակտիկայից*

- *Դիմողը անհատական դիմում է ներկայացրել Սահմանադրական դատարան՝ պետական տուրքից ազատելու վերաբերյալ կից միջնորդությամբ: Դատարանը բավարարել է միջնորդությունը՝ հիմք ընդունելով դիմողի գույքի վրա արգելանքի տարածման փաստը[83]:*

- *Դիմողը անհատական դիմում է ներկայացրել Սահմանադրական դատարան՝ պետական տուրքից ազատելու վերաբերյալ կից միջնորդությամբ: Դատարանը բավարարել է միջնորդությունը՝ հիմք ընդունելով կենսաթոշակառու լինելը և բռնադատվածի կարգավիճակը[84]:*

81 Պետական տուրքի մասին ՀՀ օրենք, 21-րդ հոդված

82 Պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդության տիպօրինակը տես Հավելված 5-ում

83 2024թ. նոյեմբերի 29, ՍԴԴԿՈ-63

84 2025թ. մայիսի 23, ՍԴԴԿՈ-25

15 ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ԴԻՄՈՒՄԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻ

Ձեր կողմից Սահմանադրական դատարան ներկայացված դիմումը ենթակա է պարտադիր գրանցման[85]:

- Եթե դիմումը ներկայացվել է թղթային եղանակով, ապա այն գրանցվում է Սահմանադրական դատարանի աշխատակազմի Ընդհանուր բաժնի գրանցման մատյանում[86]:
- Եթե դիմումը ներկայացվել է էլեկտրոնային եղանակով, ապա այն գրանցվում է էլեկտրոնային մատյանում[87]:

Դիմումի գրանցման փուլում Սահմանադրական դատարանը ստուգում է միայն՝ **արդյոք դիմումը համապատասխանում է օրենքով սահմանված ձևական պահանջներին:**

Դիմումի գրանցման գործընթացը՝ քայլ առ քայլ.

1. **Դիմումը ներկայացնելուց հետո,** ՍԴ աշխատակազմի ընդհանուր բաժինը **2 օրվա ընթացքում ուսումնասիրում է[88],** թե արդյոք այն համապատասխանում է օրենքով սահմանված ձևական պահանջներին[89]:
2. Ուսումնասիրման արդյունքներն ամփոփվում են և ներկայացվում ՍԴ աշխատակազմի ղեկավարին[90]:
3. Եթե դիմումում ձևական պահանջները պահպանված չեն, աշխատակազմը Ձեզ այդ մասին **տեղեկացնում է 3 օրվա ընթացքում,** նշելով՝ ինչն է պետք ուղղել:
4. Դուք կարող եք **եռօրյա ժամկետում ուղղել դրանք և նորից ներկայացնել դիմումը:**
5. Եթե ներկայացնում եք ուղղված տարբերակը, ապա **դիմումը համարվում է ներկայացված հենց սկզբնական օրը[91]:**

85 «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, 26-րդ հոդված,

86 Սահմանադրական դատարանի աշխատակարգ, կետ 72

87 Սահմանադրական դատարանի աշխատակարգ, կետ 74

88 Սահմանադրական դատարանի աշխատակարգ, կետ 76

89 «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, 24-րդ և 25-րդ հոդվածներ

90 Տեղեկանքն ստանալուց ոչ ուշ, քան 1 օր հետո աշխատակազմի ղեկավարը լուծում է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների պահանջներին անհատական դիմումի համապատասխանեցման մասին դիմողին տեղեկացնելու հարցը. Սահմանադրական դատարանի աշխատակարգ, կետ 76

91 Սահմանադրական դատարանի աշխատակարգ, կետ 80

Դիմումի ձևական կամ տեխնիկական սխալները կարող եք ուղղել երկու եղանակով.

Դիմումը կարող եք խմբագրել և կրկին ներկայացնել՝ **օրենքի պահանջներին համապատասխանեցված տարբերակով:**

Եթե տեխնիկապես հնարավոր է, ապա թեթև ձևական կամ տեխնիկական սխալները կարող եք ուղղել տեղում ՝ Սահմանադրական դատարանի Ընդհանուր բաժնում:

Օրինակ՝ *սխալ ամսաթվի նշումը, ստորագրության բացակայությունը կարող եք ուղղել Սահմանադրական դատարանի դիմումների ընդունման բաժնում:*

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ



Եթե Դուք եռօրյա ժամկետում չուղղեք դիմումի ձևական սխալները և դիմումի ուղղված տարբերակը չներկայացնեք ՍԴ, ապա ՍԴ ընդհանուր բաժինը մեկ օրյա ժամկետում կվերադարձնի Ձեր դիմումը՝ նշելով , որ կարող եք այդ որոշումը եռօրյա ժամկետում բողոքարկել Սահմանադրական դատարան[92]:

Եթե դուք առարկություններ չեք ներկայացրել ՍԴ աշխատակազմի կողմից մատնանշված սխալների վերաբերյալ և շտկել եք դրանք, ապա, դիմումը գրանցվում է առավելագույնը **6 օրում:**

Եթե դուք անհամաձայնություն եք հայտնել մատնանշված սխալների վերաբերյալ և բողոքարկել եք դիմումը վերադարձնելու որոշումը, ապա, կախված Սահմանադրական դատարանի որոշումից, դիմումը կամ գրանցվում, կամ մերժվում է առավելագույնը **11 օրում:**

92 «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, 26-րդ հոդված

Դիմումը վերադարձնելու հիմք է՝

- դիմողն իր դիմումներում չի նշել Սահմանադրական դատարան ներկայացվող խնդրանքը,
- դիմողը չի նշել Սահմանադրության այն հոդվածը, որը Սահմանադրական դատարան դիմելու հիմք է հանդիսանում,
- չի կցվել պետական տուրք վճարելու վերաբերյալ անդորրագիրը կամ պետական տուրքի վճարումից ազատելու մասին միջնորդությունը

Դիմումը վերադարձնելու հիմք չէ՝

- Դիմումը ներկայացնելու վեցամսյա ժամկետի չպահպանումը, քանի որ այդ հարցը պետք է քննվի դիմումի ընդունելիության փուլում[93]:
- «Վերջնական դատական ակտի» առկայության հարցը անմիջապես կապված է «դատական պաշտպանության բոլոր միջոցների» սպառման հետ, որը ընդունելիության չափանիշ է, և դրա վերաբերյալ որոշումը կայացնում է հենց Սահմանադրական դատարանը[94]:

16 ԻՆՉ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ ԴԻՄՈՒՄԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Գրանցվելուց հետո Ձեր դիմումը անցնում է նախնական ուսումնասիրության փուլ, որի ընթացքում որոշվում է, **թե արդյոք Ձեր դիմումը համապատասխանում է դիմումի ընդունելիության չափանիշներին**:

Դիմումի նախնական ուսումնասիրությունը կատարվում է **Սահմանադրական դատարանիերեքդատավորիկազմի** կողմից: Դատականկազմիդատավորներն ընտրվում են վիճակահանությամբ, այսինքն՝ պատահական կարգով[95]:

Դատական կազմը որոշում է, **թե արդյո՞ք կան դիմումի ընդունումը մերժելու հիմքեր թե ոչ**: Դատական կազմը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը[96].

1. **Գործը ընդունել քննության,**
2. **Գործի քննությունը մերժել,**
3. **Գործը մասամբ ընդունել քննության եւ գործի քննությունը մասամբ մերժել:**

93 2018 թ. հունիսի 11, ՍԴԴԿՈ/1-16

94 2022թ. օգոստոսի 31, ՍԴԴԿՈ-45

95 Սահմանադրական դատարանի աշխատակարգ, 88-97 կետեր

96 Սահմանադրական դատարանի աշխատակարգ, կետ 110

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ



Նախնական ուսումնասիրությունը անցկացվում է **դիմումը մուտքագրելուց ոչ ուշ, քան 20 օրվա ընթացքում: Այս ժամկետը կարող է երկարաձգվել ՍԴ նախագահի որոշմամբ**[97]**:**

Եթե դատական կազմը համաձայնության չի գալիս դիմումի ընդունման կամ մերժման հարցում, ապա այդ հարցը քննում է դատարանի ամբողջ կազմը, և վերջնական որոշումը կայացվում է ոչ ուշ, քան դիմումը մուտքագրելուց **երեք ամիս** հետո[98]**:**

Անհատական դիմումների քննությունը մերժելու մասին ՍԴ որոշումը պետք է հիմնավորված և պատճառաբանված լինի[99]**:**

Անհրաժեշտության դեպքում դատական կազմի նիստերին նախագահողը կարող է հրավիրել դիմողին (նրա ներկայացուցչին)[100]**:**

17 ՈՐՈ ՞ՆՔ ԵՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ[101]

Սահմանադրական դատարանը կմերժի Ձեր դիմումը ընդունել վարույթ, <u>**եթե առկա է հետևյալ հիմքերից որևէ մեկը**</u>՝

1. **դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին,**
2. **եթե դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան,** այսինքն՝

   ա դիմողը չի հանդիսացել դատարանում դատավարության մասնակից

   բ դիմողի նկատմամբ մասնագիտացված դատարանի կողմից չի կիրառվել օրենքի դրույթը

   գ դիմողի նկատմամբ վիճարկվող դրույթները չեն կիրառվել դատարանի վերջնական ակտով

97 Սահմանադրական դատարանի աշխատակարգ, կետ 27-29

98 «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 69, մաս 6

99 «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 69, մաս 6, 2009թ. մարտի 17, ՍԴԱՈ-21

100 Սահմանադրական դատարանի աշխատակարգ, կետ 102

101 Անհատական դիմումի մերժման հիմքերը մանրամասն ներկայացված են սույն ուղեցույցի 2-10 հարցադրումների ներքո

դ դիմողը չի սպառել ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները.

3. **դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում իրականացվում է գործի դատաքննություն,**
4. **դիմումում առաջադրված հարցերի վերաբերյալ առկա է Սահմանադրական դատարանի որոշում**
5. **դիմումն ակնհայտ անհիմն է,**
6. **լրացել է Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված վեցամսյա ժամկետը:**

18 ԱՐԴՅՈՔ ԿԱՐՈ՞Ղ Է ԴԻՄՈՂԸ ԿՐԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՄԵՐԺՎԱԾ ԴԻՄՈՒՄԸ

Դուք կարող եք Ձեր մերժված դիմումը կրկին ներկայացնել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, եթե կարող եք վերացնել մերժման հիմքը[102]:

- Դիմումի մերժման հիմքը կարող է վերացվել այն դեպքում, եթե դիմողը կարող է իր գործողություններով փոխել այն այնպես, որ այդ հանգամանքը այլևս առկա չլինի:

Օրինակ՝ *դիմումը իրավաբանորեն բավարար կերպով հիմնավորված չլինելու հիմքով մերժման դեպքում դիմողը կարող է դիմումը կրկին ներկայացնել իրավական հիմնավորումները փոխելուց հետո:*

- Դիմումի մերժման հիմքը չի կարող վերացվել այն դեպքում, եթե այն օբյեկտիվորեն հնարավոր չէ փոխել:

Օրինակ՝ *դիմողի նկատմամբ վիճարկվող նորմը կիրառված չլինելը, դատական պաշտպանության միջոցների սպառումը (եթե ժամկետից ելնելով դա այլևս հնարավոր չէ ապահովել), նույն հարցի վերաբերյալ ՍԴ որոշման առկայությունը և այլն:*

102 Սահմանադրական դատարանի աշխատակարգ, կետ 113

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ



Դուք կարող եք դիմումի մերժման հիմքերը վերացնելուց հետո նույն հարցով կրկին դիմել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, եթե **պահպանեք Ձեր գործով կայացված վերջնական դատական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից հաշվարկվող ՍԴ դիմելու վեցամսյա ժամկետը:**

Եթե Դուք չեք վերացրել գործի քննությունը մերժելու հիմքերը, ապա նույն հարցով կրկին դիմելու դեպքում Ձեզ կրկին կուղարկվի Ձեր դիմումը մերժելու վերաբերյալ որոշման պատճենը, ինչը նշանակում է, որ արդեն տվյալ հարցով առկա է Սահմանադրական դատարանի որոշում:

19 ԱՐԴՅՈ՞Ք ԿԱՐՈՂ Է ԴԻՄՈՂԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՄՈՒՄԸ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼ

Դուք կարող եք ՍԴ ներկայացված Ձեր անհատական դիմումը հետ վերցնել միայն այն դեպքում, եթե Սահմանադրական դատարանը դեռ չի սկսել գործի դատաքննությունը[103]:

Եթե Ձեր դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանը արդեն իսկ իրականացնում է դատաքննություն, ապա **դատարանը կարող է մերժել դիմումը հետ վերցնելը, եթե գտնում է, որ գործի քննությունը բխում է հանրային շահից:**

103 «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, 30-րդ հոդված

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Անհատական դիմումի ընդունելիության չափանիշներին վերաբերելի իրավական ակտերից քաղվածքներ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ[104]

Հոդված 74. Հիմնական իրավունքների և ազատությունների կիրառելիությունն իրավաբանական անձանց նկատմամբ

Հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով , որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ:

Հոդված 168. Սահմանադրական դատարանի լիազորությունները

Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով՝

1. որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը.
2. մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագծի, ինչպես նաև հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի ընդունումը որոշում է դրանց համապատասխանությունը Սահմանադրությանը.
3. մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը.
4. լուծում է սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերը.
5. լուծում է հանրաքվեի, Ազգային ժողովի և Հանրապետության նախագահի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը.
6. որոշում է կայացնում պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հարցի վերաբերյալ.
7. եզրակացություն է տալիս Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին.
8. որոշում է կայացնում Հանրապետության նախագահի լիազորությունների կատարման անհնարինության մասին.
9. լուծում է Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական

104 https://www.arlis.am/hy/acts/102510

պատասխանատվության ենթարկելու հարցը.

10. լուծում է Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցը.

11. լուծում է իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը.

12. օրենքով սահմանված դեպքերում որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու վերաբերյալ:

Հոդված 169. Սահմանադրական դատարան դիմելը

1. Սահմանադրական դատարան կարող են դիմել՝

(1) Ազգային ժողովը՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 12-րդ կետով սահմանվածդեպքերում, Սահմանադրության 168-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված դեպքում ՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ, իսկ Սահմանադրության 168-րդ հոդվածի 10-րդ կետով սահմանված դեպքում՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընդունված որոշմամբ.

(2) պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 6-րդ կետերով սահմանված դեպքերում.

(3) Ազգային ժողովի խմբակցությունը՝ հանրաքվեի և Հանրապետության նախագահի ընտրության արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով.

(4) Հանրապետության նախագահը՝ Սահմանադրության 129-րդ հոդվածի 1-ին մասով , 139-րդ հոդվածի 2-րդ մասով , 150-րդ հոդվածով , ինչպես նաև 168-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերով սահմանված դեպքերում.

(5) Կառավարությունը՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին, 4-րդ, 8-րդ և 12-րդ կետերով սահմանված դեպքերում.

(6) Բարձրագույն դատական խորհուրդը՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքերում.

(7) տեղական ինքնակառավարման մարմինները՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով , ինչպես նաև Սահմանադրության 168-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքերում.

(8) յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված

նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը.

(9) գլխավոր դատախազը՝ դատախազության կողմից իրականացվող կոնկրետ վարույթին առնչվող նորմատիվ իրավական ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով , ինչպես նաև Սահմանադրության 168-րդ հոդվածի 11-րդ կետով սահմանված դեպքում.

(10) Մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով.

(11) Ազգային ժողովի ընտրությանը մասնակցած կուսակցությունները կամ կուսակցությունների դաշինքները՝ Ազգային ժողովի ընտրության արդյունքով ընդունված որոշումների հետ կապված վեճերով.

(12) Հանրապետության նախագահի թեկնածուները՝ Հանրապետության նախագահի ընտրության արդյունքով ընդունված որոշումների հետ կապված վեճերով.

(13) Սահմանադրական դատարանի առնվազն երեք դատավոր՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 9-րդ կետով սահմանված դեպքում:

2. Սահմանադրության 168-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում Սահմանադրական դատարան դիմում է Ազգային ժողովը՝ Սահմանադրության փոփոխությանը, վերպետական միջազգային կազմակերպություններին անդամակցությանը կամ տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերով: Քաղաքացիական նախաձեռնության կարգով հանրաքվեի դրվող օրենքի նախագծի հարցով Սահմանադրական դատարան է դիմում քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցիչը:

3. Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը:

4. Դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով դիմում են Սահմանադրական դատարան, եթե հիմնավոր կասկածներ ունեն դրա սահմանադրականության վերաբերյալ և գտնում են, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով:

5. Սահմանադրության 168-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Ազգային ժողովի խորհուրդը:

6. Սահմանադրական դատարան դիմելու կարգի մանրամասները սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով:

7. Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔ[105]

Հոդված 22. Սահմանադրական դատարանում գործի քննության առիթը

1. Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Հոդված 23. Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը

1. Սահմանադրությամբ և սույն օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան կարող են դիմել Սահմանադրության 169-րդ հոդվածով նախատեսված մարմինները և անձինք:
2. Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում նշված դեպքում Սահմանադրական դատարան կարող են դիմել նաև իրավաբանական անձինք՝ Սահմանադրության 74-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 24. Դիմումին ներկայացվող ընդհանուր պահանջները

1. Դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ իրավասու ան-ձի կողմից ստորագրված: Դիմումը ներկայացվում է թղթային կամ էլեկտրոնային եղանակով:
2. Դիմումում նշվում են՝
   (1) Սահմանադրական դատարանի անվանումը.
   (2) դիմողի անունը (իրավաբանական անձի դեպքում ՝ անվանումը), հաշվառման (իրավաբանական անձի դեպքում ՝ գտնվելու վայրի) կամ բնակության վայրի հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման հասցեից. եթե դիմողը հանդես է գալիս ներկայացուցչի միջոցով՝ դիմողի ներկայացուցչի անունը, հաշվառման կամ բնակության վայրի հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման հասցեից.
   (3) Սահմանադրության այն հոդվածը, որը Սահմանադրական դատարան դիմելու հիմք է հանդիսանում.
   (4) Սահմանադրական դատարան ներկայացվող խնդրանքը և դիմողի փաստարկները՝ Սահմանադրության համապատասխան նորմերին կատարված հղումներով.
   (5) Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին և 5-րդ կետերով նախատեսված դեպքերում այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի

105 Ընդունվել է 2018 թվականի հունվարի 17-ին, https://www.arlis.am/hy/acts/199622/latest

անվանումը կամ պաշտոնատար անձի անունը, որն ընդունել է վիճարկվող ակտը.

(6) դիմումին կցվող նյութերի ցանկը:

3. Սույն օրենքի 68-րդ, 75-րդ և 79-րդ հոդվածներում նշված գործերով պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի կողմից ներկայացվող դիմումները պետք է համապատասխանեն դիմումին ներկայացվող ընդհանուր պահանջներին, ինչպես նաև պարունակեն անհրաժեշտ քանակի ստորագրություններ:

Հոդված 25. Դիմումին կցվող նյութերը

1. Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումին կցվում են՝

(1) լիազորագիրը կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող այլ փաստաթուղթ.

(2) օտար լեզվով շարադրված բոլոր փաստաթղթերի՝ օրենքով սահմանված կարգով վավերացված հայերեն թարգմանությունը.

(3) սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ դիմումի հիմնավորվածությունը հավաստող ապացույցները.

(4) դիմողի հայեցողությամբ՝ գործին առնչվող այլ նյութեր:

2. Սույն օրենքի 69-րդ հոդվածում նշված գործերով դիմողը պարտավոր է Սահմանադրական դատարան ներկայացնել նաև՝

(1) օրենքով սահմանված չափով պետական տուրք վճարելու վերաբերյալ անդորրագիրը կամ միջնորդություն պետական տուրքի վճարումից ազատելու մասին.

(2) ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի այն վերջնական դատական ակտը, որով դիմողի նկատմամբ կիրառվել է նրա կողմից վիճարկվող օրենքի դրույթը.

(3) դիմողի անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

(4) իրավաբանական անձի պետական գրանցման կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը.

(5) որպես ներկայացուցիչ հանդես եկող փաստաբանի անձը հաստատող և փաստաբանի կարգավիճակի մասին հավաստող փաստաթղթի պատճենները.

(6) որպես ներկայացուցիչ հանդես եկող՝ բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող անձի՝ անձը հաստատող փաստաթղթի և բարձրագույն իրավաբանական կրթությունը հավաստող փաստաթղթի պատճենը:

3. Դիմումն ընդունվելուց հետո դիմող կողմի նոր նյութերն ընդունվում են միայն Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ:

Հոդված 26. Դիմումի գրանցումը

1. Սահմանադրական դատարան ներկայացված դիմումը ենթակա է պարտադիր գրանցման: Գրանցված դիմումը ներկայացվում է Սահմանադրական դատարանի նախագահին: Սահմանադրական դատարան ներկայացված դիմում չհանդիսացող գրությունների գրանցման, բաշխման և քննարկման հետ կապված առանձնահատկությունները սահմանվում են Սահմանադրական դատարանի աշխատակարգով:
2. Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետին համապատասխան ներկայացված դիմումների ընդունման կարգը սահմանվում է Սահմանադրական դատարանի աշխատակարգով:
3. Եթե դիմումն ըստ ձևի չի համապատասխանում սույն օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների պահանջներին, ապա դիմողը եռօրյա ժամկետում, իսկ Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված դեպքերում, ինչպես նաև սույն օրենքի 81-րդ, 84-րդ և 86-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում 24 ժամվա ընթացքում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվում է այդ մասին՝ սույն օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների այն պահանջների մատնանշմամբ, որոնք պետք է ապահովի դիմողը:
4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով տեղեկացվելուց հետո դիմողը դիմումը սույն օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների պահանջներին համապատասխանեցնելուց հետո կարող է եռօրյա ժամկետում, իսկ սույն օրենքի 81-րդ, 84-րդ և 86-րդ հոդվածներով նախատեսված գործերով՝ մեկօրյա ժամկետում վերստին ներկայացնել Սահմանադրական դատարան: Նշված ժամկետում դիմումի համապատասխանեցումը սույն օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների պահանջներին չապահովելու դեպքում դիմումը մեկօրյա ժամկետում վերադարձվում է դիմողին՝ բողոքարկելու կարգի մասին համապատասխան նշմամբ:
5. Օրենքի պահանջներին դիմումի համապատասխանությունը դիմողը կարող է ապահովել դիմումի խմբագրված տեքստը ներկայացնելու կամ, եթե տեխնիկապես հնարավոր է, դիմումի թերությունները դիմումների ընդունման բաժնում շտկելու միջոցով: Եթե դիմումում առկա են այնպիսի թվաբանական, տեխնիկական կամ ձևական սխալներ և վրիպակներ, որոնք կարող են շտկվել դիմումների ընդունման բաժնում՝ դիմողի կողմից կամ նրա համաձայնությամբ, ապա դրանք չեն կարող դիմումը վերադարձնելու հիմք հանդիսանալ:
6. Դիմումը վերադարձնելը դիմողը կարող է եռօրյա ժամկետում, իսկ սույն օրենքի 81-րդ, 84-րդ և 86-րդ հոդվածներով նախատեսված գործերով՝ մեկօրյա ժամկետում բողոքարկել Սահմանադրական դատարան: Այդ հարցով վերջնական որոշումն ընդունվում է Սահմանադրական դատարանի երեք դատավորի կազմով ոչ ուշ, քան բողոքը ներկայացվելուց մեկ օր հետո:

7. Դատական կազմերը ձևավորվում են վիճակահանությամբ, որի անցկացման կարգը, ինչպես նաև դատական կազմերի գործունեության առանձնահատկությունները սահմանվում են Սահմանադրական դատարանի աշխատակարգով:

Հոդված 27. Դիմումի նախնական ուսումնասիրումը

1. Սույն օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված հիմքերի բացակայության դեպքում դիմումի նախնական ուսումնասիրումն իրականացվում է Սահմանադրական դատարանի աշխատակարգով սահմանված կարգով:

Հոդված 28. Գործը քննության ընդունելը

1. Գործն ընդունվում է վարույթ Սահմանադրական դատարանի աշխատակարգով սահմանված կարգով , եթե առկա չեն սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված գործի քննությունը մերժելու հիմքերը:
2. Անհատական դիմումներով գործը քննության ընդունելու կամ դիմումի քննությունը մերժելու կարգը սահմանվում է սույն օրենքի 69-րդ հոդվածով:
3. Գործը քննության ընդունելու մասին աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը լուծում է նաև գործով պատասխանող կողմ ներգրավելու, գործի դատաքննությունն սկսելու ժամանակի, գործով զեկուցող նշանակելու, գործի դատաքննության ընթացակարգի հարցերը, ինչպես նաև գործը դատաքննության նախապատրաստելու հետ կապված այլ հարցեր, իսկ անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին որոշմամբ՝ նաև դիմողի միջնորդության հիման վրա՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով նրան պետական տուրքի վճարումից ազատելու հետ կապված հարցերը:
4. Սահմանադրական դատարան ներկայացված անհատական դիմումներով սույն հոդվածի 3-րդ մասում նշված հարցերը լուծվում են Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ գործը քննության ընդունելու մասին դատական կազմի որոշման ընդունումից հետո՝ տասնօրյա ժամկետում:
5. Գործը քննության ընդունելու մասին որոշումը եռօրյա ժամկետում ուղարկվում է կողմերին:

Հոդված 29. Գործի քննությունը մերժելը

1. Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում՝
   (1) եթե դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին.
   (2) եթե դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան.

(3) եթե Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-5-րդ կետերում նշված գործերով ներկայացված որևէ դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է Սահմանադրական դատարանի որոշում.

(4) եթե դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում իրականացվում է գործի դատաքննություն.

(5) եթե վիճարկվող իրավական ակտի կամ դրույթի գործողությունը դադարել է, և այն չի կիրառվել կամ ենթակա չէ կիրառման.

(6) սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով ներկայացված դիմումներով Սահմանադրական դատարանը, ելնելով գործի հանգամանքներից, կարող է կայացնել գործը քննության ընդունելու մասին պատճառաբանված աշխատակարգային որոշում:

3. Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշումը եռօրյա ժամկետում, իսկ սույն օրենքի 81-րդ, 84-րդ և 86-րդ հոդվածներով նախատեսված գործերով՝ անհապաղ, ուղարկում է կողմերին:

Հոդված 30. Դիմումը հետ վերցնելը

1. Սահմանադրական դատարան ներկայացված դիմումը դիմողը կարող է հետ վերցնել մինչև գործի դատաքննությունն սկսվելը, բացառությամբ այն դեպքերի, երբ Սահմանադրական դատարան դիմելը դիմողի պարտականությունն է:

2. Սահմանադրական դատարանը կարող է մերժել այն դիմումը հետ վերցնելը, որի հիման վրա գործ է ընդունվել քննության, եթե գտնում է, որ դիմումի առարկայի վերաբերյալ գործի քննությունը բխում է հանրային շահերից, բացառությամբ սույն օրենքով նախատեսված այն դեպքերի, երբ դիմումից հրաժարվելը հանգեցնում է գործի քննության կարճման:

Հոդված 46. Ներկայացուցչությունը Սահմանադրական դատարանում

1. Կողմերը Սահմանադրական դատարանում կարող են հանդես գալ անձամբ կամ ներկայացուցիչների միջոցով:

2. Որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

3. Սահմանադրական դատարանում որպես կողմի ներկայացուցիչ կարող են հանդես գալ նրա լիազորած անձինք՝ պաշտոնատար անձը կամ այն փաստաբանը կամ բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող անձը,

որի լիազորությունները հավաստված են օրենքով սահմանված կարգով:

4. Սահմանադրության 168-րդ հոդվածի 11-րդ կետով նախատեսված գործերով Սահմանադրական դատարանում որպես գլխավոր դատախազի ներկայացուցիչ հանդես է գալիս նրա տեղակալը:

5. Յուրաքանչյուր կողմ Սահմանադրական դատարանում կարող է ունենալ ոչ ավելի, քան երեք ներկայացուցիչ:

Հոդված 60. Գործի վարույթը կարճելը

Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը՝

(1) գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր.

(2) եթե վիճարկվող իրավական ակտի կամ դրա դրույթի գործողությունը դադարել է դատաքննությունից առաջ կամ դրա ընթացքում, և այն չի կիրառվել.

(3) սույն օրենքի 75-րդ, 79-րդ, 80-րդ, 82-85-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում.

(4) սույն օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված այն դեպքերում, երբ կասեցման հիմք հանդիսացած հանգամանքները չեն վերացել գործի վարույթը կասեցնելու մասին աշխատակարգային որոշում ընդունելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, և գործի վարույթն այդ պայմաններում վերսկսելն անհնարին է:

Հոդված 68. Իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը Հանրապետության նախագահի, Կառավարության, պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի և Մարդու իրավունքների պաշտպանի դիմումների հիման վրա

1. Սույն հոդվածում նշված գործերով կարող է վիճարկվել Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ինչպես նորմատիվ , այնպես էլ անհատականբնույթ ունեցող իրավականակտերի սահմանադրականությունը, բացառությամբ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից դիմում ներկայացվելու դեպքերի:

2. Մարդու իրավունքների պաշտպանը կարող է վիճարկել միայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին:

3. Անհատական բնույթ ունեցող իրավական ակտերի սահմանադրականությունը կարող է վիճարկվել այդ ակտի ընդունման պահից եռամսյա ժամկետում:

4. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի վավերացման վերաբերյալ օրենքների սահմանադրականությունը կարող է վիճարկվել միայն տվյալ օրենքի ընդունման համար Սահմանադրությամբ նախատեսված պահանջների պահպանման տեսանկյունից:

5. Սույն հոդվածում նշված գործերով որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավվում է վիճարկվող ակտն ընդունած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը:

6. Սահմանադրության 204-րդ հոդվածով նախատեսված՝ քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված և հանրաքվեի միջոցով ընդունված օրենքների սահմանադրականության վիճարկման վերաբերյալ գործերով դատավարությանը պատասխանող չի ներգրավվում:

7. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործերը Սահմանադրական դատարանը քննում է գրավոր ընթացակարգով , բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործը Սահմանադրական դատարանի գնահատմամբ ձեռք է բերել հասարակական մեծ հնչեղություն, կամ դրա բանավոր դատաքննությունը կնպաստի գործի հանգամանքների առավել արդյունավետ բացահայտմանը:

8. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործերով Սահմանադրական դատարանը որոշում է ընդունում դիմումը մուտքագրելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո: Սահմանադրական դատարանի պատճառաբանված աշխատակարգային որոշմամբ գործի քննության ժամկետը կարող է երկարաձգվել, բայց ոչ ավելի, քան երեք ամսով:

9. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործերով Սահմանադրական դատարանը կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը.

   (1) վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին.

   (2) վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին.

   (3) վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին.

   (4) վիճարկվող նորմատիվ իրավական ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող ճանաչելու և նորմատիվ իրավական ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ սահմանելու մասին:

10. Որևէ նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանը պարզում է նաև այդ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների սահմանադրականությունը: Հավաստիանալով վիճարկվող դրույթների հետ փոխկապակցված տվյալ նորմատիվ իրավական ակտի այլ դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու մեջ՝ Սահմանադրական դատարանը կարող է Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչել նաև այդ դրույթները:

11. Վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում այն իրավական ուժը կորցնում է Սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից, բացառությամբ սույն հոդվածի 13-րդ և 15-րդ մասերով

սահմանված դեպքերի: Այդ ակտերի վրա հիմնված՝ Սահմանադրական դատարանի որոշման ընդունմանը նախորդող ժամանակահատվածում կատարված վարչական կամ դատական ակտերը վերանայման ենթակա չեն, իսկ չկատարված վարչական և դատական ակտերի կատարումը Սահմանադրական դատարանի որոշումը հրապարակելուց հետո անհապաղ դադարեցվում է իրավասու վարչական մարմնի կամ դատարանի որոշմամբ:

12. Անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտի կատարումն ապահոված այլ նորմատիվ իրավական ակտերի համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ վիճարկվող ակտի ուժը կորցնելու հետ միաժամանակ:

13. Սույն հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետում նշված որոշումը Սահմանադրական դատարանն իրավասու է տարածելու նաև այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա, եթե այդպիսի որոշում չընդունելը կարող է հանրության կամ պետության համար առաջացնել ծանր հետևանքներ:

14. Սույն հոդվածի 13-րդ մասում նշված դեպքում Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտի, ինչպես նաև այդ ակտի կատարումն ապահոված այլ նորմատիվ իրավական ակտերի վրա հիմնված՝ Սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող երեք տարիների ընթացքում կատարված վարչական կամ դատական ակտերը կողմի դիմումի հիման վրա ենթակա են վերանայման վարչական կամ դատական ակտն ընդունած մարմնի կողմից՝ օրենքով սահմանված կարգով:

15. Քրեական կամ վարչական պատասխանատվություն սահմանող օրենքի վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում իրավական ուժը կորցնում է իր ուժի մեջ մտնելու պահից, իսկ դրա կիրառման վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող ժամանակահատվածում ընդունված դատական, իսկ կողմի դիմումի հիման վրա՝ նաև վարչական ակտերը ենթակա են վերանայման օրենքով սահմանված կարգով:

16. Սահմանադրական դատարանը սույն հոդվածի 9-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված որոշումները սույն օրենքով սահմանված կարգով ներկայացված համապատասխան դիմումի հիման վրա կարող է վերանայել, եթե՝

    (1) փոփոխվել է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթը, կամ

    (2) ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված՝ Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել Սահմանադրական դատարանի այլ որոշում, և տվյալ հարցն ունի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն:

17. Սույն հոդվածի 16-րդ մասում նշված հիմքով գործը քննության ընդունելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումն ընդունվում է Սահմանադրական դատարանի դատավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

18. Սույն հոդվածի 16-րդ մասում նշված գործերի քննությունը չի կարող մերժվել սույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով , եթե առկա են Սահմանադրական դատարանի որոշումը վերանայելու՝ սույն հոդվածի 16-րդ մասով նախատեսված հիմքերը:

19. Եթե Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կամ դրա որևէ դրույթի՝ Սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ պետության կամ հանրության համար, որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմատիվ իրավական ակտի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ապա Սահմանադրական դատարանը, տվյալ ակտը ճանաչելով Սահմանադրությանը հակասող , իր որոշմամբ հետաձգում է այդ ակտի իրավական ուժը կորցնելը:

20. Նորմատիվ իրավական ակտի ուժը կորցնելու հետաձգումը պետք է համարժեք լինի այն ժամանակահատվածին, որի ընթացքում հնարավոր և անհրաժեշտ է ձեռնարկել սույն հոդվածի 19-րդ մասում նշված հետևանքները կանխելուն ուղղված միջոցները:

Հոդված 69. Կոնկրետ գործերով վերջնական դատական ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա[106]

1. Սույն հոդվածում նշված գործերով դիմում (այսուհետ՝ անհատական դիմում) կարող է ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով , երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

2. Անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

106 69-րդ հոդվածի 11-րդ մասն այն մասով , որ չի նախատեսում այն անձանց նկատմամբ կայացված վերջնական դատական ակտերի՝ նոր հանգամանքի հիմքով վերանայում, որոնք դատական պաշտպանության միջոցներն սպառել են Սահմանադրական դատարանում այլ անձի դիմումը մուտքագրվելուց հետո, սակայն նրանց նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ անձի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման հրապարակման օրվա դրությամբ լրացած չի եղել նրանց կողմից Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու համար սահմանված վեցամսյա ժամկետը, ճանաչվել է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին հակասող և անվավեր 29.03.2022 **ՍԴՈ-1645 որոշմամբ**

3. Անհատական դիմումները կարող է Սահմանադրական դատարան ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելուց՝ վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո:

4. Անհատական դիմումներով գործը քննության ընդունելու կամ գործի քննությունը մերժելու վերաբերյալ որոշումը, բացառությամբ սույն օրենքի 68-րդ հոդվածի 16-րդ մասով նախատեսված դեպքերի, ընդունվում է Սահմանադրական դատարանի երեք դատավորի կազմով՝ Սահմանադրական դատարանի անունից:

5. Անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, կամ դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները, կամ լրացել է Սահմանադրական դատարան դիմելու համար սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վեցամսյա ժամկետը:

6. Անհատական դիմումներով գործի քննությունը մերժելու մասին սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգով ընդունված որոշումը պետք է լինի պատճառաբանված: Այն պետք է ընդունվի միաձայն, հակառակ դեպքում գործը քննության ընդունելու հարցը Սահմանադրական դատարանը վերստին քննում և լուծում է ամբողջ կազմով , իսկ այդ հարցով որոշումն ընդունվում է անհատական դիմումը մուտքագրելու օրվանից ոչ ուշ, քան երեք ամիս հետո:

7. Սույն հոդվածում նշված գործերով որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավվում է համապատասխան նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմինը, բացառությամբ սույն օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքի:

8. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարանը որոշում է ընդունում դիմումը մուտքագրելուց ոչ ուշ, քան երեք ամիս հետո: Սահմանադրական դատարանի պատճառաբանված աշխատակարգային որոշմամբ գործի քննության ժամկետը կարող է երկարաձգվել, բայց ոչ ավելի, քան երեք ամսով:

9. Անհատական դիմումների ընդունման և նախնական ուսումնասիրության կարգը սահմանվում է Սահմանադրական դատարանի աշխատակարգով:

10. Սույն հոդվածում նշված գործերով՝ նորմատիվ իրավական ակտի՝ դիմողի նկատմամբ կիրառված դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը, այդ դրույթն իր մեկնաբանությամբ ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող , միաժամանակ գտել է, որ այն նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով:

11. Սույն հոդվածի 10-րդ մասը տարածվում է նաև այն անձանց վրա, որոնք Սահմանադրական դատարանում դիմումը մուտքագրվելու օրվա դրությամբ դեռևս պահպանել էին նույն հարցով Սահմանադրական դատարան դիմելու

իրենց իրավունքը, սակայն չէին դիմել Սահմանադրական դատարան:

12. Սահմանադրական դատարան դիմելու իրավունքի պահպանված լինելու հարցը լուծելիս սույն հոդվածի 11-րդ մասում նշված անձանց նկատմամբ սույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերը չեն կիրառվում:

13. Սույն հոդվածում նշված գործերին առնչվող բոլոր այլ հանգամանքների քննության և այդ գործերով որոշումներ ընդունելու ժամանակ կիրառվում են սույն օրենքի 68-րդ հոդվածի 7-20-րդ մասերի կանոնները:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ[107]

ԳԼՈՒԽ 3 . ԴԻՄՈՒՄԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԱՐԳԸ

... 27. Դիմումի նախնական ուսումնասիրումը պետք է ավարտվի դիմումը մուտքագրելուց հետո ոչ ուշ, քան հետևյալ ժամկետներում...
2) «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, 71-րդ և 72-րդ հոդվածների 1-ին և 2-րդ մասերում, 73-րդ հոդվածի 1-ին մասում, ինչպես նաև 75-րդ հոդվածի 1-ին մասում նշված գործերով դիմումներինը՝ 20-օրյա ժամկետում:

ԳԼՈՒԽ 8. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ՆԱԽՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ, ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

72. Սահմանադրական դատարան ներկայացված անհատական դիմումները գրանցվում են աշխատակազմի իրավասու ստորաբաժանման անհատական դիմումների գրանցման մատյանում:

73. Անհատական դիմումների գրանցամատյանի վարման կարգը սահմանում է աշխատակազմի ղեկավարը:

74. Էլեկտրոնային եղանակով ներկայացված անհատական դիմումները գրանցվում են աշխատակազմի իրավասու ստորաբաժանման անհատական դիմումների գրանցման էլեկտրոնային մատյանում:

75. Գրանցված անհատական դիմումները ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում ներկայացվում են աշխատակազմի ղեկավարին:

76. Աշխատակազմի իրավասու ստորաբաժանումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված եռօրյա ժամկետը լրանալուց առնվազն 1 օր առաջ աշխատակազմի ղեկավարին տեղեկանք է ներկայացնում անհատական դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների պահանջներին համապատասխանության վերաբերյալ:

107 Ընդունվել է 2018 թվականի հուլիսի 9-ի ՍԴԱՈ-1-Ն որոշմամբ

77. Տեղեկանքն ստանալուց ոչ ուշ, քան 1 օր հետո աշխատակազմի ղեկավարը լուծում է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների պահանջներին անհատական դիմումի համապատասխանեցման մասին դիմողին տեղեկացնելու հարցը:

78. Աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ աշխատակազմի իրավասու ստորաբաժանումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված եռօրյա ժամկետում դիմողին տեղեկացնում է դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտության մասին՝ նշելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների այն պահանջները, որոնք պետք է ապահովի դիմողը:

79. Անհատական դիմումը՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների պահանջներին համապատասխանեցնելն ապահովում է դիմողը՝ այդ մասին տեղեկացվելուց հետո՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում:

80. Դիմումում թույլ տրված սխալները վերացնելու և այն սահմանված ժամկետում վերստին ներկայացվելու դեպքում դիմումն ընդունված է համարվում սկզբնական ներկայացման օրը:

81. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացված անհատական դիմումն աշխատակազմի իրավասու ստորաբաժանման կողմից հետ է ուղարկվում դիմողին՝ աշխատակազմի ղեկավարի գրությամբ:

82. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետի պահպանմամբ վերստին ներկայացված դիմումը գրանցվում է աշխատակազմի իրավասու ստորաբաժանման անհատական դիմումների գրանցման մատյանում:

83. Դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտության կամ այն վերադարձնելու մասին դիմողը տեղեկացվում է էլեկտրոնային (հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե) կամ փոստային կապի միջոցներով:

84. Դիմողը համարվում է դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների պահանջներին համապատասխանեցման անհրաժեշտության կամ այն վերադարձնելու մասին տեղեկացված՝ էլեկտրոնային կամ փոստային կապի համապատասխան միջոցով ծանուցվելու պահից:

85. Անհատական դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտության բացակայության կամ համապատասխանեցման ուղարկված անհատական դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի

24-րդ և 25-րդ հոդվածների պահանջներին համապատասխանեցման կամ վերադարձված անհատական դիմումի վերաբերյալ բողոքարկման արդյունքում դատական կազմի կողմից դիմումն ընդունելու մասին որոշում ընդունվելու դեպքում անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունն իրականացնում է սույն գլխով սահմանված կարգով ձևավորված դատական կազմը:

86. Սույն գլխով սահմանված կարգով ձևավորված դատական կազմերը քննում են նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով ներկայացված բողոքները:

87. **(ուժը կորցրած է ճանաչվել 28 փետրվարի 2020 թվականի ՍԴԱՈ-47 որոշմամբ)**

88. Անհատական դիմումներով դատական կազմը ձևավորվում է վիճակահանությամբ:

89. Վիճակահանությամբ դատական կազմի ձևավորման հարցը լուծելու նպատակով Սահմանադրական դատարանի նախագահը հրավիրում է աշխատակարգային նիստ:

90. Վիճակահանության կազմակերպման նպատակով Սահմանադրական դատարանի դատավորների թվին համապատասխան, բացառությամբ Սահմանադրական դատարանի նախագահի, պատրաստվում են միմյանցից չտարբերվող թերթիկներ: Թերթիկների վրա նշվում են գործող դատավորների թվից մեկով պակաս աճող թվեր՝ սկսած «1» թվից:

91. Թերթիկները քառապատիկ ծալվում են այնպես, որ չտարբերվեն միմյանցից և գցվում վիճակահանության համար նախատեսված արկղի մեջ:

92. Վիճակահանությանը մասնակցում են բոլոր դատավորները, բացառությամբ Սահմանադրական դատարանի նախագահի:

93. Վիճակահանության արդյունքում ձևավորվում է դատական կազմ, որի մեջ ընդգրկվում են այն երեք դատավորները, որոնց վիճակահանության արդյունքում բաժին են ընկել համապատասխանաբար «1», «2» և «3» թվերը պարունակող թերթիկները: Ընդ որում, դատական առաջին կազմի այն դատավորը, որին բաժին է ընկել «1» թիվը՝ պաշտոնավարում է 1 ամիս, «2»-ը՝ երկու ամիս, «3»-ը՝ երեք ամիս:

94. Դատական կազմը վիճակահանության հիման վրա հաջորդաբար համալրվում է՝ վիճակահանության արդյունքում բաժին ընկած թերթիկների վրա նշված թվերի հերթականությանը համապատասխան:

95. Դատական կազմը առաջինը նախագահում է այն դատավորը, որին վիճակահանության արդյունքում բաժին է ընկել «1» թիվը պարունակող թերթիկը, այնուհետև դատական կազմը դատավորները նախագահում են՝ ըստ վիճակահանության արդյունքում բաժին ընկած թերթիկների վրա նշված թվերի հերթականության:

96. Դատական կազմի նախագահողի բացակայության դեպքում նրան փոխարինում է դատական կազմի տարիքով ավագ դատավորը:

97. Սահմանադրական դատարանի նախագահը սահմանում է դատական կազմի փոփոխության և դատական կազմը նախագահելու ժամանակացույց:

98. Մինչև դատական կազմի նիստը աշխատակազմի իրավասու ստորաբաժանումը դիմումը քննության ընդունելու հարցի վերաբերյալ իր եզրակացությունը ներկայացնում է դատական կազմին:
(փոփ. 28 փետրվարի 2020 թվականի ՍԴԱՈ-47 որոշմամբ)

99. Դատական կազմի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են դատական կազմի բոլոր երեք դատավորները: Դատական կազմի նիստում քվորումի բացակայության դեպքում դատական կազմի նախագահողը, իսկ վերջինիս բացակայության դեպքում ՝ նրան փոխարինող դատավորն այդ մասին անհապաղ տեղեկացնում է Սահմանադրական դատարանի նախագահին, որը կա՛մ համապատասխան դատավորին հետ է կանչում արձակուրդից (եթե բացակայությունը կապված է արձակուրդում գտնվելու հետ), կա՛մ տեղեկացվելուց հետո դատական կազմում չընդգրկված դատավորներից նշանակում է փոխարինող:
(փոփ. 28 փետրվարի 2020 թվականի ՍԴԱՈ-47 որոշմամբ)

100. Դատական կազմի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ դատական կազմի նախագահողի կողմից՝ առնվազն երկու օր առաջ տեղյակ պահելով դատական կազմի դատավորներին:

101. Դատական կազմի նախագահողը նախապատրաստում, հրավիրում և նախագահում է դատական կազմի նիստերը, դատական կազմին է ներկայացնում դատական կազմի նիստում քննարկման ենթակա հարցերը, Սահմանադրական դատարանի նախագահին անհապաղ տեղեկացնում է դատական կազմում ընդգրկված դատավորներից որևէ մեկի՝ դատական կազմի նիստից բացակայության մասին՝ նրան փոխարինողի հարցը լուծելու նպատակով:

102. Անհրաժեշտության դեպքում դատական կազմի նիստերին նախագահողը կարող է հրավիրել դիմողին (վերջինիս ներկայացուցչին), աշխատակազմի աշխատակիցներին:

103. Եթե դատական կազմի նախագահողը գտնում է, որ դատական կազմի նիստում կոնկրետ անհատական դիմումի նախնական ուսումնասիրության անհրաժեշտություն չկա, ապա տվյալ անհատական դիմումի վերաբերյալ կազմակերպվում է գրավոր քվեարկություն, եթե դատական կազմի դատավորներից որևէ մեկը չի առարկում գրավոր քվեարկության դեմ:

104. Գրավոր քվեարկությունն իրականացվում է ընդհանուր էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միջոցով:

105. Գրավոր քվեարկություն անցկացնելու նպատակով դատական կազմի նախագահողը դատական կազմի դատավորներին տրամադրում է քվեարկության դրվող որոշման նախագիծը:

106. Գրավոր քվեարկությանը դատական կազմի դատավորների մասնակցությունը պարտադիր է:

107. Գրավոր քվեարկության վերաբերյալ դատական կազմի դատավորներն

իրենց դիրքորոշումը ներկայացնում են նախագահողի կողմից նշված ժամկետում: Սահմանված ժամկետում դատական կազմի դատավորի կողմից դիրքորոշում չներկայացվելու դեպքում համարվում է, որ նա քվեարկել է կողմ: **(փոփ. 28 փետրվարի 2020 թվականի ՍԴԱՈ-47 որոշմամբ)**

108. Դատական կազմի նախագահողն ամփոփում է քվեարկության արդյունքները և ընդունված որոշումը ներկայացնում աշխատակազմի ղեկավարին՝ դիմողին ընդունված որոշման մասին ծանուցելու նպատակով:

109. Անհատական դիմումով գործը քննության ընդունելու կամ գործի քննությունը մերժելու վերաբերյալ որոշումը դատական կազմն ընդունում է Սահմանադրական դատարանի անունից՝ միաձայն:

110. Դատական կազմը կարող է ընդունել հետևյալ որոշումներից որևէ մեկը.

(1) *անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին,*

(2) *անհատական դիմումով գործի քննությունը մերժելու մասին,*

(3) *անհատական դիմումով գործը մասամբ քննության ընդունելու և գործի քննությունը մասամբ մերժելու մասին:*

111. Դատական կազմի կողմից ընդունված որոշումներն ստորագրում են դատական կազմի բոլոր դատավորները:

112. Անհատական դիմումով գործը քննության ընդունելու կամ գործի քննությունը մերժելու հարցով դատական կազմում միաձայնության բացակայության դեպքում դատական կազմի նախագահողը քվեարկության արդյունքները ներկայացնում է Սահմանադրական դատարանի նախագահին, որը քվեարկության արդյունքները ներկայացնելու օրվանից հետո՝ ողջամիտ ժամկետում, հրավիրում է Սահմանադրական դատարանի աշխատակարգային նիստ՝ անհատական դիմումով գործը քննության ընդունելու կամ գործի քննությունը մերժելու հարցը վերստին քննարկելու և լուծելու համար: **(փոփ. 28 փետրվարի 2020 թվականի ՍԴԱՈ-47 որոշմամբ)**

113. Դատական կազմի կամ Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումով գործի քննությունը մերժելու մասին որոշում ընդունելուց հետո դիմողի՝ նույն հարցով Սահմանադրական դատարան վերստին դիմելու դեպքում, եթե չեն վերացվել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքերը, ապա նրան աշխատակազմի ղեկավարի գրությամբ վերստին ուղարկվում է համապատասխանաբար դատական կազմի կամ Սահմանադրական դատարանի՝ նույն հարցով ընդունված որոշման պատճենը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքը անհատական դիմումի ընդունելիության վերաբերյալ

1. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

«... Այն երկրներում, որտեղ առկա է անհատական դիմումների ինստիտուտը, անձի՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքի նման բովանդակությունն ու շրջանակները պայմանավորված են կոնկրետ սահմանադրական վերահսկողության տրամաբանությամբ, նպատակով և առանձնահատկություններով: Սահմանադրական «կոնկրետ վերահսկողության» նպատակն է ապահովել սահմանադրական արդարադատություն իրականացնելու իրավազորությամբ չօժտված՝ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների կողմից կոնկրետ գործերի լուծումը Սահմանադրությանը համապատասխանող օրենքների հիման վրա և իրականացնել անձի սահմանադրական իրավունքների պաշտպանությունը, երբ նրա իրավունքները խախտվել են արդարադատության իրականացման գործընթացում հակասահմանադրական օրենսդրական նորմի կիրառման արդյունքում: Ըստ այդմ, այդ դատարաններում դատավարության հիմնական սուբյեկտներին՝ դատարաններին և դատավարության կողմերին է հնարավորություն ընձեռվում սահմանադրական դատարան դիմելու միջոցով ապահովել այդ նպատակի իրացումը: Նման կերպով ապահովվում է նաև արդարադատության ողջ համակարգի գործառնական դինամիկ հավասարակշռությունը: Բացի դրանից, կոնկրետ սահմանադրական վերահսկողության բնորոշ գծերին համահունչ՝ ՀՀ ներպետական օրենսդրությունը նախատեսել է շահագրգիռ անձի անհատական դիմումի հիման վրա ընդունված՝ սահմանադրական դատարանի որոշման արդյունքում տվյալ դիմողի առնչությամբ կայացված դատական ակտի վերանայման հնարավորությունը, ինչը լիարժեքություն և արդյունավետություն է հաղորդում սահմանադրական դատարանում անհատական դիմումի հիման վրա անձի սահմանադրական իրավունքների՝ որպես անմիջականորեն գործող իրավունքների, պաշտպանությանը: (2009թ. մարտի 17, ՍԴԱՈ-21)

2. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

«Սահմանադրական դատարանում դատական պաշտպանության իրավունքն անձն իրացնում է Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված կարգով՝ ելնելով նաև Սահմանադրական դատարանում գործերի քննության և լուծման առանձնահատկություններից: Միաժամանակ, դատական (այդ թվում՝ սահմանադրական-դատական) պաշտպանության իրավունքը, ինչպես նաև դրա իրացման՝ օրենքով նախատեսված ընթացակարգային կանոնները, ինքնանպատակ չեն և հայեցողաբար մեկնաբանվել չեն կարող , քանզի դրանց իրացումը ենթադրում է կոնկրետ իրավական (Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական

օրենքով նախատեսված) գործընթացներ, ինչը պայմանավորված է դրանց մասնակից սուբյեկտների փոխադարձ իրավունքներով ու պարտականություններով: Հետևաբար, դիմողը մինչև Սահմանադրական դատարան դիմելը պարտավորված է պահպանել այն պահանջները, որոնք նախատեսված են Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով:» (2020թ. նոյեմբերի 23, ՍԴԱՈ-215, 2020թ. մայիսի 27, ՍԴԴԿՈ-31)

«Սահմանադրական դատարանում դատական պաշտպանության իրավունքն անձն իրացնում է Սահմանադրության ինչպես 61 և 63-րդ հոդվածներով , այնպես էլ 169-րդ հոդվածով վերապահված իր իրավունքի շրջանակներում ՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված կարգով՝ ելնելով նաև Սահմանադրական դատարանում գործերի քննության և լուծման առանձնահատկություններից: Միաժամանակ, դատական պաշտպանության իրավունքը և դրա իրացման՝ օրենքով նախատեսված ընթացակարգային կանոնները հայեցողաբար մեկնաբանվել չեն կարող , քանի որ դրանց իրացումը ենթադրում է կոնկրետ իրավական գործընթացներ և պայմանավորված է դրանց մասնակից սուբյեկտների փոխադարձ իրավունքներով ու պարտականություններով: Այս համատեքստում սահմանադրական արդարադատություն հայցող ֆիզիկական և իրավաբանական անձինք մինչև Սահմանադրական դատարան դիմելն օրենսդրական պարտականություն են կրում պահպանելու այն պահանջները, որոնք նախատեսված են Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով:» (2022թ. օգոստոսի 17, ՍԴԴԿՈ-43)

3. ԴԻՄՈՒՄԱՏՈՒՆԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ

3.1 Ֆիզիկական և իրավաբանական անձինք

«Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետում, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ նորմերում բովանդակված դրույթներն անհատական դիմումների առնչությամբ նախատեսում են հետևյալ նորմատիվ հիմնական կանոնները.
- սահմանադրական դատարան անհատական դիմումով կարող են դիմել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք (այսուհետ՝ անձ),...»: (2009թ. մարտի 17, ՍԴԱՈ-21)

3.2 Մահացած անձանց անունից անհատական դիմում ներկայացնելու հնարավորությունը[108]

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումներում տարբերակվում է **«անմիջական զոհ»** հասկացությունը, երբ համապատասխան գանգատ ներկայացնելու համար դիմումատուն պետք է ապացուցի, որ այն միջոցա-

108 Պաշտոնական բաց աղբյուրների ուսումնասիրությամբ այս հարցի վերաբերյալ ՍԴ որոշում չի հայտնաբերվել: Սահմանադրական դատարանը 2024թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-1724 որոշմամբ անդրադարձել է մահացած անձի դատական իրավահաջորդության ինստիտուտի էությանը՝ ՄԻԵԴ վճռի հիման դատական ակտի վերանայման իրավունքի համատեքստում

ռումը, որի մասին բողոքել է, իր վրա «անմիջական ներգործություն» է ունեցել[109], և **«անուղղակի զոհ» հասկացությունը,** երբ ենթադրյալ խախտման զոհը մահացել է, և դատարանը հնարավոր է համարել նրա մտերիմ ազգական հանդիսացող անձի կողմից գանգատի ներկայացումը ՄԻԵԴ[110]: Սա պայմանավորված է ենթադրյալ խախտման բնույթով՝ դեպքի առանձնահատկությամբ և Կոնվենցիայի համակարգի հիմնարար դրույթների արդյունավետ կիրառման նկատառումներով[111]:

3.3 Այլոց իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունքը (Actio populiaris)

«...Նման պայմաններում Սահմանադրական դատարանի գնահատմամբ դիմողի բարձրացրած հարցը վերածվում է վերացական սահմանադրական վերահսկողության շրջանակներում քննության ենթակա հարցի: Այլ կերպ՝ դիմողը փաստացի կատարել է վերացական սահմանադրական վերահսկողությանը բնորոշ հարցադրումներ՝ չհանդիսանալով վերացական սահմանադրական վերահսկողության սուբյեկտ:» (2021թ. հոկտեմբերի 26, ՍԴԱՈ-211)

«Տվյալ դեպքում դիմողի փաստարկներից հետևում է, որ դիմողը, ըստ էության, բարձրացնում է ոչ թե իր սուբյեկտիվ իրավունքի, այլ օբյեկտիվ ընտրական իրավունքի ենթադրյալ խախտման հարց: Սահմանադրական դատարանի դատական կազմը փաստում է, որ վիճարկվող դրույթների վերաբերյալ դիմողի կողմից ներկայացված դատողություններից հնարավոր չէ ողջամիտ պատկերացում կազմել դիմողի սուբյեկտիվ իրավունքների ենթադրյալ խախտման փաստի, ինչպես նաև վիճարկվող դրույթների հակասահմանադրականության և դիմողի՝ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների խախտման միջև պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ: Այլ կերպ ասած՝ դիմողը չի ներկայացրել բավարար փաստարկներ և իրավանորմերի համադրված վերլուծությամբ չի փաստել, թե վիճարկվող նորմերով իր սահմանադրական սուբյեկտիվ որ իրավունքն է խախտվել:» (2021թ. օգոստոսի 6, ՍԴԴԿՈ-49)

3.4 Նոտարի՝ սահմանադրական դատարան դիմելու հարցը

«Սահմանադրական դատարանը գտել է, որ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի սահմանադրաիրավական իմաստով «յուրաքանչյուր ոք» հասկացություններըհոհամապատասխանֆիզիկականկամիրավաբանականանձանց դիտարկելիս սահմանադիրը նկատի չի ունեցել հանրային իրավական կարգավիճակ ունեցող սուբյեկտների՝ հանրային գործառույթներ իրականացնելու համատեքստում ծագող հարցերի՝ Սահմանադրական դատարանում քննության առարկա դարձնելու իրավունքը՝ հաշվի առնելով , որ այս կապակցությամբ սահմանադիրը յուրաքանչյուրի սահմանադրական արդարադատություն հայցելու իրավունքը պայմանավորել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքների և

109 Tănase ընդդեմ Մոլդովայի (ՄՊ), § 104, Burden ընդդեմ Միացյալ Թագավորությունների (ՄՊ), § 33

110 Varnava and Others ընդդեմ Թուրքիայի (ՄՊ), § 112

111 Fairfield ընդդեմ Միացյալ Թագավորությունների որոշում

ազատությունների խախտմամբ՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:» (2023թ. հուլիսի 7, ՍԴԱՈ-80)

4. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԱՌԱՐԿԱՆ

4.1 Սահմանադրական դատարանի մանդատը կոնկրետ վերահսկողության իրականացնելիս

«Սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատություն իրականացնող սահմանադրական մարմին է, որն ապահովում է Սահմանադրության գերակայությունը նորմատիվ իրավական ակտերի (դրանց առանձին դրույթների) սահմանադրականության ստուգման (սահմանադրական-դատական վերահսկողություն) միջոցով:

Ըստ այդմ՝ Սահմանադրական դատարանը հանդես է գալիս որպես իրավունքի դատարան, որը քննության է առնում ոչ թե փաստերի հիմնավորվածության կամ դատական ակտով նորմատիվ իրավական ակտի (դրա առանձին դրույթի) կիրառման իրավաչափության, այլ նորմատիվ իրավական ակտի (դրա առանձին դրույթի) սահմանադրականության հարցեր:

Ընդ որում՝ իր նշյալ գործառույթն իրականացնելիս Սահմանադրական դատարանն ամենևին հանդես չի գալիս որպես ընդհանուր կամ մասնագիտացված դատարանների վերադաս դատական ատյան և իր իրավասության ներքո գտնվող գործերը չի քննում ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանների դատական ակտերի դեմ բերված բողոքի քննության կարգով: Փոխարենը՝ Սահմանադրական դատարանն իր իրավասության շրջանակներում գործը քննում է Սահմանադրությամբ կանխորոշված լիազորությունների շրջանակներում և Սահմանադրական օրենքով սահմանված դատավարական առանձնահատուկ կարգով:

Վերոնշյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը կարևոր է համարում ընդգծել դիմումի բովանդակությանն առաջադրվող օրենսդրական պահանջների և Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակների միջև նորմատիվ և պատճառահետևանքային կապի ամրագրվածությունը, որը դրսևորվում է Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ դիմումում նորմատիվ իրավական ակտի համապատասխան դրույթի վիճարկման պահանջով: Վերջինս ակնհայտորեն տարածվում է նաև դիմումի առարկայի, այն է՝ Սահմանադրական դատարանին ուղղված պահանջի վրա, որը պետք է համապատասխանի Սահմանադրական դատարանի լիազորություններին՝ հաշվի առնելով անհատական դիմումի քննության առանձնահատկությունները:» (2025թ. հունիսի 26, ՍԴԴԿՈ-29)

4.2 «Նորմատիվ իրավական ակտ» հասկացությունը

«Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում կիրառված «նորմատիվ իրավական ակտի» սահմանադրական դրույթն իր բովանդակության մեջ ներառում է սահմանված կարգով ընդունված, հրապարակված, ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտերը: Իսկ այն իրավական ակտերը, որոնք մինչև հրապարակվելը և ուժի մեջ մտնելը կարող են վիճարկվել Սահմանադրական դատարանում, և սուբյեկտները, որոնք կարող են նման ակտերը վիճարկել Սահմանադրական դատարանում, հստակ ամրագրված են Սահմանադրությամբ: Հետևաբար՝ դիմողի կողմից ներկայացված դիմումով փորձ է արվում վիճարկել հրաման, որը Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի իմաստով չի կարող համարվել նորմատիվ իրավական ակտ: Սահմանադրության համապատասխան նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը մինչև հրապարակվելը և ուժի մեջ մտնելը չեն կարող վիճարկվել Սահմանադրական դատարանում: Այսինքն՝ հրապարակված և ուժի մեջ չմտած ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության գնահատումը ենթակա չէ Սահմանադրական դատարանին»: (2020թ. մայիսի 7, ՍԴԴԿՈ-25)

4.3 Անհատական իրավական ակտերի վիճարկման հարցը

«Գլխավոր դատախազի քննության առարկա հրամանը ունի ժամանակավոր բնույթ, նախատեսված է մեկանգամյա կիրառման համար, իրավական նորմ չի պարունակում և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձանց, հետևաբար, այն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ չէ և ենթակա չէ քննության Սահմանադրական դատարանում»: (2020թ. փետրվարի 7, ՍԴԴԿՈ-5)

«Վերոնշյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը կարևոր է համարում ընդգծել դիմումի բովանդակությանն առաջադրվող օրենսդրական պահանջների և Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակների միջև նորմատիվ և պատճառահետևանքային կապի ամրագրվածությունը, որը դրսևորվում է Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ դիմումում նորմատիվ իրավական ակտի համապատասխան դրույթի վիճարկման պահանջով: Վերջինս ակնհայտորեն տարածվում է նաև դիմումի առարկայի, այն է՝ Սահմանադրական դատարանին ուղղված պահանջի վրա, որը պետք է համապատասխանի Սահմանադրական դատարանի լիազորություններին՝ հաշվի առնելով անհատական դիմումի քննության առանձնահատկությունները: Տվյալ պարագայում դիմումի խնդրամասում Սահմանադրական դատարանից պահանջվել է «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վ. Սիսակյանի կողմից 05.04.2023թ-ին կայացված՝ Նելի Օխանյանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու և աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին» թիվ 70-Ա հրամանը (...) ճանաչել ՀՀ սահմանադրության 3,5,6,61-րդ հոդվածի 1-ին, 63, 82 հոդվածներին հակասող և անվավեր»: Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ Դիմողի կողմից Սահմանադրական դատարանին ուղղված նշյալ պահանջը

չի համապատասխանում Սահմանադրական դատարանի լիազորություններին, դուրս է Սահմանադրական դատարանի սահմանադրական իրավասությունից և, հետևաբար՝ Սահմանադրական դատարանի կողմից քննության առնվել չի կարող , քանի որ Հրամանը նորմատիվ իրավական ակտ չէ, հետևապես՝ սահմանադրական դատավարության կարգով վերանայման ենթակա չէ»: (2025թ. հունիսի 26, ՍԴԴԿՈ-30)

4.4 Դատական ակտի վիճարկման հարցը

«Վերոնշյալ իրավադրույթների համադրված վերլուծությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատություն իրականացնող սահմանադրական մարմին է, որն ապահովում է Սահմանադրության գերակայությունը նորմատիվ իրավական ակտերի (դրանց առանձին դրույթների) սահմանադրականության ստուգման (սահմանադրական-դատական վերահսկողություն) միջոցով: Ըստ այդմ՝ Սահմանադրական դատարանը հանդես է գալիս որպես իրավունքի դատարան, որը քննության է առնում ոչ թե փաստերի հիմնավորվածության կամ դատական ակտով նորմատիվ իրավական ակտի (դրա առանձին դրույթի) կիրառման իրավաչափության, այլ նորմատիվ իրավական ակտի (դրա առանձին դրույթի) սահմանադրականության հարցեր: Ընդ որում՝ իր նշյալ գործառույթն իրականացնելիս Սահմանադրական դատարանն ամենևին հանդես չի գալիս որպես ընդհանուր կամ մասնագիտացված դատարանների վերադաս դատական ատյան և իր իրավասության ներքո գտնվող գործերը չի քննում ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանների դատական ակտերի դեմ բերված բողոքի քննության կարգով: Փոխարենը՝ Սահմանադրական դատարանն իր իրավասության շրջանակներում գործը քննում է Սահմանադրությամբ կանխորոշված լիազորությունների շրջանակներում և Սահմանադրական օրենքով սահմանված դատավարական առանձնահատուկ կարգով:» (2025թ. հունիսի 26, ՍԴԴԿՈ-30)

«Վերոգրյալից ելնելով՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են հանդիսանալ այն վեճերը, որոնց հիմքում ընկած են ոչ թե կոնկրետ գործի փաստական և/կամ իրավական հանգամանքների գնահատման, այլ վիճարկվող իրավանորմերի սահմանադրականության գնահատման հարցեր, մինչդեռ դիմումի հետազոտությունը թույլ է տալիս եզրակացնել , որ դրանում, ըստ էության, բարձրացվել են Վճռաբեկ դատարանի կողմից վիճարկվող նորմերի կիրառման իրավաչափության, Դիմողի նկատմամբ կայացված, վերջինիս համար անբարենպաստ ելքով դատական ակտի օրինականության հարցեր, որոնց քննությունը ենթադրում է Սահմանադրական դատարանի կողմից ոչ թե վիճարկվող դրույթների սահմանադրականության գնահատում, այլ դատական ակտի իրավաչափության ստուգում, ինչը դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության տիրույթից»: (2022թ. հունվարի 20, ՍԴԱՈ-14)

4.5 Կիրառման պահին գործող խմբագրությամբ իրավական նորմի վիճակումը

«ՀՀ սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի և «Սահմանադրական դատարանի

մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սահմանադրական դատարան ներկայացված դիմումում անձը կարող է վիճարկել միայն կոնկրետ գործով իր նկատմամբ կիրառված օրենքի սահմանադրականությունը: Նշված իրավակարգավորմանը համապատասխան դիմողը կարող է վիճարկել տվյալ օրինադրույթի տեքստն այն խմբագրությամբ, որն առկա է եղել իր նկատմամբ կիրառվելու պահին»: (2009թ. հուլիսի 21, ՍԴՈ-817)

4.6 Առարկայազուրկ դատական ակտով կիրառված նորմի վիճարկումը

«Ուսումնասիրելով դիմումը և կից փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն չի բավարարում «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ կետերի պահանջներին: Այսպես, դիմումում վկայակոչված դատական ակտերից հետևում է, որ դիմողի նկատմամբ 2018 թվականի հուլիսի 28-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ որոշում, որը Վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 27-ի որոշմամբ թողնվել է օրինական ուժի մեջ, իսկ Վերաքննիչ քրեական դատարանի այդ որոշման դեմ դիմողի ներկայացրած վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 8-ի որոշմամբ չի ընդունվել վարույթ: Դիմողը, սակայն, չի նշել այն մասին, որ ներկայում իր նկատմամբ կիրառվել է գրավը՝ որպես կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց, և այդ հիմքով իր նկատմամբ մեղադրանքի ենթադրյալ իրավաչափության հարցը կարող էր քննարկվել միայն այդ խափանման միջոցի համատեքստում, ընդ որում, ի տարբերություն կալանքի, գրավը չի ենթադրում անձնական ազատությունից զրկում, ուստի չի կարող դիտարկվել որպես անձնական ազատության հիմնական իրավունքին (Սահմանադրության 27-րդ հոդված) առավել ինտենսիվ միջամտության եղանակներից մեկը: Ուստի՝ գրավի կիրառման պայմաններում մեղադրանքի իրավաչափությանն աղերսվող կապը դիմողի կողմից չի հիմնավորվել, բացի դրանից, դիմողը՝ ի հիմնավորումն Սահմանադրական դատարան դիմելու իր իրավունքի, վկայակոչել է իր նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ դատական ակտերը, որոնք այլևս առարկայազուրկ են, քանի որ դիմողին կալանավորելու մասին որոշում կայացնելու ժամանակ նրա նկատմամբ կիրառվել է գրավ , հետևապես՝ նա փաստացի անազատության մեջ երբևէ չի գտնվել:» (2019թ. հունիսի 21, ՍԴԱՈ- 63)

4.7 Օրենսդրական բացի (իրավունքի բացի) վիճարկումը[112]

«Իրավակարգավորման նշված բացը, սակայն, պայմանավորված է ոչ թե ինքնին օրենսգրքի վիճարկվող դրույթներով , այլ դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտի ոչ ամբողջական իրավակարգավորմամբ, որի հաղթահարումը ՀՀ ազգային ժողովի իրավասության հարցն է: Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի

112 Սահմանադրական դատարանը օրենսդրական բացի վիճարկման հարցերին անդրադարձել է, ի թիվս այլոց, իր ՍԴՈ-864, ՍԴՈ-914, ՍԴՈ-922, ՍԴՈ-1020, ՍԴՈ-1056, ՍԴՈ-1143, ՍԴՈ-1476, 2018 թվականի դեկտեմբերի 4-ի ՍԴԱՈ-91, 2019թ. փետրվարի 22-ի ՍԴԱՈ-17 որոշումներում

իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում ՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել , որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, **եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք:»** (2010թ. փետրվարի 5, ՍԴՈ-864)

«Վերահաստատելով և զարգացնելով օրենսդրական բացի վերաբերյալ իր իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է. 1) օրենսդրական բացը Սահմանադրական դատարանի քննության առարկա կարող է դառնալ այն ժամանակ, երբ այն իրավակարգավորման թերությունն է, այլ ոչ թե իրավաստեղծ մարմնի, տվյալ դեպքում՝ օրենսդրի կամքը՝ ձեռնպահ մնալու որպես օրենսդրական բաց ընկալվող իրավական կարգավորումից. 2) ցանկացած թերի օրենսդրական կարգավորում չէ, որը որպես օրենսդրական բաց կարող է Սահմանադրական դատարանի քննության առարկա դառնալ, այլ միայն այնպիսի օրենսդրական բացը, որը հնարավոր չէ հաղթահարել այլ վերաբերելի իրավակարգավորումները մեկնաբանելու և կիրառելու միջոցով. 3) օրենսդրական բացը պետք է հանգեցրած լինի հակասական իրավակիրառ պրակտիկայի, որը հնարավոր չէ հաղթահարել կամ որը փաստացի չի հաղթահարվել սովորական դատարանների կողմից. 4) օրենսդրական բաց առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը. 5) այն դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»: (2019թ. սեպտեմբերի 4, ՍԴՈ-1476)

«Սակայն Սահմանադրական դատարանն անհատական դիմումներով գործերի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականության խնդրին, **եթե վիճարկվող նորմի (նորմերի) բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որի արդյունքում խախտվում է կամ կարող է**

խախտվել կոնկրետ հիմնական իրավունք: Մինչդեռ քննության առարկա դիմումում առկա չեն կոնկրետ հիմնական իրավունքին ուղղակի առնչվող իրավական այնպիսի հիմնավորումներ, որոնք հիմք կհանդիսանային դրանք Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված այս կամ այն իրավունքի խախտման համատեքստում դիտարկելու համար, հետևաբար, նաև Սահմանադրական դատարանում ՝ անհատական դիմումի շրջանակներում, գնահատման ենթակա լինել չեն կարող: Դա է անհատական դիմումների ընդունելիության առանցքային չափանիշներից մեկը»: (2019թ. փետրվարի 22, ՍԴԱՈ-17)

4.8 «Իրավակիրառ պրակտիկայում նորմին տրված մեկնաբանություն» հասկացությունը

«Վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականությունը որոշելիս կարևոր նշանակություն ունի վիճարկվող դրույթների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը՝ իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ, քանի որ իրավանորմի սահմանադրականությունը պայմանավորված է ոչ միայն նրանով , թե ինչպես է այն շարադրված իրավական ակտում, այլեւ նրանով , թե ինչպես է այն ընկալվում ու կիրառվում իրավակիրառ պրակտիկայում» (2011թ. հուլիսի 15, ՍԴՈ-984)

«Հաշվի առնելով , որ Դիմողը վիճարկվող բոլոր դրույթների (Կարգի 12-րդ կետի «ա» ենթակետի, 15, 16 և 17-րդ կետերի) սահմանադրականությունը դիտարկում է դրանց՝ իրավակիրառ պրակտիկայի կողմից տրված մեկնաբանության համատեքստում, Սահմանադրական դատարանը շեշտում է, որ դիմումը հիմնավորված համարելու համար անհրաժեշտ է, որ այն միաժամանակ համապատասխանի, ի թիվս այլնի, հետևյալ պահանջներին. - հստակ պարունակի իրավակիրառ պրակտիկայի կողմից նորմին տրված մեկնաբանությունը, այսինքն՝ իրավակիրառի դատողության, վերլուծության, եզրահանգման այն հատվածը, որը, Դիմողի կարծիքով , հանդիսանում է վիճարկվող նորմի մեկնաբանություն, - հիմնավոր փաստարկներ նախատեսի, որոնցով կմատնանշվի պատճառահետևանքային կապը՝ խախտված հիմնարար իրավունքի կամ ազատության և իրավակիրառ մեկնաբանության միջև, այսինքն՝ պարունակի հիմնավորումներ, թե իրավակիրառի մեկնաբանությունն ինչպես է ազդել հիմնարար իրավունքի կամ ազատության վրա և ինչպես է հանգեցրել դրա ոչ իրավաչափ սահմանափակման, խաթարման կամ այլ կերպ խախտման: Այդ առումով Սահմանադրական դատարանը փաստում է, որ Դիմողը չի հիմնավորել իր ենթադրյալ խախտված իրավունքների և իրավակիրառ պրակտիկայի կողմից վիճարկվող դրույթներին տրված մեկնաբանության միջև պատճառահետևանքային կապը:» (2022թ. հունվարի 20, ՍԴԱՈ-14)

«Կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակներում անձը կոնկրետ գործի շրջանակներում, սպառելով ներպետական դատական պաշտպանության միջոցները, կարող է դիմել Սահմանադրական դատարան, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է

Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Սահմանադրական այս դրույթի լույսի ներքո Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ ենթադրյալ հակասահմանադրական նորմի կիրառման և/կամ իրավակիրառ պրակտիկայում վերջինիս տրված մեկնաբանության արդյունքում անձի՝ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված այս կամ այն իրավունքի խախտումը պետք է կրի շարունակական բնույթ, և միայն սահմանադրական արդարադատության արդյունքում կայացված համապատասխան դատական ակտի հիման վրա անձը պետք է հետագայում հնարավորություն ունենա վերականգնելու իր խախտված իրավունքները: Հակառակ պարագայում, երբ անձը փորձում է իր իրավունքը վերականգնել այլ դատավարական ընթացակարգերի շրջանակներում, աղճատվում է այն նպատակը, որին միտված է կոնկրետ սահմանադրական վերահսկողությունը: Խնդրո առկա իրավիճակում Սահմանադրական դատարան դիմելով՝ դիմողը Սահմանադրական դատարանում ընդամենը բարձրացրել է վերացական վերահսկողության ենթակա հարց, քանի որ այլ ընթացակարգի շրջանակներում, արդեն իսկ իրացնելով դատարան դիմելու իր իրավունքը, փորձում է հասնել իր ենթադրյալ խախտված իրավունքների վերականգնմանը:» (2019թ. մարտի 29, ՍԴԴԿՈ-13)

4.9 «Նորմի կիրառման իրավաչափություն» հարցի առաջադրումը[113]

«Մասնավորապես, դիմողը սույն դիմումով , ըստ էության բարձրացնում է այն հարցը, թե իրավաչա՞փ է վերաքննիչ դատարանի կողմից վերոնշյալ որոշմամբ արտահայտած այն դիրքորոշումը, որ Ռուբեն Վարդազարյանին մեղսագրվող արարքը կապված չէ վերջինիս կողմից իր լիազորությունների իրականացման հետ, հետևաբար՝ վերջինիս նկատմամբ հարուցված քրեական հետապնդումն իր լիազորությունների իրականացման կապակցությամբ չէ և կարող է հարուցվել առանց Բարձրագույն դատական խորհրդի համաձայնության: Մինչդեռ Սահմանադրական դատարանը հարկ է համարում փաստել, որ այսպիսի հարցերի գնահատումը Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակներից դուրս է: Սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են ոչ թե կոնկրետ գործի փաստական և/կամ իրավական հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական նորմի տվյալ գործով կիրառման կամ չկիրառման հարցեր, այլ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության գնահատման հարցեր:... Ձևականորեն բարձրացնելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, դիմողը, ըստ էության, բարձրացնում է վերաքննիչ քրեական դատարանի որոշման օրինականության/դատարանի գործողությունների իրավաչափության հարցեր, իսկ այդպիսի դիմումները, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ենթակա են մերժման՝ որպես Սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»: (2022թ. հուլիսի 12, ՍԴԱՈ-126)

113 Նորմի կիրառման իրավաչափության վերաբերյալ Սահմանադրական դատարանը իրավական դիրքորոշումներ է արտահայտել իր՝ 2009 թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21, 2012թ. նոյեմբերի 13-ի ՍԴԱՈ-80, 2014թ. ապրիլի 8-ի ՍԴԱՈ-13, 2015թ. ապրիլի 7-ի ՍԴԱՈ-19, 2016թ. փետրվարի 5-ի ՍԴԴԿՈ/1-4, 2016թ. փետրվարի 18-ի ՍԴԴԿՈ/1-5, 2016թ. մարտի 21-ի ՍԴԴԿՈ/1-9, 2016թ. ապրիլի 2-ի ՍԴԴԿՈ/1-13, 2009թ. հուլիսի 21 -ի ՍԴՈ-817, 2011թ. նոյեմբերի 22-ի ՍԴՈ-998, 2011թ. մարտի 29-ի ՍԴՈ-946 և այլ որոշումներում:

4.10 Իրավական նորմերի մեկնաբանության պահանջ առաջադրելը

«Սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականության վերաբերյալ դիմումով ներկայացված հիմնավորումները, ելնելով նաև սույն գործում առկա նյութերի ուսումնասիրությունից, հանգեցնելու են Սահմանադրական դատարանի կողմից առավելապես ոչ սահմանադրական նորմերի բովանդակության մեկնաբանությանը՝ անկախ սահմանադրականության գնահատման հարցադրման հանգամանքից, որով Սահմանադրական դատարանը փաստացի կստանձնի կոնկրետ գործի փաստական և իրավական հանգամանքները գնահատող դատարանի գործառույթ, ինչի իրավասությունը, Սահմանադրության համաձայն՝ Սահմանադրական դատարանը չունի: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քննարկվող դեպքում, դիմողի կողմից մատնանշված խնդրի լուծումը գտնվում է ոչ թե Սահմանադրական դատարանի՝ վիճարկվող նորմերի սահմանադրականության գնահատման, սահմանադրական նորմերի վերջնական մեկնաբանության և կիրառման լիազորության տիրույթում, այլ դատարանների, քանի որ օրենքի կամ վերջինիս որևէ դրույթի իրավական բովանդակության բացահայտման և միատեսակ կիրառության ապահովման իրավազորությունը սահմանադրորեն վերապահված է եռաստիճան դատական համակարգին»: (2021թ. փետրվարի 26, ՍԴԱՈ-38)

«Տվյալ դեպքում վիճարկվող դրույթների սահմանադրականության վերաբերյալ դիմումով ներկայացված հիմնավորումները, ելնելով նաև սույն գործում առկա նյութերի ուսումնասիրությունից, հանգեցնելու են Սահմանադրական դատարանի կողմից առավելապես ոչ սահմանադրական նորմերի բովանդակության մեկնաբանությանը՝ անկախ սահմանադրականության գնահատման հարցադրման հանգամանքից, որով Սահմանադրական դատարանը փաստացի կստանձնի կոնկրետ գործի փաստական և իրավական հանգամանքները գնահատող կամ դատական ակտ վերանայող դատական ատյանի գործառույթ, ինչի իրավասությունը Սահմանադրական դատարանը չունի: Այլ կերպ՝ վիճարկվող դրույթների սահմանադրականության մասին դիմողի հիմնավորումներն ուղղակիորեն կապված չեն վիճարկվող դրույթների սահմանադրականության վերաբերյալ Սահմանադրական դատարանի հնարավոր որևէ իրավական դիրքորոշման հետ:» (2021թ. օգոստոսի 6, ՍԴԴԿՈ-49)

4.11 Սահմանադրական դատարանի որոշմամբ կիրառված նորմի վիճարկման հարցը

«Ելնելով վերոշարադրյալից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սահմանադրական դատարանի ակտերով , այդ թվում ՝ նաև դատական կազմի որոշումներով կիրառված օրենքը չի կարող լինել կոնկրետ սահմանադրական վերահսկողության օբյեկտ, հետևաբար, ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից անհատական դիմումի հիման վրա վիճարկման ենթակա չէ սահմանադրական դատարանի կողմից կիրառված օրենքի սահմանադրականությունը: Այս հանգամանքը բացատրվում է ինչպես սահմանադրական դատարանի սահմանադրական գործառույթով , այնպես էլ սահմանադրական դատավարության առանձնահատկություններով, մասնավորապես, «Սահմանադրական դատարանի

մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածում ամրագրված՝ գործի հանգամանքների ի պաշտոնե քննության սկզբունքով: Ըստ այդ սկզբունքի՝ սահմանադրական դատարանը գործի բոլոր հանգամանքները պարզում է ի պաշտոնե՝ չսահմանափակվելով սահմանադրական դատավարության մասնակիցների միջնորդություններով , առաջարկություններով , նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով: Սահմանադրական դատարանը՝ որպես սահմանադրական արդարադատության բացառիկ գործառույթով օժտված մարմին, ղեկավարվելով նշված դատավարական սկզբունքով , կոնկրետ գործի քննության ընթացքում կարող է խուսափել Սահմանադրությանը հակասող նորմի կիրառումից՝ կամ տվյալ նորմը Սահմանադրությանը համապատասխանող մեկնաբանությամբ կիրառելու միջոցով , կամ սահմանադրական դրույթների անմիջական կիրառման միջոցով:» (2009թ. մարտի 17, ՍԴԱՈ-21)

«...Դիմողի կողմից վիճարկվող դրույթները վերջինիս նկատմամբ կիրառվել են Սահմանադրական դատարանի 2025 թվականի ապրիլի 29-ի ՍԴԱՈ-69 աշխատակարգային որոշմամբ, որը, ինչպես արձանագրվել է Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ, վերանայման ենթակա չէ: Ընդ որում ՝ Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշման վերանայման ենթակա չլինելու պահանջը բխում է նաև Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի ընդհանուր տրամաբանությունից: Կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակներում կարևորվում են սահմանադրական և օրենսդրական այն պահանջները, որոնք որոշակիացնում են անհատական դիմումի թույլատրելի շրջանակները: Դրանց նախատեսումն ինքնանպատակ չէ և միտված է ապահովելու կոնկրետ վերահսկողության առաջ ծառացած խնդիրների լուծումը: Նույնաբնույթ իրավական դիրքորոշում Սահմանադրական դատարանն արտահայտել է նաև 2020 թվականի նոյեմբերի 23-ի ՍԴԱՈ-215 աշխատակարգային որոշմամբ: Հարկ է նաև արձանագրել , որ Սահմանադրական դատարանի որոշումներով , այդ թվում ՝ աշխատակարգային որոշումներով կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթը (դրույթները) (սույն պարագայում ՝ նաև դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացը) չի կարող լինել կոնկրետ սահմանադրական վերահսկողության առարկա: Հետևաբար՝ ֆիզիկական և/կամ իրավաբանական անձի կողմից ներկայացվող անհատական դիմումով վիճարկման ենթակա չէ Սահմանադրական դատարանի կողմից կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի (դրույթների) (սույն պարագայում ՝ նաև դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) սահմանադրականությունը:» (2025թ. հուլիսի 29, ՍԴԴԿՈ-37)

«...Սահմանադրական դատարանի դատական կազմի որոշման վերանայման ենթակա չլինելու պահանջը բխում է նաև Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի ընդհանուր տրամաբանությունից. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված է կոնկրետ վերահսկողության շրջանակներում նորմատիվ իրավական ակտի՝ դիմողի նկատմամբ կիրառված դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը, այդ դրույթն իր մեկնաբանությամբ ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող, միաժամանակ գտել է, որ այն նրա

նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ՝ առաջացնելով իրավական հետևանք, այն է՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով օրենքով սահմանված կարգով վերանայելու հնարավորություն: Թեև հիշյալ նորմով նախատեսվում է դատական ակտի՝ նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով վերանայման հնարավորություն, այնուամենայնիվ վերոնշյալը չի կարող տարածվել Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների, այդ թվում ՝ դատական կազմերի որոշումների վրա այն պատճառաբանությամբ, որ դրանք ենթակա չեն բողոքարկման՝ պայմանավորված համապատասխան կառուցակարգերի և/կամ Սահմանադրական դատարանի կայացրած որոշումների վերանայման ինստիտուտի բացակայությամբ»: (2024 թվականի ապրիլի 19-ի ՍԴԴԿՈ-17)

4.12 Սահմանադրական դատարանի ըստ էության որոշումների վերանայման հարցը

«...Նույն օրենքի 68-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը սույն հոդվածի 9-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված որոշումները սույն օրենքով սահմանված կարգով ներկայացված համապատասխան դիմումի հիման վրա կարող է վերանայել, եթե՝ 1) փոփոխվել է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթը, կամ 2) ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված՝ Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել Սահմանադրական դատարանի այլ որոշում, և տվյալ հարցն ունի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը 2012 թվականի փետրվարի 24-ի ՍԴՈ-1009 որոշման հետ կապված բարձրացնում է երկու խնդիր. առաջին՝ դատարանների կողմից ձևավորված իրավակիրառական պրակտիկան հակասում է Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշմանը, երկրորդ՝ ՍԴՈ-1009 որոշումը թերի է, և անձանց սեփականության իրավունքի լիարժեք պաշտպանությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է այն զարգացնել և որոշակիացնել:

Անդրադառնալով ՍԴՈ-1009 որոշմանը՝ հարկ է նշել, որ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ դիրքորոշումները՝ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանադրականության առումով որևէ անորոշություն կամ խնդիր առկա չէ: Ինչ վերաբերում է դատական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությանը, ապա ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների զարգացման արդյունքում թիվ ԵԱՔԴ/1023/02/10 քաղաքացիական գործով 27.12.2011թ. որոշման մեջ տրված մեկնաբանությունը, այնքանով , որքանով շեշտադրվում է համասեփականատերերից գործարք կնքող անձի մոտ գործարքը կնքելու իրավունքի առկայության կանխավարկածը, անմիջական հակասության մեջ չի մտնում օրենքի նորմի սահմանադրաիրավական բովանդակության հետ»:

...Ինչ վերաբերում է դիմողի երկրորդ հարցադրմանը՝ կապված որոշման զարգացման և որոշակիացման անհրաժեշտության հետ, ապա հարկ է նշել, որ ՍԴՈ-1009 որոշմամբ Սահմանադրական դատարանն արդեն իսկ արտահայտել է դիրքորոշում,

համաձայն որի՝ «Հաշվի առնելով համատեղ սեփականության իրավունքի ծագման առանձնահատկություններն ու բնույթը, նկատի ունենալով, որ ընդհանուր սեփականությանը վերաբերող իրավանորմերը պետք է կարգավորեն ինչպես համասեփականատերերի՝ «բոլոր մասնակիցների» միմյանց միջև առաջացած հարաբերությունները, այնպես էլ համասեփականատերերի և երրորդ անձանց միջև առաջացող հարաբերությունները, օրենսդրի խնդիրն է համասեփականատերերի ինքնավար կամքի դրսևորման այնպիսի իրավակարգավորում նախատեսել, որպեսզի չխաթարվեն իրավահարաբերությունների որևէ սուբյեկտի իրավունքներն ու օրինական շահերը: Դա անհրաժեշտ է նաև այն նպատակով, որպեսզի գույքը ծանրաբեռնված չլինի գործարքի կնքման պահին չբացահայտված այնպիսի պարտավորություններով, որոնք կխոչընդոտեն բարեխիղճ ձեռքբերողի սեփականությանիրավունքիանարգելիրացումը»: Հաշվիառնելովվերոշարադրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ ՍԴՈ-1009 որոշումը վերանայելու հիմքերը բացակայում են:» (2018թ. նոյեմբերի 9, ՍԴԱՈ-76)

5. ԻՐԱՎԱՍՈՒ ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

5.1 Կոնկրետ գործով ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից հանդիսացած լինելու պահանջը

Ա. «Կոնկրետ գործ» հասկացությունը

««Կոնկրետ գործ» եզրույթն իրենից ներկայացնում է դատավարական ընթացակարգ, որն սկսվում է դատավորի կողմից համապատասխան գործն իր վարույթ ընդունելու հարցը լուծելով եւ ներառում է համապատասխան դատավարական օրենսգրքերով նախատեսված՝ գործը քննող դատավորի կողմից դատավարական որոշումների (դատական ակտերի) կայացում եւ համապատասխան դատավարական գործողությունների իրականացում»: (25 հունիսի 2021թ. ՍԴԱՈ-123)

«Քաղաքացիական դատավարությունում «կոնկրետ գործ» հասկացության բովանդակությունը ներառում է այն վեճը կամ հարցը, որը լուծվում է քաղաքացիական դատավարության շրջանակներում: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական գործը հարուցվում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա: Օրենսգրքի մի շարք այլ հոդվածներում ևս «քաղաքացիական գործ» հասկացության ներքո հասկացվում է միայն սահմանված կարգով հարուցված վեճի կամ այլ հարցի լուծմանն ուղղված գործընթացը»: (2015թ. դեկտեմբերի 4, ՍԴԱՈ-77)

Բ. «Դատավարության մասնակից» հասկացությունը

«Դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողներից Արտակ Ձեյնալյանը դատարաններում չի հանդիսացել որպես դատավարության կողմ, չունի իր նկատմամբ կայացված վերջնական դատական ակտ, հետևաբար՝ օժտված չէ ՀՀ սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին

մասի 6-րդ կետով ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իրավունքով»: (2015թ. դեկտեմբերի 7, ՍԴԴԿՈ-2/22)

5.2. Ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանների կողմից վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կիրառված լինելու պահանջը

Ա. «Նորմատիվ իրավական ակտի կիրառում» հասկացությունը

«Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «...իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի...», ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասում պարունակվող «...և չի կիրառվել» բառակապակցություններում «կիրառում» հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետևանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում»: ՀՀ սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասին և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ անհատական դիմում կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններում դատավարության կողմ հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որևէ օրենքի դրույթ, որն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, և որը գտնում է, որ տվյալ գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը:» (2008թ. ապրիլի 4, ՍԴՈ-747)

«...Դիմողը վարչական դատարանում վիճարկել է նորմատիվ իրավական ակտի դրույթի իրավաչափությունը՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի շրջանակում: Վարչական դատավարության շրջանակներում նորմատիվ իրավական ակտի այս կամ այն դրույթի վիճարկումը չի նշանակում, որ նորմատիվ իրավական ակտի այդ վիճարկվող դրույթը կիրառվել է անձի նկատմամբ: Անհատական գանգատի շրջանակներում նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի կիրառումն առկա է միայն այն ժամանակ, երբ վերջնական դատական ակտով դատարանը, հիմնվելով նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի վրա, կկայացնի անձի իրավունքներին առնչվող դատական ակտ»: (2020թ. մարտի 23, ՍԴԴԿՈ-15)

Բ. Դատական ակտում կիրառված նորմի վկայակոչումը կամ չվկայակոչումը

«Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «...իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի...», ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ

մասում պարունակվող «...և չի կիրառվել» բառակապակցություններում «կիրառում» հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետևանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում»:» (2008թ. ապրիլի 4, ՍԴՈ-747)

«...ՀՀ սահմանադրական դատարանի պրակտիկայում հանդիպել են նաև այնպիսի իրավիճակներ, երբ դատական ակտերում ուղղակիորեն վկայակոչված չի եղել դիմողի կողմից վիճարկվող դրույթը, սակայն դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում ակնհայտ է եղել դիմողի նկատմամբ իրավական հետևանքների առաջացումը դիմողի կողմից վիճարկվող , դատական ակտում անմիջականորեն չվկայակոչված նորմերով, ինչպես խնդրո առարկա գործի պարագայում է, ուստի «օրենքի դրույթի» կիրառում է համարվում նաև այն դեպքը, երբ դատական ակտերում բացակայում է օրենքի դրույթի ցանկացած վկայակոչում, սակայն դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ դիմողի համար իրավական հետևանքներ է առաջացրել չվկայակոչված դրույթի փաստացի կիրառումը»: (2017թ. ապրիլի 4, ՍԴԴԿՈ/1-7)

«Օրենքի կիրառումը պետք է անձի համար առաջացնի իրավական հետևանքներ: Դա նշանակում է, որ օրենքի դրույթի ձևական չվկայակոչումը վերջնական դատական ակտում չի ենթադրում, որ այն դիմողի նկատմամբ չի կիրառվել, եթե այն նրա համար առաջացրել է իրավական հետևանքներ: Տվյալ դեպքում առաջադրվել է մեղադրանք և կիրառվել է խափանման միջոց՝ կալանք»: (2019թ. սեպտեմբերի 4, ՍԴՈ-1476)

«Հնարավոր են նաև այնպիսի իրավիճակներ, ինչպես սույն գործով , երբ դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում ակնհայտ է դառնում դիմողի նկատմամբ իրավական հետևանքների առաջացումը դատական ակտում անմիջականորեն չվկայակոչված նորմերով: Հետևաբար, «նորմատիվ իրավական ակտի դրույթի կիրառում» է համարվում նաև այն դեպքը, երբ դատական ակտերում բացակայում է նորմատիվ իրավական ակտի որևէ դրույթի վկայակոչում, սակայն դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի համար իրավական հետևանքներ է առաջացրել չվկայակոչված դրույթի փաստացի կիրառումը»: (2021թ. հունվարի 27, ՍԴՈ-1573)

«Այս իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով սույն հոդվածները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերջիններս չեն բավարարում «կիրառված օրենքի» պահանջը, քանի որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածի 6, 7 և 8-րդ մասերը, ինչպես նաև 146-րդ հոդվածի 6-րդ մասը կարգավորում են դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման, կարճման իրավահարաբերությունները,

որոնք ընթացակարգային առումով ավարտվում են մինչև Բարձրագույն դատական խորհրդում կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը: Սույն գործով առկա վերջնական դատական ակտի ուսումնասիրությունը վկայում է, որ վիճարկվող դրույթները բովանդակային առումով էլ չեն քննարկվել Բարձրագույն դատական խորհրդի կողմից, այսինքն՝ ո՛չ ընթացակարգային առումով կիրառում է առկա՝ թեկուզ ոչ վկայակոչված, բայց հետևանք առաջացրած վերջնական դատական ակտով , ո՛չ էլ բովանդակային առումով՝ այսինքն՝ վկայակոչված և քննարկված»: (2022թ. սեպտեմբերի 6, ՍԴԱՈ-147)

Գ. Բարձրագույն դատական խորհրդի քննարկման ընթացքում դիմողին հարցեր տալը վիճարկվող նորմի կիրառման համատեքստում

«Դիմողը պնդում է, որ այդ համատեքստում Բարձրագույն դատական խորհրդի կողմից քննարկվել են, հետևաբար՝ կիրառվել վիճարկվող իրավադրույթները: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ Բարձրագույն դատական խորհրդում տեղի ունեցած քննարկման առարկան էր Սահմանադրական դատարան դիմելու և գործի վարույթը կասեցնելու մասին դիմողի միջնորդությունը, որի քննարկման արդյունքներով որոշվել է այդ միջնորդությունը մերժել: Նշված միջնորդության քննարկման փուլում դիմողին հարցեր ուղղելը, Բարձրագույն դատական խորհրդի առանձին անդամների արտահայտած մոտեցումները չեն կարող դիտարկվել որպես դիմողի նկատմամբ վիճարկվող նորմերի կիրառում:» (2022թ. հոկտեմբերի 11, ՍԴԱՈ-157)

Դ. Դատարանների կողմից կիրառված ակտի ընդունման իրավական հիմք հանդիսացող ակտի՝ դիմումատուի նկատմամբ կիրառման հարցը

«Ինչ վերաբերում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածներին, ապա դրանք հանդիսանում են ՀՀ կառավարության 2005թ. օգոստոսի 25-ի թիվ 1321-Ն որոշման իրավական հիմքերը. ՀՀ կառավարության նշված որոշումը հղում է կատարում «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածներին՝ անդրադառնալով «Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածներով» բառակապակցությանը: Իրականում դատարանները կիրառել են ՀՀ կառավարության 2005թ. օգոստոսի 25-ի թիվ 1321-Ն որոշման դրույթները՝ մեջբերելով այդ որոշման որոշ հատվածներ, ներառյալ՝ «Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածներով» բառակապակցությունը, ինչն էլ դիմողի մոտ առաջացրել է թյուր կարծիք, որ դատարանները կիրառել են «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածները: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ դատարանների կողմից որևէ իրավական ակտի կիրառումը դեռևս չի նշանակում տվյալ իրավական ակտում նշված և այդ իրավական ակտի ընդունման համար իրավաբանական հիմք հանդիսացող այլ իրավական ակտերի համապատասխան դրույթների կիրառում:» (2013թ. մայիսի 7, ՍԴՈ-1092)

5.3. Վիճարկվող նորմատիվ իրավական ակտի դրույթի կիրառված լինելը գործը լուծող վերջնական դատական ակտով[114]

Ա. «Վերջնական դատական ակտ» հասկացությունը

«Որպես վերջնական դատական ակտ առանձին դեպքերում կարող են հանդես գալ տարբեր ատյանի՝ առաջին ատյանի, վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանի դատական ակտերը: Առավել հաճախ վերջնական դատական ակտը վճռաբեկ դատարանի ակտն է, որը կայացվել է ի սպառումն պաշտպանության բոլոր միջոցների»: (2008թ. սեպտեմբերի 9, ՍԴՈ-758)

«Ինչ վերաբերում է «դատարանի վերջնական ակտ» հասկացությանը, ապա դա կարող է լինել այն ակտը, որով ավարտվում է գործի դատաքննությունը, և որը ենթակա չէ բողոքարկման: Դատավարության ընթացքում ընդունված կամ կայացված արձանագրային այն որոշումները, որոնց հիման վրա չի ավարտվում դատաքննությունը, չեն կարող համարվել կոնկրետ գործով կայացված վերջնական դատական ակտեր»: (2015թ. դեկտեմբերի 4, ՍԴԱՈ-77)

«ՀՀ սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ անհատական դիմումի շրջանակներում սահմանադրական դատարանում կարող են վիճարկվել դատարանի վերջնական ակտով կիրառված օրենքի դրույթները: Որպես վերջնական դատական ակտ առանձին դեպքերում կարող են հանդես գալ տարբեր ատյանի՝ առաջին ատյանի, վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանի դատական ակտերը: Առավել հաճախ վերջնական դատական ակտը վճռաբեկ դատարանի ակտն է, որը կայացվել է ի սպառումն պաշտպանության բոլոր միջոցների: Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ սահմանադրական նշված դրույթը որպես անհատական դիմումի ընդունելիության պայման ամրագրում է վիճարկվող օրենքի դրույթի վերջնական դատական ակտով կիրառված լինելու պահանջը, ինչը չի նշանակում, որ վերջնական դատական ակտով կիրառված դրույթը պետք է պարտադիր կերպով կիրառված լինի նաև առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում. օրենքի դրույթի սահմանադրականությունը սահմանադրական դատարանում վիճարկելու համար բավական է միայն այդ դրույթի կիրառումը վերջնական դատական ակտով: Այսինքն՝ ՀՀ սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետը հնարավոր է համարում սահմանադրական դատարանում այնպիսի օրենքի դրույթի սահմանադրականության վիճարկում, որը կիրառվել է որպես վերջնական դատական ակտ հանդիսացող՝ վճռաբեկ դատարանի կամ վերաքննիչ դատարանի ակտով , սակայն չի կիրառվել առաջին ատյանի դատարանի ակտով:» (2008թ. սեպտեմբերի 9, ՍԴՈ-758 որոշում)

114 Գործը լուծող վերջնական դատական ակտով վիճարկվող իրավադրույթի կիրառված լինելու պահանջի բովանդակությունը բացահայտվել է սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում (2007 թ. նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշում, 2008թ. սեպտեմբերի 9-ի ՍԴՈ-758 որոշում, 2010 թ. նոյեմբերի 2-ի ՍԴՈ-922 որոշում, 2015 թ. դեկտեմբերի 4-ի ՍԴԱՈ-77 աշխատակարգային որոշում, 2019 թ. ապրիլի 16-ի ՍԴՈ-1453 որոշում, 2019 թ. նոյեմբերի 6-ի ՍԴՈ-1487 որոշում, 2023 թ. մայիսի 16-ի ՍԴԱՈ-47 աշխատակարգային որոշում)

Բ.Միջանկյալ դատական ակտը որպես վերջնական դատական ակտ

«Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում, մասնավորապես՝ 2010 թվականի սեպտեմբերի 28-ի ՍԴՈ-918, 2010 թվականի նոյեմբերի 2-ի ՍԴՈ-922 որոշումներում, անդրադարձել է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման հնարավորությանը, արձանագրելով , որ օրենսդրի սահմանած իրավակարգավորումն առ այն, որ առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերը կարող են բողոքարկվել վերաքննության կարգով միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում, վերաբերում է ոչ թե միջանկյալ դատական ակտերի բողոքարկելիությանն ընդհանրապես, այլ բողոքարկման կարգին: Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-922 որոշմամբ արձանագրել է, որ՝ «... օրենսդիրը տարբերակում է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման երկու հիմնական կարգ, այն է՝ բողոքարկում գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում՝ «հետաձգված բողոքարկում», և միջանկյալ դատական ակտի անմիջական բողոքարկում: Եթե վարույթի հետագա ընթացքը կասեցնող միջանկյալ դատական ակտի դեմ իրավական պաշտպանության միակ հնարավոր միջոցը դրա անմիջական բողոքարկումն է և ըստ այդմ օրենսդրից պահանջվում է նախատեսել տվյալ ակտի անմիջական բողոքարկման կարգ, ապա չկասեցված և շարունակվող վարույթի ընթացքում ընդունված միջանկյալ դատական ակտի բողոքարկման նշված երկու կարգերի միջև ընտրությունն օրենսդրի հայեցողության շրջանակում է»: Սույն գործով կայացված միջանկյալ ակտը՝ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշումը, գործի վարույթի հետագա ընթացքը չկասեցնող որոշում է: Այդ պատճառով օրենսդիրը դրա բողոքարկման անմիջական կարգ չի նախատեսել, ինչը, սակայն, չի նշանակում, որ այն բողոքարկելիությունից զրկված ակտ է և այդ առումով նաև՝ վերջնական, այլ գործն ըստ էության լուծող դատական ակտի շրջանակում բողոքարկման ենթակա ակտ է:» (2018թ. հուլիսի 30, ՍԴԴԿՈ/1-19)

«... Հարուցված, չկասեցված և շարունակվող վարույթի տրամաբանական ավարտը գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացումն է, հետևաբար՝ նման վարույթի շրջանակներում կայացված միջանկյալ ակտերը, անձի իրավունքի ենթադրյալ խախտման դեպքում, կարող են վիճարկվել գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում»: (2010թ. նոյեմբերի 2-ի ՍԴՈ-922)

«Սահմանադրական դատարանը գտնում է, որ երբ գործն ըստ էության չլուծող դատական ակտով սահմանափակվում է անձնական ազատության հիմնական իրավունքը, ապա այդ իրավունքի պաշտպանությունն արդյունավետ չի իրացվում հետաձգված բողոքարկման միջոցով , քանի որ անձը դատական քննության ողջ ընթացքում շարունակում է մնալ կալանքի տակ անորոշ ժամկետով՝ չունենալով այդ ընթացքում կալանքի իրավաչափությունը բողոքարկելու հնարավորություն»: (2019թ. նոյեմբերի 6, ՍԴՈ-1487)

«Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճարկվող դրույթները քրեական գործով դիմողի մեղքի ապացուցված լինելու առումով դեռևս չեն կիրառվել,

և դիմողը դրանց սահմանադրականությունը վիճարկում է միայն իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանությամբ, որով հնարավոր է դարձել մեղադրանքի առաջադրումը և կալանքի՝ որպես խափանման միջոցի ընտրությունը, Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ իրավասու չէ ամբողջ ծավալով քննության առնել այդ դրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը և, հատկապես, գնահատել դրանց առկայության իրավաչափությունը: Նկատի ունենալով , որ անձի անձնական ազատության իրավունքը սահմանափակող միջոցի՝ կալանքի կիրառումը ենթադրում է Սահմանադրությանը համապատասխանող քրեական օրենքի վրա հիմնված մեղադրանքի առկայություն, Սահմանադրական դատարանը փաստում է, որ այդ սահմաններում առկա է վերջնական դատական ակտ, և վիճարկվող դրույթների սահմանադրականությանը՝ դրանց իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, Սահմանադրական դատարանը կանդրադառնա միայն կալանքի հիմքում դրված մեղադրանքի իրավաչափությանն առնչվող հարցի շրջանակներում:» (2019թ. ապրիլի 16, ՍԴՈ-1453)

Գ. ԲԴԽ որոշումները որպես վերջնական դատական ակտ դիտարկելը

«Սահմանադրական դատարանը հարկ է համարում փաստել, որ սույն գործի շրջանակներում Դիմողի կողմից որպես վերջնական դատական ակտ ներկայացված՝ Բարձրագույն դատական խորհրդի՝ «Լիազորությունները կասեցված՝ (...), Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավորներ Դավիթ Գրիգորյանի, (...)՝ դատավորների պաշտոնների թափուր տեղեր առաջանալու փաստն արձանագրելու վերաբերյալ» 08.02.2023թ. թիվ ԲԴԽ-18-Ո-63 որոշումը դատական ակտ չէ: Այսպես՝ Սահմանադրության 173-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը: Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննարկելու, ինչպես նաև Դատական օրենսգրքով սահմանված այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան: «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու վերաբերյալ հարցերը քննելիս Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան: Այսինքն՝ սահմանադիրն ու օրենսդիրը հստակ սահմանել են այն հարցերի շրջանակը, որոնք քննելիս և լուծելիս Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան: Սույն պարագայում 08.02.2023թ. թիվ ԲԴԽ-18-Ո-63 որոշումն ընդունելիս Բարձրագույն դատական խորհուրդը հանդես չի եկել որպես դատարան, այլ տվյալ որոշումն ընդունել է դատավորների պաշտոնների թափուր տեղեր առաջանալու փաստն արձանագրելու իր լիազորության իրացման առնչությամբ: Հետևաբար՝ Բարձրագույն դատական խորհրդի 08.02.2023թ. թիվ ԲԴԽ-18-Ո-63 որոշումը չի կարող

դիտարկվել որպես դատական ակտ»: (2023թ. մայիսի 16, ՍԴԱՈ-47)

5.4. Հիմնական իրավունքների ու ազատությունների խախտման պահանջը

Ա. Կոնկրետ գործով սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության առումով հանրային-իրավական վեճի սպառված լինելը

«Միաժամանակ, 2010թ. հոկտեմբերի 19-ի ՍԴՈ-921 որոշման մեջ սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ կոնկրետ վերահսկողության շրջանակներում նորմի սահմանադրականության գնահատումն իմաստ ու նշանակություն է ստանում տվյալ կոնկրետ գործով սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության առումով: Դիմումին կից ներկայացված դատական ակտերի վերլուծությունը վկայում է նաև, որ խնդրո առարկա հանրային-իրավական վեճը, ըստ էության, սպառված է, և այդ պարագայում դիմողի կողմից վիճարկվող իրավանորմի սահմանադրականության հարցի բարձրացումը, ըստ էության, չի հետապնդում սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության նպատակ: Ուստի հիմք ընդունելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի շրջանակներում վիճարկվող իրավանորմի սահմանադրականության հարցի քննարկումը խնդրո առարկա գործի լուծման տեսանկյունից որևէ գործնական իրավական հետևանքի հանգեցնել չի կարող:» (2010թ. նոյեմբերի 30, ՍԴՈ-927)

Բ. Անհատական շահերի պաշտպանությունը

«Սահմանադրական դատարանը, 2008 թվականի ապրիլի 15-ի ՍԴՈ-751 որոշման շրջանակներում անդրադառնալով սահմանադրական կոնկրետ վերահսկողության առանձնահատկություններին, ընդգծել է. «Եթե նախնական և հետագա վերացական սահմանադրական վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում Սահմանադրության գերակայության երաշխավորումը՝ իրավական համակարգում օրենքների և այլ նորմատիվ ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունն ապահովելու ճանապարհով , ապա անհատական դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ վերահսկողության նպատակը Սահմանադրության դրույթների անմիջական գործողության երաշխավորումն է, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ապահովումն ու պաշտպանությունը: (...) Կոնկրետ վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում նաև անհատական շահերի պաշտպանության խնդիրը»: Բացի դրանից, 2010 թվականի հոկտեմբերի 19-ի ՍԴՈ-921 որոշման շրջանակներում Սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ կոնկրետ վերահսկողության շրջանակներում նորմի սահմանադրականության գնահատումն իմաստ ու նշանակություն է ստանում տվյալ կոնկրետ գործով սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության առումով: Վերահաստատելով նախկինում արտահայտած իր դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը 2010 թվականի նոյեմբերի 30-ի ՍԴՈ-927 որոշմամբ փաստել է, որ այն դեպքում, երբ դիմողի նկատմամբ կայացրած դատական ակտերի վերլուծությունից բխում է, որ խնդրո առարկա հանրային-իրավական վեճը, ըստ էության, սպառված է, ապա տվյալ պարագայում դիմողի կողմից վիճարկվող իրավանորմի սահմանադրականության հարցի բարձրացումը, ըստ էության, չի հետապնդում

սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության նպատակ, ուստի հիմք ընդունելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտել է, որ վիճարկվող իրավանորմի սահմանադրականության հարցի քննարկումը խնդրո առարկա գործի լուծման տեսանկյունից որևէ գործնական իրավական հետևանքի հանգեցնել չի կարող:» (2021 թ. սեպտեմբերի 14, ՍԴԴԿՈ-58)

«Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված հիմնարար իրավունքը կարող է ենթադրաբար խախտվել, իսկ դիմողը՝ իր նկատմամբ կիրառված իրավանորմերով տվյալ իրավունքի խախտման հանգամանքը վիճարկել Սահմանադրական դատարանում, միայն այն դեպքում, եթե ինքն է այդ իրավունքի /տվյալ դեպքում վիճելի գույքի՝ գրավադրված բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը/ սուբյեկտը /իրավատերը/, կամ նրա մոտ առկա է այդ գույքը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիք: Մինչդեռ, գործի հանգամանքներից ակներև է, որ դիմողը հանդիսանում է անշարժ գույքի գրավով ապահովված դրամական միջոցներով արտահայտված պարտավորության պարտատերը, որի կատարման ապահովմանն էլ ուղղված է վիճարկվող «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 10-րդ մասի դրույթները»: (2020թ. դեկտեմբերի 29, ՍԴԱՈ-244)

5.5. Դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառման պահանջը[115]

Ա. «Դատական պաշտպանության միջոցի սպառում» հասկացությունը

«Ֆիզիկական և իրավաբանական անձանց համար Սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը ծագում է քաղաքացիաիրավական, վարչաիրավական վեճերի կարգավորման, ինչպես նաև քրեական մեղադրանքի կապակցությամբ կայացված վերջնական դատական ակտի և համապատասխանաբար՝ նշված վեճերի և քրեական մեղադրանքի հարցի լուծման իրավազորությամբ օժտված դատական մարմիններում պաշտպանության միջոցները սպառելու արդյունքում: Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումներին ուղղված՝ դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելու սահմանադրական պահանջից բխում է, որ եթե առկա է կամ առկա է եղել որևէ դատական ատյան, որը կարող է (էր) քննել Դիմողի կողմից բարձրացված հարցը, սակայն Դիմողը չի օգտվել այդ հնարավորությունից, ապա Դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները»: (2023թ. մայիսի 16, ՍԴԱՈ-47, 2019թ. հոկտեմբերի 24, ՍԴԴԿՈ-58)

«Անհատական գանգատի շրջանակներում դիմողի համար նախատեսված սահմանադրական և օրենսդրական պահանջներից է, ի թիվս այլնի, դատական պաշտպանության միջոցների սպառումը: Այս պահանջը նշանակում է, որ դիմողը կոնկրետ գործի շրջանակներում պետք է իրացնի օրենսդրորեն իրեն վերապահված բոլոր հնարավորությունները: Օրենսդրությամբ նախատեսված բոլոր

115 Դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառման պահանջի բովանդակությունը բացահայտվել է Սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքում: Մասնավորապես, Սահմանադրական դատարանն այս պահանջի վերաբերյալ իրավական դիրքորոշումներ է արտահայտել հետևյալ որոշումներում. 2011 թ. մարտի 29-ի ՍԴՈ-946, 2016 թ. ապրիլի 26-ի ՍԴԱՈ-29, 2017 թ. օգոստոսի 30-ի ՍԴԴԿՈ/2-20, 2019 թ. հոկտեմբերի 24-ի ՍԴԴԿՈ-58, 2020 թ. հուլիսի 31-ի ՍԴԴԿՈ-39, 2021 թ. նոյեմբերի 23-ի ՍԴԱՈ-233, 2022 թ. ապրիլի 1-ի ՍԴԱՈ-64, 2022 թ. հուլիսի 8-ի ՍԴԱՈ-120, 2023 թ. հունվարի 10-ի ՍԴԴԿՈ-1:

հնարավորությունների իրացումից հետո միայն կարելի է փաստել անհատական գանգատի շրջանակներում դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառման պահանջի պահպանման մասին:» (2020թ. հուլիսի 31, ՍԴԴԿՈ-39)

Բ. Դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառումը նոր երևան եկած հանգամանքի հիմքով վերանայված ակտի դեպքում

«Սահմանադրական դատարանում գործը դատաքննության նախապատրաստելու փուլում պարզվել է, որ սահմանադրական դատարան դիմելուց հետո դիմողը դիմել է ՀՀ վճռաբեկ դատարան՝ խնդրելով նոր երևան եկած հանգամանքի հիմքով վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2010թ. որոշումը: ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 10.01.2011թ. որոշմամբ բավարարելով վճռաբեկ բողոքը՝ որոշել է. «Վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 07.04.2010 թվականի... որոշումը: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.02.2010 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ. վերացնել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 11.01.2010 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը»:... Գործի նյութերի վերլուծությունից բխում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը վերանայելով իր որոշումը՝ հիմք է ստեղծել ՀՀ սահմանադրության 19-րդ հոդվածով ու Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ դիմողի՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար: Իսկ դիմողի փաստարկները հիմնականում վերաբերում են ոչ թե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի բուն բովանդակությանը, որն իրավաչափորեն նախատեսում է, որ «Դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե գործն ընդդատյա չէ տվյալ դատարանին», այլ այդ նորմի այնպիսի կիրառմանը, որն արգելափակել էր դատարանի մատչելիության իր իրավունքի իրացումը, ինչը ՀՀ վճռաբեկ դատարանի 10.01.2011թ. որոշմամբ երաշխավորվել է: Նշված հանգամանքը հաշվի առնելով՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործը քննության ընդունելու համար հիմք հանդիսացած վերջնական դատական ակտի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2010թ. որոշման վերանայման և իրավական ուժը կորցնելու պայմաններում այլևս առկա չէ սահմանադրական դատարանում գործի քննության համար անհրաժեշտ նախապայման հանդիսացող վերջնական դատական ակտը, դրանով իսկ դիմողի համար դեռևս չեն սպառվել դատական պաշտպանության միջոցները:» (2011թ. մարտի 29, ՍԴՈ-946)

Գ. Դատական պաշտպանության միջոցի սպառումը՝ բեկանված դատական ակտի դեպքում

«Սույն դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողը չի սպառել ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ ժամանակագրական տեսանկյունից դիմողի նկատմամբ կայացված վերջին դատական ակտը թիվ ՎԴ/0464/05/17 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 2022 թվականի հունվարի 14-ի որոշումն է, որը չի կարող համարվել որպես դիմողի կողմից

բարձրացված հարցերի կապակցությամբ օրենսդրությամբ նախատեսված՝ դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառում, քանի որ Վճռաբեկ դատարանը նշված որոշմամբ բավարարել է վճռաբեկ բողոքը՝ բեկանելով Վերաքննիչ վարչական դատարանի 14.06.2019 թ. որոշումը և գործն ուղարկել Վարչական դատարան՝ նոր քննության: Նման պայմաններում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը, ըստ էության, չի սպառել ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները:» (2022թ. հուլիսի 8, ՍԴԱՈ-120)

Դ. Դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառումը վճռաբեկ բողոքը առանց քննության թողնելու վերաբերյալ որոշման դեպքում

«Սույն գործի դատավարական նախապատմությունը Սահմանադրական դատարանին հիմք է տալիս եզրահանգելու, որ դիմողը չի սպառել ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ հիշատակված պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանն առանց քննության է թողել ներկայացված վճռաբեկ բողոքը, որպիսի պայմաններում դիմողն իր գործողությունների հետևանքով , ըստ էության, չի իրացրել վճռաբեկ ատյանում դատական պաշտպանության՝ օրենսդրությամբ երաշխավորված իր իրավունքը:» (2022թ. ապրիլի 1, ՍԴԱՈ-64)

«Տվյալ դեպքում բողոք բերած անձը ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական պալատի 11.12.2024 թվականի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ արձանագրված սխալները շտկել է մասնակիորեն, այն է՝ կրկին ներկայացված վճռաբեկ բողոքին կցվել է օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը, սակայն բողոք բերած անձը բողոքին կրկին չի կցել բողոքի պատճենը դատավարության մասնակից՝ երրորդ անձ Սիրանուշ Հախվերդյանին ուղարկելու մասին պատշաճ ապացույցը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին համապատասխան՝ սույն վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց քննության»: Այսպիսով , սույն գործի փաստերից ակնհայտ է դառնում, որ Դիմողը, ունենալով Վճռաբեկ դատարանի կողմից սահմանված ժամկետում վկայակոչված սխալները շտկելու և կրկին վճռաբեկ բողոք ներկայացնելու իրական հնարավորություն, կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք, սակայն ամբողջովին չի շտկել Վճռաբեկ դատարանի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ արձանագրած սխալները: Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանի դատական կազմը եզրահանգում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2 և 6-րդ կետերով , ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ դատական պաշտպանության բոլոր միջոցները չսպառելու, Սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չլինելու հիմքերով:» (2025թ. հուլիսի 24 ՍԴԴԿՈ-34)

«Դիմողը, ունենալով վերաքննիչ վարչական դատարանի կողմից 2024 թվականի փետրվարի 28-ին կայացված որոշումն օրենքով սահմանված ժամկետում

բողոքարկելու իրական հնարավորություն, պատշաճ կերպով չի իրացրել այն՝ խնդրո առարկա դատական ակտի կապակցությամբ վճռաբեկ բողոքը փոստին հանձնելով սահմանված մեկամսյա ժամկետի խախտմամբ՝ միայն 2024 թվականի ապրիլի 1-ին: Սույն հանգամանքով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանի վարչական պալատը մերժել է Դիմողի՝ վճռաբեկ բողոք բերելու ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու և բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը՝ վճռաբեկ բողոքը թողնելով առանց քննության: Ամփոփելով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ Դիմողը չի պահպանել ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցներն սպառելու՝ անհատական դիմումին ուղղված սահմանադրական պահանջը: Ուստի՝ Դիմողը Սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:» (2024թ. նոյեմբերի 18, ՍԴԴԿՈ-61)

Ե. Դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառումը՝ ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի վիճարկման դեպքում

«Դատական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիմողը վարչական դատավարության ընթացակարգի շրջանակներում, ըստ էության, վիճարկել է վարչական մարմնի դրսևորած անգործությունը: Դատական ակտերով արձանագրվել է, որ վարչական մարմինը, ղեկավարվելով մի շարք իրավական ակտերով , մասնավորապես, «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 327 որոշմամբ, անգործություն չի դրսևորել, այլ կատարել է դրանցով նախատեսված համապատասխան գործողություններ: Այսինքն՝ նշված գործի շրջանակներում քննարկման առարկա է դարձել վարչական մարմնի կողմից ենթադրյալ անգործություն դրսևորելու հարցը, որևէ անդրադարձ չի արվել իրականացված վարչարարության իրավաչափությանը, հանգամանք, որը կարևոր պայման է սահմանադրական անհատական գանգատի համատեքստում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի կիրառման փաստի արձանագրման և սահմանադրականության գնահատման ժամանակ: Այլ կերպ ասած՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության գնահատման վերաբերյալ դիմումների ընդունելիության հարցի լուծման ժամանակ դատական պաշտպանության միջոցների սպառման պահանջը նշանակում է, որ անձը, հատուկ վարույթի շրջանակներում ենթաօրենսդրական ակտի իրավաչափությունը վիճարկելուց բացի, պետք է համապատասխան դատական ատյաններում քննարկման առարկա դարձնի անհատական ակտի, գործողության կամ անգործության իրավաչափությունը, որի վերաբերյալ ընդունված վերջնական դատական ակտով պետք է կիրառված լինի այն նորմատիվ իրավական ակտը, որի սահմանադրականությունը վիճարկվում է Սահմանադրական դատարանում»: (2020թ. մայիսի 7, ՍԴԴԿՈ-25)

Զ. Դատական ակտերի բողոքարկման կարգի չպահպանումը

«ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածը դիմողի նկատմամբ կիրառվել է առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների կողմից, սակայն նա վերաքննիչ դատարանի ակտը վճռաբեկության կարգով բողոքարկել է ոչ ըստ օրենքով

սահմանված կարգի: ՀՀ վճռաբեկ դատարանի 26.08.2015թ. որոշմամբ դիմողի վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության, «քանի որ վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է»: Եթե դիմողն իր նկատմամբ կայացված վարչական վերաքննիչ դատարանի ակտը չի բողոքարկել վճռաբեկության կարգով , չնայած այն հանգամանքին, որ օբյեկտիվորեն ունեցել է այդ հնարավորությունը, ապա «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի իմաստով չի կարող համարվել, որ դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները: Նմանատիպ հետևանքներ է առաջացնում նաև վճռաբեկ դատարանի կողմից բողոքն առանց քննության թողնելն այն պարագայում, երբ վճռաբեկ բողոքը ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ առանց վճռաբեկ բողոք բերելու ժամկետի բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին միջնորդության:» (2016թ. ապրիլի 26, ՍԴԱՈ-29)

Է. Դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառումը՝ միջանկյալ դատական ակտի դեպքում[116]

«Դիմողի կողմից վիճարկվող դրույթը նրա նկատմամբ կիրառվել է միջանկյալ դատական ակտերով: Ընդ որում, դիմողի կողմից վիճարկվող դրույթն իր բնույթով այնպիսին է, որ մեղադրյալը հնարավորություն ունի դրանով նախատեսված իրավունքն իրացնել նաև գործի ըստ էության քննության ժամանակ, հանգամանք, որը մատնանշել է նաև ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը: Անհատական դիմումին ներկայացվող սահմանադրական և օրենսդրական պահանջներից է նաև դատական պաշտպանության միջոցների սպառումը: Այս պահանջն ինքնանպատակ չէ և միտված է նրան, որ անձն իր ենթադրյալ խախտված սահմանադրական իրավունքի վերականգնման համար սպառի օրենսդրությամբ նախատեսված բոլոր հնարավորությունները, որից հետո միայն իրավունք ստանա դիմելու Սահմանադրական դատարան: Դատական կազմը գտնում է, որ խնդրո առարկա գործի շրջանակներում անձը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները:» (2017թ. օգոստոսի 30, ՍԴԴԿՈ/2-20)

«Սահմանադրական դատարան ներկայացված դիմումին կցված դատական ակտերի ուսումնասիրությունից հետևում է, որ դիմողի հայցադիմումի ընդունումը մերժելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոքը վերաքննիչ քաղաքացիական դատարանը մերժել է 2022 թվականի մարտի 21-ի որոշմամբ՝ օրինական ուժի մեջ թողնելով բողոքարկվող որոշումը: Վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 2022 թվականի մարտի 21-ի որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2022 թվականի մայիսի 25-ի որոշմամբ թողնվել է առանց քննության այն հիմքով , որ այն վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա չէ: Առաջնորդվելով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դատավարական կանոններով՝ Վճռաբեկ դատարանը պատճառաբանել է, որ վերաքննիչ քաղաքացիական դատարանի միջանկյալ դատական ակտերը վճռաբեկության կարգով ենթակա

116 ՍԴ իրավական դիրքորոշումները ներկայացված են Սահմանադրական դատարանի՝ գործող պրակտիկայի հիման վրա

են բողոքարկման միայն Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում, իսկ հայցադիմումի ընդունումը մերժելու որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած որոշումը բողոքարկելու իրավունք Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ: Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ դիմողի գործով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի իմաստով վերջնական դատական ակտը սույն գործում վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2022 թվականի մարտի 21-ի որոշումն է, որը Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 387-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ուժի մեջ է մտել կայացման պահից: Մինչդեռ Սահմանադրական դատարան դիմումը ներկայացվել է 2022 թվականի հոկտեմբերի 10-ին, այսինքն՝ վերջնական դատական ակտն ուժի մեջ մտնելուց ավելի քան վեց ամիս անց: Այսինքն՝ սույն անհատական դիմումը Սահմանադրական դատարան ներկայացնելու պահին արդեն իսկ լրացել էր «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վեցամսյա ժամկետը: Հետևաբար՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը, առանց անդրադառնալու սույն դիմումի ընդունելիության մյուս պայմանների առկայությանը, եզրահանգում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման:» (2022թ. հոկտեմբերի 18, ՍԴԴԿՈ-57)

Ը. Դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառումը՝ գործը նոր քննության փուլում գտնվելու դեպքում

«Վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2022 թվականի սեպտեմբերի 9-ին որոշել է. «...Թիվ ԵԴ/30480/02/19 քաղաքացիական գործով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 17.12.2020 թվականի վճիռը մասնակի՝ առաջին աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին հրամանն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու անհնարինության դեպքում հարկադիր պարապուրդի գումարը և հատուցում վճարելու պահանջների մասով բեկանել և նույն պահանջների մասով գործն ուղարկել նոր քննության: (...)»: Հետևաբար՝ վերոնշյալ գործը՝ սույն անհատական դիմումով վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված իրավակարգավորման համատեքստում, գտնվում է նոր քննության փուլում: ... Վերոնշյալի կապակցությամբ 2022 թվականի հուլիսի 8-ի ՍԴԱՈ-120 աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ սահմանադրական արդարադատություն հայցելու անձի իրավունքը, ինչպես նաև օրենսդրությամբ դրա իրացման նպատակով նախատեսված ընթացակարգային կարգավորումներն ինքնանպատակ չեն, ուստիև հայեցողաբար մեկնաբանվել չեն կարող: Նշված կարգավորումները միտված են դիմողի կողմից նախքան Սահմանադրական դատարան դիմելու իրավունքն իրացնելն իր ենթադրյալ խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման համար օրենսդրությամբ նախատեսված բոլոր հնարավորությունները սպառելուն: Հաշվի առնելով ողջ վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի մասով, ենթակա

է մերժման՝ Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ Դիմողի կողմից դատական պաշտպանության բոլոր միջոցները չսպառելու, ըստ այդմ ՝ Սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չլինելու հիմքերով:» (2025թ. մայիսի 14, ՍԴԴԿՈ-24, 2022թ. հուլիսի 8, ՍԴԱՈ-120)

Թ. Դատական պաշտպանության միջոցի սպառումը «Արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքում որոշման կայացումը հետաձգելու մասին» որոշման դեպքում

«Մասնավորապես՝ թիվ ԵԴ2/7097/02/24 քաղաքացիական գործի շրջանակներում 2024 թվականի հոկտեմբերի 21-ին ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը կայացրել է «Արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքում որոշման կայացումը հետաձգելու մասին» որոշումը, որը Դիմողի կողմից սույն անհատական դիմումի շրջանակներում ներկայացվել է որպես վերջնական դատական ակտ: Քննարկվող համատեքստում կարևոր է փաստել, որ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը վերոնշյալ որոշմամբ արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքում որոշման կայացումը հետաձգելը պայմանավորել է հետևյալ պատճառաբանությամբ. «Հաշվի առնելով , որ դատարանը կարող է գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ ողջամիտ ժամկետով հետաձգել որոշման կայացումը, եթե գտնում է, որ արբիտրաժային վարույթը վերսկսելու միջոցով կարող է վերացվել արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու հիմքը, Դատարանն արձանագրում է, որ սույն դեպքում առկա է արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքում որոշման կայացումը հետաձգելու անհրաժեշտություն և որոշում է հետաձգել որոշման կայացումը մինչև 2025 թվականի հունվարի 21-ը՝ հնարավորություն ընձեռելով արբիտրաժային վարույթը վերսկսելու միջոցով վերացնել արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալդիմումում վկայակոչված հիմքերը: Միաժամանակ, Դատարանն, անդրադառնալով «Լիլի Ռիելթի» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Ա. Հայրապետյանի դիմումին, որով վերջինս խնդրել է կասեցնել սույն քաղաքացիական գործի վարույթը՝ հնարավորություն ընձեռելով «Միջազգային արբիտրաժային դատարան» ՍՊ ընկերության մշտապես գործող արբիտրաժային դատարանին վերսկսել 06-001/100124 գործով վարույթը՝ պատասխանողի մասնակցությամբ քննելու համար, արձանագրում է, որ սույն դեպքում օրենսդիրը նախատեսել է ոչ թե արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումներով գործի վարույթը կասեցնելու, այլ չեղյալ ճանաչելու հարցի քննությունը որոշակի ժամանակով դադարեցնելու և արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքում որոշման կայացումը հետաձգելու իրավական հնարավորություն»: Վերոշարադրյալից պարզ է դառնում, որ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, հաշվի առնելով նաև «Լիլի Ռիելթի» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Ա. Հայրապետյանի դիմումը, հնարավորություն է ընձեռել «Միջազգային արբիտրաժային դատարան» ՍՊ ընկերությանը պատասխանող Կարեն Ավդալյանի մասնակցությամբ վերսկսելու արբիտրաժային վարույթը, ինչպես նաև քննելու արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ Կարեն Ավդալյանի դիմումում

վկայակոչված հիմքերը վերացնելու հարցը: Նշված հանգամանքով պայմանավորված էլ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը հետաձգել է արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ Կարեն Ավդալյանի դիմումի քննության արդյունքում համապատասխան որոշման կայացումը մինչև 2025 թվականի հունվարի 21-ը: Քննարկվող համատեքստում հարկ է փաստել, որ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումներին ուղղված՝ դատական պաշտպանության բոլոր միջոցներն սպառելու սահմանադրական պահանջից բխում է, որ եթե առկա է կամ առկա է եղել որևէ դատական ատյան, որը կարող է (էր) քննել դիմողի կողմից բարձրացված հարցը, սակայն դիմողը չի օգտվել այդ հնարավորությունից, ապա վերջինս չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները:» (2024թ. նոյեմբերի 29, ՍԴԴԿՈ-63)

Ժ. Դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառման պահանջից բացառության հարցը

«7. Սահմանադրական դատարանի դատական կազմը հիմնավոր չի համարում «դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառման» սահմանադրական պայմանի՝ դիմողի առաջարկած մեկնաբանությունների հիմքում ընկած փաստարկները և դրանց հիմքով դիմողի առաջարկած մեկնաբանության այն տարբերակը, համաձայն որի՝ «դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառման» սահմանադրական պայմանից հնարավոր են բացառություններ: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ ի տարբերություն վերացական սահմանադրական վերահսկողության՝ կոնկրետ սահմանադրական վերահսկողության Սահմանադրական դատարանի լիազորության իրացումը Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված է կոնկրետ դատական գործի և այդ գործով Սահմանադրական դատարան դիմողի նկատմամբ իրավական նորմի կիրառված լինելու պարտադիր պայմանով: Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի իմաստով «դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառման» պայմանը բավարարված չի կարող համարվել, եթե դատական պաշտպանության միջոցների սպառմամբ վիճարկվող իրավական նորմը կոնկրետ դատական գործի շրջանակներում վերջնական դատական ակտով կիրառված չէ:» (2021թ. հունիսի 24, ՍԴԴԿՈ-43)

6. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

6.1 Վեցամսյա ժամկետի հաշվարկը

«Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ գործով վերջնական դատական ակտը՝ «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը, կայացվել է 2020 թ. մայիսի 22-ին: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Տարիներով , ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը»: Տվյալ դեպքում, հաշվի առնելով այնհանգամանքը, որդիմողի վերաբերյալ գործով վերջնական դատական ակտը կայացվել է 2020 թ. մայիսի 22-ին, Սահմանադրական դատարան

դիմելու համար «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետի ընթացքը սկսվում է 2020 թ. մայիսի 23-ից և ավարտվում 2020 թ. նոյեմբերի 23-ին: Մինչդեռ Արամայիս Թումանյանի դիմումը փոստային ծառայությանն է հանձնվել 2020 թ. նոյեմբերի 30-ին: Հետևաբար, դիմողը բաց է թողել Սահմանադրական դատարան դիմելու համար սահմանված վեցամսյա ժամկետը, ինչը հիմք է անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը մերժելու համար:» (2021թ. հունվարի 15, ՍԴԱՈ-8)

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումները կարող է Սահմանադրական դատարան ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելուց՝ վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները, կամ լրացել է Սահմանադրական դատարան դիմելու համար սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վեցամսյա ժամկետը: Սույն գործի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ տվյալ անհատական դիմումի շրջանակներում թիվ ՎԴ/7707/05/17 վարչական գործով վերջնական դատական ակտը՝ Վճռաբեկ դատարանի «Դատական ակտի վերանայման վճռաբեկ բողոքը (դիմումը) վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը, կայացվել է 2023 թվականի սեպտեմբերի 6-ին: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով , ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ամիսներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթվին: Կես տարով որոշված ժամկետի նկատմամբ կիրառվում են ամիսներով հաշվարկվող ժամկետների կանոնները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն անհատական դիմումի շրջանակներում թիվ ՎԴ/7707/05/17 վարչական գործով վերջնական դատական ակտը կայացվել է 2023 թվականի սեպտեմբերի 6-ին, Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել , որ Դիմողի՝ Սահմանադրական դատարան դիմելու համար «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված վեցամսյա ժամկետի ընթացքը սկսվել է 2023 թվականի սեպտեմբերի 7-ից: Սույն գործով Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված վեցամսյա ժամկետն ավարտվել է 2024 մարտի 7-ին: Մինչդեռ Դիմողի կողմից սույն անհատական դիմումը Սահմանադրական դատարան է ստացվել էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի «MulberryGroupware 2.0» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով 2024 թվականի մարտի 26-ին: Հետևաբար՝ Դիմողը բաց է թողել և սույն գործով լրացել է Սահմանադրական դատարան դիմելու համար սահմանված վեցամսյա ժամկետը, որն էլ անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը մերժելու հիմք է: Ինչ վերաբերում է Դիմողի այն պնդմանը, համաձայն որի՝ Սահմանադրական դատարան դիմելու համար «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի

69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետն սկսում է հոսել Դիմողի կողմից վերջնական դատական ակտը, այն է՝ Վճռաբեկ դատարանի համապատասխան որոշումը ստանալու օրվանից՝ 2023 թվականի հոկտեմբերի 3-ից, ապա Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել , որ վերոնշյալ հոդվածով հստակ սահմանվում է Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելու համար սահմանված վեցամսյա ժամկետի հաշվարկման սկիզբը, այն է՝ վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահը: Ընդ որում ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանի որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից, ուստի՝ սույն գործի շրջանակներում Դիմողի՝ Սահմանադրական դատարան դիմելու համար «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված վեցամսյա ժամկետի սկիզբը սկսել է հոսել Վճռաբեկ դատարանի «Դատական ակտի վերանայման վճռաբեկ բողոքը (դիմումը) վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշման կայացման պահից, այլ ոչ թե Դիմողի կողմից այն ստանալու պահից: Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն դիմումով չի պահպանվել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով անհատական դիմումին ներկայացվող՝ այն վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո Սահմանադրական դատարան ներկայացնելու պահանջը: Ուստի՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա՝ Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված վեցամսյա ժամկետը լրացած լինելու հիմքով: (2024թ. ապրիլի 26, ՍԴԱՈ-72)

«Դիմումից և կից փաստաթղթերից հետևում է, որ դիմողը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշման վերաքննության կարգով բողոքարկման արդյունքում կայացված՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը բողոքարկել է վճռաբեկության կարգով , ինչի արդյունքում Վճռաբեկ դատարանը 2012 թվականի օգոստոսի 17-ին կայացրել է «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշում այն հիմնավորմամբ, որ բողոքում բարձրացված հարցերը բավարար չեն եզրահանգելու, որ դրանց վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Այնուհետև, դիմողը 2021 թվականի ապրիլի 29-ին կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք: Վճռաբեկ դատարանը 2021 թվականի հունիսի 2-ին կայացրել է «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում այն հիմնավորմամբ, որ վճռաբեկ բողոքը բերվել է նույն գործով և նույն հիմքով: Հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու հիմքը, ինչպես նաև Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի հիմնավորումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Սահմանադրական դատարան դիմելու համար սահմանված վեցամսյա ժամկետը հաշվարկելիս պետք է հիմք ընդունվի ոչ թե Վճռաբեկ դատարանի 2021 թվականի հունիսի 2-ի «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշումը, այլ 2012 թվականի օգոստոսի 17-ի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմումը միայն 2021 թվականի օգոստոսի 2-ին Սահմանադրական դատարան ներկայացրած լինելու պայմաններում դիմողը բաց է թողել Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված վեցամսյա ժամկետը, ինչը հիմք է սույն գործի քննությունը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, մերժելու համար:» (2021թ. սեպտեմբերի 2, ՍԴԱՈ-185)

«Անդրադառնալով Դիմողների այն պնդմանը, համաձայն որի՝ իրենք վերջնական դատական ակտը՝ Վճռաբեկ դատարանի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 4-ին կայացված որոշումը, ստացել են 2024 թվականի դեկտեմբերի 27-ին՝ հարկ է արձանագրել , որ Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված վեցամսյա ժամկետի ընթացքն սկսվում է ոչ թե վերջնական դատական ակտի ստացման, այլ տվյալ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից:» (2025թ. հուլիսի 9, ՍԴԴԿՈ-32)

6.2. Բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հնարավորությունը

«Ինչ վերաբերում է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ դիմողի միջնորդությանը, Սահմանադրական դատարանը արձանագրում է, որ ի տարբերություն քաղաքացիադատավարական, վարչադատավարական և քրեադատավարական օրենսդրության՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը Սահմանադրական դատարան դիմելու բաց թողնված ժամկետը վերականգնելու ինստիտուտ չի նախատեսում:» (2021թ. հունվարի 15, ՍԴԱՈ-8)

«Ինչ վերաբերում է Դիմողի կողմից սույն անհատական դիմումի շրջանակներում ներկայացված՝ «Դիմում ներկայացնելու համար սահմանված ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին» միջնորդությանը, ապա Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ Օրենքով Սահմանադրական դատարան դիմելու բաց թողնված ժամկետի վերականգնման կառուցակարգ նախատեսված չէ, ինչը, հիմք ընդունելով նաև Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված պահանջը, զրկում է Սահմանադրական դատարանի դատական կազմին Օրենքով չնախատեսված իրավական կառուցակարգերի կիրառման հնարավորությունից:» (2024թ. հոկտեմբերի 18, ՍԴԴԿՈ-59)

6.3. Նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթներին հղումներ պարունակելը

«Դիմումի հիմնավորումներում դիմողը նշել է 1961 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի, 2003 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, ինչպես նաև 1995 թվականի, 2005 թվականի փոփոխություններով և 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության մի շարք հոդվածներ: Միևնույն ժամանակ դիմողը դիմումի խնդրամասում չի նշել, թե ո՛ր իրավական դրույթը կամ դրույթներն է վիճարկում Սահմանադրական դատարանում: Սահմանադրական դատարանը փաստում է, որ դիմողը խնդրում է Սահմանադրությանը հակասող ճանաչել իրեն ներում շնորհելու և պատիժ նշանակելու վերաբերյալ դատական ակտերով կիրառված

ՀՀ քրեական և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխան դրույթների մեկնաբանությունը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմումում տեղ գտած վերոգրյալ ձևակերպումը չի կարող համարվել նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթներին պատշաճ հղում: Ընդ որում, նման պայմաններում հնարավոր չէ նաև պարզել , թե արդյոք դիմումը պարունակում է հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված՝ դիմողի հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմումում չեն պահպանվել վերոնշյալ պահանջները, ինչը բավարար հիմք է սույն անհատական դիմումի քննությունը նաև ակնհայտ անհիմն լինելու հիմքով մերժելու համար: (2021թ. սեպտեմբերի 2, ՍԴԱՈ – 185)

6.4. Դիմումում առաջադրված հարցերի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման բացակայության պահանջը

«Ելնելով դիմումի և դատական ակտերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ գործի քննության ընդունումը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ. դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 22-ի ՍԴՈ-832 որոշումը: Այսպես, Սահմանադրական դատարանի՝ հիշատակված որոշմամբ ՀՀ սահմանադրությանը համապատասխանող է ճանաչվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը: Մասնավորապես, նշված որոշման մեջ Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ՝ «... 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, նախատեսելով ՀՀ վճռաբեկ դատարանի խնդրո առարկա լիազորությունը, միաժամանակ, որպես այդ լիազորության կիրառման իրավաչափությունն ապահովող երաշխիք ամրագրում է դրանից օգտվելու չափորոշիչները: Այն է՝ ՀՀ վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված լիազորությունը կարող է կիրառել բոլոր այն դեպքերում, երբ ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները թույլ են տալիս վճռաբեկ դատարանին ստորադաս դատարանի ակտից տարբերվող ակտ կայացնելու, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից»:» (2018թ. մայիսի 4, ՍԴԴԿՈ/2-15)

6.5. Դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում գործի դատաքննության բացակայության վերաբերյալ պահանջը

«Վիճարկվող դրույթից հետևում է, որ վերջնական դատական ակտը Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերանայելու կարգավորումը, բացի անհատական դիմում ներկայացրած անձից, որի դիմումի հիման վրա քննության ընդունված գործի քննության արդյունքում ընդունվել է Սահմանադրական դատարանի համապատասխան որոշումը, նաև տարածվում է այն անձանց վրա, որոնք թեև չեն դիմել Սահմանադրական դատարան, սակայն իրենց նկատմամբ կիրառված

նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ անձի դիմումը Սահմանադրական դատարանում մուտքագրվելու օրվա դրությամբ ունեցել են նույն հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավունք: Այսինքն՝ Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված կարգավորումից օգտվելու հնարավորությունը գնահատելու համար բավարար է պարզել, թե արդյոք համապատասխան դիմումը Սահմանադրական դատարանում մուտքագրվելու օրվա դրությամբ տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձն ունեցել է նույն հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավունք, թե՝ ոչ: Ըստ այդմ, Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 11-րդ մասը նույն հոդվածի 10-րդ մասում ամրագրված դրույթի գործողությունը տարածում է այն անձանց վրա, որոնք բավարարում են հետևյալ պահանջները. ա) նրանց նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից կիրառվել է նորմատիվ իրավական ակտի այն դրույթը, որն այլ անձի դիմումի հիման վրա գործով ճանաչվել է Սահմանադրությանը հակասող և անվավեր, կամ այն դրույթը, որն այլ անձի դիմումի հիման վրա գործով Սահմանադրական դատարանն իր մեկնաբանությամբ ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող , բ) նրանց նկատմամբ վերը նշված դրույթը կիրառվել է դատարանի վերջնական ակտով , գ) նրանք սպառել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները, դ) թեև նրանք չեն դիմել Սահմանադրական դատարան, սակայն նրանց կողմից Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու ժամկետը չէր ավարտվել այն օրվա դրությամբ, երբ Սահմանադրական դատարանում մուտքագրվել էր վերը նշված դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ անձի դիմումը:» (2022թ. մարտի 29, ՍԴՈ-1645)

7. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋԸ

7.1 Դիմումում հիմնավորումներ ներկայացնելը

««Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Այսինքն, վերոշարադրյալի համատեքստում կարելի է առանձնացնել հետևյալ երեք չափորոշիչները, որոնց միաժամանակյա առկայությունն անհրաժեշտ է օրենսդրությամբ նախատեսված՝ մերժման վերոնշյալ հիմքը բացառելու համար՝

- անհատական դիմումը պետք է պարունակի դիմողի կողմից վիճարկվող իրավական նորմերի հակասահմանադրականության վերաբերյալ իրավական փաստարկներ, հիմնավորումներ,
- դիմողը պետք է մատնանշի սահմանադրական այն իրավունքները, որոնք խախտվել են վիճարկվող իրավական դրույթի կիրառման արդյունքում,

դիմողը պետք է ցույց տա պատճառահետևանքային կապն առ այն, որ իր իրավունքների խախտման փաստը պայմանավորված է իր կողմից վիճարկվող իրավադրույթի ենթադրյալ հակասահմանադրական բովանդակությամբ կամ իրավակիրառական պրակտիկայի կողմից վիճարկվող նորմին հաղորդած ենթադրյալ հակասահմանադրական բովանդակությամբ:» (2018թ. դեկտեմբերի 4, ՍԴԱՈ-91)

7.2 Դիմումի՝ իրավաբանորեն բավարար կերպով հիմնավորվածությունը

«Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս անձը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել, և ի՞նչ է ակնկալում Սահմանադրական դատարանում իր դիմումի հիման վրա գործի քննության արդյունքում: Անհատական դիմումին ներկայացված այս պահանջը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել, և ի՞նչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր»: (2022թ. սեպտեմբերի 1, ՍԴԱՈ-133)

«Անդրադառնալով Դիմողի կողմից վկայակոչված՝ Սահմանադրության 74, 75, 79 և 80-րդ հոդվածներին՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ տվյալ հոդվածների բովանդակությունից բխում է, որ կոնկրետ վերահսկողության պարագայում դրանք ինքնին չեն կարող դառնալ առանձին քննարկման առարկա, այլ կարող են դիտարկվել միայն որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության սահմանափակման լույսի ներքո: Ինչ վերաբերում է Դիմողի կողմից վկայակոչված՝ Սահմանադրության 1-ին հոդվածին, ապա Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ այն ամրագրված է Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքները» վերտառությամբ 1-ին գլխում: Մինչդեռ, կոնկրետ վերահսկողության պարագայում նորմատիվ իրավական ակտի դրույթի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության, դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) սահմանադրականությունը վիճարկելու պարագայում անհրաժեշտ է բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, որ վիճարկվող դրույթը «իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը, դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացը» հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության խախտման:» (2025թ. հունվարի 21, ՍԴԴԿՈ-5)

7.3 «Ակնհայտ անհիմն դիմում» հասկացությունը

«Անհատական դիմումին ներկայացված այս պահանջը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև»: (2009թ. նոյեմբերի 24, ՍԴՈ-839)

«Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում շեշտել, որ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումներին ներկայացվող հիմնավորվածության պահանջը չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի՝ առանց ներկայացնելու վիճարկվող օրինադրույթների և ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի վերաբերյալ բավարար հիմնավորումներ: Ուստի՝ պայմանավորված այն հանգամանքով , որ վերոնշյալ պահանջները սույն դիմումում պահպանված չեն, դիմումը, հիշատակված հիմնավորումներով պայմանավորված, Սահմանադրական դատարանի գնահատմամբ ակնհայտ անհիմն է, որպիսի պայմաններում գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ ակնհայտ անհիմն լինելու հիմքով:» (2022թ. հուլիսի 12, ՍԴԱՈ-126)

«Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումներին ներկայացվող հիմնավորվածության պահանջը, համաձայն որի՝ ի թիվս այլնի, դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել, և ի՞նչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև, չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի՝ առանց ներկայացնելու պատճառահետևանքային կապը վիճարկվող օրինադրույթների և ենթադրյալ խախտման փաստի միջև բավարար հիմնավորումներ: Ուստի՝ պայմանավորված այն հանգամանքով , որ վերոնշյալ պահանջները դիմումում պահպանված չեն, դիմումը համարվում է ակնհայտ անհիմն»: (2022թ. սեպտեմբերի 1, ՍԴԱՈ-133)

«Սահմանադրական դատարանի դատական կազմն ընդգծում է, որ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների հիմնավորված լինելու պահանջը, համաձայն որի՝ դիմողը պետք է հիմնավորի, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքն է խախտվել , և ի՞նչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքի խախտման փաստի միջև, չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և/կամ ազատության՝ առանց ներկայացնելու վիճարկվող օրինադրույթի և համապատասխան հիմնական իրավունքի և/կամ ազատության ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի առկայության բավարար հիմնավորումներ:

...Դիմողի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի, ինչպես նաև 361-րդ հոդվածի 1-ին մասի (դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի)՝ իր որևէ հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման հանգեցնելը չհիմնավորելը բացառում է դրանց սահմանադրականության հարցի քննարկումը Սահմանադրության նաև 78 և 80-րդ հոդվածների հնարավոր խախտման համատեքստում, քանի որ կոնկրետ վերահսկողության պարագայում դրանք ինքնին չեն կարող դառնալ առանձին քննարկման առարկա, այլ կարող են դիտարկվել միայն որևէ հիմնական իրավունքի և/կամ ազատության սահմանափակման լույսի ներքո:

Հետևաբար՝ սույն անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, ինչը գործի քննությունը մերժելու հիմք է:» (2025թ. օգոստոսի 19, ՍԴԴԿՈ-42)

«...Անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ , դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար: ...Ակնհայտ անհիմն են նաև այն դիմումները, երբ նույն դիմողը միևնույն «հիմնավորումներով» և «փաստարկներով» վիճարկում է այն նույն դրույթի սահմանադրականությունը, որի հիման վրա գործի քննության ընդունումը մերժվել կամ արդեն իսկ ընդունվել է քննության սահմանադրական դատարանի կողմից: Վերջին դեպքում սահմանադրական դատարանում քննության ընդունված նույնաբովանդակ դիմումի հեղինակն իր սկզբնական դիմումի քննության ընդունմամբ արդեն իսկ ձեռք է բերում դիմողի կարգավիճակ, և նույն դրույթի սահմանադրականության հարցի առնչությամբ նա իրավասու է միայն՝ որպես դատավարության կողմ, ներկայացնելու գործի լուծման համար նշանակություն ունեցող նյութեր:» (2009թ. մարտի 17, ՍԴԱՈ-21)

«(...) Անձը պետք է անհատական դիմումի շրջանակներում ուղղակիորեն մատնանշի և հիմնավորի վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կոնկրետ դրույթի և Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող իր հիմնական իրավունքի և/կամ ազատության ենթադրյալ հակասության անմիջական պատճառահետևանքային կապը: Այլ կերպ ասած՝ վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը պետք է ուղղակիորեն հանգեցնի Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված որևէ հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում շեշտադրել , որ Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող սահմանադրահիրավական սկզբունքներին վիճարկվող իրավանորմերի հակասությունը սահմանադրահիրավական իմաստով չի կարող անհատական գանգատարկման առարկա դառնալ, եթե վերջնարդյունքում չի հանգեցնում անձի՝ Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման»: (2022թ. հուլիսի 12-ի ՍԴԱՈ-126)

«...Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումի ընդունելիության վերաբերյալ վերջնական որոշումը, ի թիվս դիմումի ընդունելիության համար անհրաժեշտ Սահմանադրությամբ և Սահմանադրական օրենքով թվարկված այլ պայմանների, պետք է հիմնված լինի այն հարցադրումների դրական պատասխանի վրա, թե (1) արդյո՞ք դիմումով վիճարկվող իրավական ակտի դրույթն ունի Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված որևէ իրավունքի կամ ազատության վերաբերյալ դրույթի հետ առերևույթ (prima facie) հակասություն (առաջին պայման), և (2) արդյո՞ք դիմումով վիճարկվող իրավական ակտի դրույթի ներկայացված հակասությունն առերևույթ (prima facie) հանգեցրել է դիմողի՝ Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված որևէ իրավունքի կամ ազատության խախտման (երկրորդ պայման): Վերը թվարկված որևէ պայմանի բացակայությունը բացառում է Սահմանադրական դատարանում գործի քննությունը, քանի որ առաջին պայմանի բացակայության դեպքում գործի քննությունը ենթադրում է հիմնական իրավունքի խախտումը վերացնելուն ուղղված այլ դատարանի

կողմից կայացված դատական ակտի ստուգման լիազորություն Սահմանադրական դատարանի կողմից, որով Սահմանադիրը Սահմանադրական դատարանին չի օժտել: Իսկ, երկրորդ պայմանի բացակայությամբ գործի քննությունը Սահմանադրական դատարանում հանգեցնում է Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումով վիճարկվող դրույթի սահմանադրականության վերացական ստուգման անհրաժեշտության, որպիսի դիմում ներկայացնելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակը հստակ և սպառիչ թվարկված է Սահմանադրության 169-րդ հոդվածում, որոնց թվին Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելու իրավունք ունեցող անձինք չեն դասվում:» (2024 թվականի մայիսի 13, ՍԴԱՈ-76)

«Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անհատական դիմումի շրջանակներում նորմատիվ իրավական ակտի դրույթի, իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության կամ դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի սահմանադրականությունը վիճարկելու պարագայում անհրաժեշտ է բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, որ վիճարկվող դրույթը (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը, դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացը) հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված առնվազն որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության խախտման, որը սույն պարագայում տեղի չի ունեցել: Փոխարենը՝ Դիմողը սահմանափակվել է իր՝ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված՝ համապատասխանաբար՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների խախտման վերաբերյալ պնդումների պարզապես վկայակոչմամբ՝ բավարար կերպով իրավաբանորեն չհիմնավորելով իր կողմից վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության և նման խախտման ընդհանրությունը, դրանց միջև անմիջական պատճառահետևանքային կապի առկայությունը՝ սույն կոնկրետ գործի հանգամանքների և առանձնահատկությունների հաշվառմամբ:» (2023 թ. նոյեմբերի 10, ՍԴԱՈ-132)

«Վերոգրյալի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ դիմողի ներկայացրած փաստարկներն իրենց համակցության մեջ չեն հաղթահարում Սահմանադրական դատարան հիմնավոր բողոք ներկայացնելու անհրաժեշտ նվազագույն շեմը, քանի որ, վերը նշված վերլուծության համատեքստում, դիմողը չի կարողացել իրավաբանորեն հիմնավորել իր մատնանշած ենթադրյալ իրավունքի խախտումը: Այլ կերպ ասած՝ դիմումի ուսումնասիրությունից հնարավոր չէ ողջամիտ հետևության հանգել, թե ինչպե՞ս է վիճարկվող դրույթը հանգեցրել Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված՝ դիմողի հիմնական իրավունքների և ազատությունների խախտման:

Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս անձը պետք է հստակ պատկերացնի իր նկատմամբ կիրառված օրենքի նորմի բովանդակությունը և փորձի գնահատել ու նախատեսել Սահմանադրական դատարանում իր իրավունքների պաշտպանությանն ուղղված և Սահմանադրությամբ ու օրենքով թույլատրելի հետագա գործողությունները, ինչպես նաև պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն

հիմնավորել, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել, և ի՞նչ է ակնկալում Սահմանադրական դատարանում իր դիմումի հիման վրա գործի քննության արդյունքում: Օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:» (2021թ. հոկտեմբերի 18, ՍԴԴԿՈ-69)

7.4 «Պատճառահետևանքային կապ» հասկացությունը

«Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի վերլուծությունից կարելի է մակաբերել, որ անձը, ի թիվս այլնի, սահմանադրական արդարադատության կարող է դիմել բացառապես այն պարագայում, երբ վերջինիս կողմից վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կոնկրետ դրույթի/դրույթների հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման: Վերոգրյալից բխում է սահմանադրաիրավական պահանջն առ այն, որ անձը պետք է անհատական դիմումի շրջանակներում ուղղակիորեն մատնանշի և հիմնավորի վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կոնկրետ դրույթի և Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող իր հիմնական իրավունքի և/կամ ազատության ենթադրյալ հակասության անմիջական պատճառահետևանքային կապը: Այլ կերպ ասած՝ վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը պետք է ուղղակիորեն հանգեցնի Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված որևէ հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում շեշտադրել , որ Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող սահմանադրաիրավական սկզբունքներին վիճարկվող իրավանորմերի հակասությունը սահմանադրաիրավական իմաստով չի կարող անհատական գանգատարկման առարկա դառնալ , եթե վերջնարդյունքում չի հանգեցնում անձի՝ Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման:

...Սահմանադրական դատարանը փաստում է, որ դիմողը նշում է, որ վիճարկվող նորմերի՝ Սահմանադրության 164-րդ և 79-րդ հոդվածներին հակասությունը հանգեցնում է իր՝ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով սահմանված իրավունքների խախտման, մինչդեռ սահմանադրաիրավական հիշատակված կարգավորումները պահանջում են, որ յուրաքանչյուր դեպքում Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս սահմանադրական արդարադատություն հայցող սուբյեկտը հիմնավորի վիճարկվող նորմերի ենթադրյալ հակասահմանադրականության արդյունքում Սահմանադրության 2-րդ գլխով ամրագրված իր իրավունքների խախտման/սահմանափակման անմիջական պատճառահետևանքային կապը, այլ ոչ թե Սահմանադրության այլ գլուխներում ամրագրված նորմերի ենթադրյալ հակասության արդյունքում դրանց ենթադրյալ խախտումը, ինչը ձևախեղում է կոնկրետ սահմանադրական վերահսկողության բուն էությունը:» (2022թ. հուլիսի 12, ՍԴԱՈ-126)

«Անդրադառնալով Դիմողի կողմից վկայակոչված՝ Սահմանադրության 78 և 79-րդ հոդվածներին՝ Սահմանադրական դատարանի դատական կազմն անհրաժեշտ է համարում արձանագրել , որ տվյալ հոդվածների բովանդակությունից բխում է, որ կոնկրետ վերահսկողության պարագայում դրանք ինքնին չեն կարող դառնալ առանձին քննարկման առարկա, այլ կարող են դիտարկվել միայն որևէ հիմնական իրավունքի և/կամ ազատության սահմանափակման լույսի ներքո:» (2025թ. հուլիսի 30, ՍԴԴԿՈ-38)

«Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ Դիմողի կողմից վիճարկվող քրեադատավարական նորմի ենթադրյալ հակասահմանադրականության և Դիմողի անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքի ենթադրյալ խախտման միջև դիմումում նկարագրված պատճառահետևանքային կապը ենթադրական է և պատրանքային: Մասնավորապես՝ Օրենսգրքի վերաբերելի իրավադրույթների համադրված և համեմատական վերլուծությունից հնարավոր չէ եզրահանգել, որ անգամ դատավարական ժամկետի խախտումը հիմնավորելով՝ մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին միջնորդությունը հսկող դատախազի կողմից մերժվելը բացառում է այդ միջնորդության ներկայացումը հետագայում ՝ մինչև քրեական հետապնդման վաղեմության ժամկետը լրանալը: Այսինքն՝ «անհապաղ» եզրույթի մեկնաբանման արդյունքում Դիմողի նախանշած հետևանքներն ամենևին վարույթի ընթացքի օրինաչափ տարբերակ չեն:» (2025թ. հունիսի 19, ՍԴԴԿՈ-28)

8. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ՀԻՄՔԵՐ

8.1.Օտարալեզու փաստաթղթերի հայերեն թարգմանությունների նոտարական վավերացման պահանջը

«4.2. Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջի՝ օտարալեզու փաստաթղթի հայերեն թարգմանության՝ օրենքով սահմանված կարգով վավերացման նորմատիվ բովանդակությունը բացահայտելու նպատակով Սահմանադրական դատարանի դատական կազմը հարկ է համարում նախ անդրադառնալ «վավերացում» եզրույթի լեզվական (էթիմոլոգիական) իմաստին: Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» համաձայն՝ «վավերացնել» բառը նշանակում է պաշտոնապես հաստատել, վավերական դարձնել որևէ փաստաթուղթ, որևէ բանի ճշտությունը հավաստել, ճիշտ համարել: Ըստ այդմ ՝ վավերացումը ենթադրում է որևէ սուբյեկտի կողմից կատարված գործողության (փաստաթղթի, ակտի) հավաստիության, ճշգրտության պաշտոնական հաստատում այլ (իրավասու) սուբյեկտի կողմից: Դիմողի կողմից վիճարկվող Գրությամբ որպես դիմումի ձևական (ֆորմալ) թերություն մատնանշվել է Դիմողի՝ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության քաղաքացու անձնագրի պատճենի հայերեն թարգմանությունը՝ առանց պատշաճ, այն է՝ օրենքով սահմանված կարգով կատարված նոտարական վավերացման՝ դիմումին կից փաստաթղթերի ցանկում Սահմանադրական դատարան ներկայացնելը:» (2024թ. հոկտեմբերի 16, ՍԴԴԿՈ-58)

8.2 Դիմումը ներկայացնելու վեցամսյա ժամկետի չպահպանումը

«Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմն արձանագրում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված 6-ամսյա ժամկետի բացթողման հարցը, ի թիվս այլնի, պետք է քննության առնվի դիմումի ընդունելիության վերաբերյալ որոշում կայացնելիս՝ «Սահմանադրական դատարանի մասինե սահմանադրական օրենքի 28 և 69-րդ հոդվածներով սահմանված կարգով:» (2018թ. հունիսի 11, ՍԴԴԿՈ/1-16)

8.3. Դիմումին վերջնական դատական ակտի կցված չլինելը[117]

«Ուսումնասիրելով Սահմանադրական դատարան ներկայացված դիմումները, վերջիններիս կից փաստաթղթերը, Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի գրությունները՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը եզրահանգում է, որ ներկայացված սույն դիմումին կից՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի իմաստով «դատարանի վերջնական դատական ակտի» առկայության հարցն ուղղակիորեն փոխկապակցված է Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի իմաստով «դատական պաշտպանության բոլոր միջոցների» սպառման՝ անհատական դիմումի ընդունելիության պահանջի բավարարման հարցին, որի վերաբերյալ որոշման կայացման իրավասությունը վերապահված է Սահմանադրական դատարանին:» (2022թ. օգոստոսի 31, ՍԴԴԿՈ-45)

117 ՍԴ իրավական դիրքորոշումները ներկայացված են Սահմանադրական դատարանի՝ գործող պրակտիկայի հիման վրա

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Անհատական դիմումի տիպօրինակ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Դիմող՝ Պետրոս Պետրոսյան[118]

Անձնագիր՝ _____, տրված _____ , _____ կողմից

Հասցե՝ ք. Երևան, _____ փող.____ , բն. _____

(հաշվառման կամ բնակության վայրի հասցե, եթե այն տարբերվում է հաշվառման հասցեից)

Էլ. փոստ՝ _____

Հեռ՝ _____

- - - -

ԴԻՄՈՒՄ

_____ հոդվածը՝ Սահմանադրության _____հոդվածին, համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Բարձր դատարան,

Հիմք ընդունելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը՝ սույն դիմումով խնդրում ենք որոշել _____ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

1. Գործի դատավարական նախապատմությունը

_____ դատարանը _____ վճռով մերժել է դիմողի հայցը:

ՀՀ վերաքննիչ դատարանը մերժել է դիմողի բողոքը և իր _____ որոշմամբ վճիռը թողել է անփոփոխ: _____ թ. ՀՀ վճռաբեկ դատարանը կայացրել է ՀՀ վերաքննիչ դատարանի որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքի վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում:

(շարադրել գործի դատավարական նախապատմության, դատարանների կողմից դիմողի վիճարկվող նորմի կիրառման տրված մեկնաբանության և այլ վերաբերելի մանրամասները)

Դիմումը բավարարում է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա կոնկրետ գործերով վերջնական դատական ակտով դիմողի նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ դիմումներին ներկայացվող՝ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասի պահանջներին:

2. Վիճարկվող նորմի սահմանադրությանը հակասելու հիմնավորումները

Գտնում ենք, որ վիճարկվող նորմը հակասում է Սահմանադրության 2-րդ գլխի _____ հոդվածին՝ հետևյալ հիմնավորումներով.

(ներկայացնել իրավաբանական հիմնավորումներ, թե Ձեր սահմանադրական որ իրավունքներն են խախտված և ինչ պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող նորմի (իրավակիրառ պրակտիկայում նորմին տրված մեկնաբանության) և Ձեր իրավունքների խախտման փաստի միջև)

3. Սահմանադրական դատարան ներկայացվող խնդրանքը[120]

Հաշվի առնելով վերոնշյալ հիմնավորումները՝ խնդրում ենք _____ հոդվածը ճանաչել Սահմանադրության _____ հոդվածին հակասող:

Կից ներկայացվում են՝

1) **լիազորագիրը** կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող այլ փաստաթուղթ,
2) օտար լեզվով շարադրված բոլոր փաստաթղթերի՝ օրենքով սահմանված կարգով վավերացված հայերեն **թարգմանությունը,**
3) օրենքով սահմանված չափով **պետական տուրք վճարելու վերաբերյալ անդորրագիրը կամ միջնորդություն** պետական տուրքի վճարումից ազատելու մասին,
4) ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի այն **վերջնական դատական ակտը,** որով դիմողի նկատմամբ կիրառվել է նրա կողմից վիճարկվող օրենքի դրույթը,
5) դիմողի **անձը հաստատող** փաստաթղթի **պատճենը.**[121]
6) իրավաբանական անձի[122] պետական գրանցման կամ անհատ ձեռնարկատիրոջ **պետական հաշվառման համարը,**
7) որպես ներկայացուցիչ հանդես եկող **փաստաբանի անձը հաստատող և փաստաբանի կարգավիճակի մասին հավաստող փաստաթղթի պատճենները,**
8) որպես ներկայացուցիչ հանդես եկող՝ բարձրագույն իրավաբանական

---

120 Օրենսդրական բացի վիճարկման դեպքում ՍԴ ներկայացվող խնդրանքի ձևակերպումը՝ «Խնդրում ենք _____ հոդվածը, այնքանով, որքանով չի կարգավորում (չի նախատեսում) _____ ը, ճանաչել Սահմանադրության _____ հոդվածին հակասող»

121 Եթե դիմողը անհատ է

122 Եթե դիմողը կազմակերպություն է

կրթություն ունեցող անձի՝ անձը հաստատող փաստաթղթի և **բարձրագույն իրավաբանական կրթությունը հավաստող փաստաթղթի պատճենը,**

9) դիմումի հիմնավորվածությունը **հավաստող ապացույցները,**

10) գործին **առնչվող այլ նյութեր:**

ԴԻՄՈՂ՝ /անուն, ազգանուն, ստորագրություն/

Ամսաթիվ

ՀԱՎԵԼՎԱԾ 4

Լիազորագրի տիպօրինակ

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

Ես՝_____ս (անձնագիր՝ _____, տրված ___.___.___թ.____-ի կողմից, բնակվող _____ հասցեում) լիազորում եմ քաղաքացի _____ ին (անձնագիր՝ _____ , տրված ___.___.___թ.____-ի կողմից, բնակվող _____ հասցեում), ինձ ներկայացնել Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանում, այդ թվում ՝ ստորագրելու անհատական դիմումը, ստանալու և ներկայացնելու անհրաժեշտ փաստաթղթեր, մասնակցելու դատական նիստերին, ծանոթանալու գործի նյութերին, անելու քաղվածքներ, ներկայացնելու գործի լուծման համար նշանակություն ունեցող նյութեր, գործի առնչությամբ ներկայացնելու դիրքորոշումներ, հարցեր տալու դատավարության մյուս կողմին, նրա ներկայացուցչին, հարուցելու միջնորդություններ, անելու առաջարկություններ, ներկայացնելու առարկություններ և կատարելու դատավորության կողմի համար սահմանված այլ գործողություններ:
Լիազորագիրը տրվում է _____ ժամկետով:

Լիազորող՝ _____ /ստորագրություն

----.----.----թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 5

Պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդության տիպօրինակ

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ և 31-րդ հոդվածի կարգավորումները, խնդրում եմ ինձ ազատել Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու համար սահմանված պետական տուրքի վճարումից, հաշվի առնելով իմ գույքային դրությունը:

----------:

(ներկայացնել գույքային դրությունը)

Կից ներկայացնում եմ իմ գույքային դրությունը հավաստող փաստաթղթերը:

Կից՝

1. _____
2. _____

Դիմող՝ _____

_____._____. _____թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 6

Անհատական դիմումների ընդունելիության չափանիշների պահպանման նախնական գնահատման ստուգաթերթ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ[123]

Հ.Հ.	ՀԱՐՑ	○ Այո	○ Ոչ
1	Դիմողը անհատ է կամ կազմակերպություն		
2	Առկա է կոնկրետ գործ, որով կիրառվել է վիճարկվող նորմը		
3	Դիմողի նկատմամբ կիրառվել է օրենք կամ ենթաօրենսդրական ակտ		
4	Դատական գործով արդեն կայացված է վերջնական ակտ		
5	Դիմողի նկատմամբ վիճարկվող նորմը կիրառվել է վերջնական դատական ակտով		
6	Վիճարկվող նորմը հանգեցրել է հիմնական իրավունքների և ազատությունների խախտմանը		
7	Եթե դիմողը ֆիզիկական անձ է, ապա վիճարկվող նորմը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխով սահմանված նրա որևէ հիմնական իրավունքին կամ ազատությանը		

123 Այս ստուգաթերթը նախատեսված է օգնելու դիմողներին և նրանց ներկայացուցիչներին կատարել նախնական գնահատում, թե արդյոք անհատական դիմումը համապատասխանում է օրենքով սահմանված ընդունելիության հիմնական չափանիշներին: Այն կարող է ծառայել **որպես ինքնագնահատման գործիք**՝ նախքան դիմումի վերջնական ձևակերպումն ու ներկայացումը, ինչը կօգնի նվազեցնել մերժման ռիսկը՝ տեխնիկական կամ ընթացակարգային բացթողումների պատճառով: Սույն ստուգաթերթը տրամադրվում է որպես տեղեկատվական ու օժանդակ միջոց և չի հանդիսանում իրավաբանական խորհրդատվություն: **Այն չի երաշխավորում դիմումը վարույթ ընդունելը:** Ստուգաթերթի կիրառումը չի փոխարինում մասնագիտական իրավաբանական խորհրդատվությանը, իսկ վերջնական գնահատումը իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ յուրաքանչյուր գործի փաստական և իրավական հանգամանքները հաշվի առնելով:

Հ.Հ.	ՀԱՐՑ	○ Այո	○ Ոչ
8	Եթե դիմողը իրավաբանական անձ է, ապա վիճարկվող նորմը հանգեցրել է միայն այն իրավունքներին ու ազատություններին, որոնք կիրառելի են կազմակերպությունների նկատմամբ		
9	Սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները		
10	Դիմումը ներկայացվում է վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող վեցամսյա ժամկետում		
11	Ձեր կողմից բարձրացված հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանը նախկինում որոշում չի կայացրել		
12	Սահմանադրական դատարանում արդեն իսկ ընթանում է դատաքննություն Ձեր կողմից բարձրացված հարցի վերաբերյալ այլ անձի դիմումի հիման վրա		
13	Դիմումը պարունակում է հղումներ վիճարկվող ակտի նորմերին		
14	Դիմումը պարունակում է հղումներ Սահմանադրության հոդվածներին		
15	Դիմումը պարունակում է իրավական փաստարկներ և հիմնավորումներ այն մասին, թե Ձեր կողմից վիճարկվող նորմը ինչու է հակասում Սահմանադրությանը		

Հ.Հ.	ՀԱՐՑ	○ Այո	○ Ոչ
16	Դիմումում հստակ նշել եք, թե Ձեր կոնկրետ որ իրավունքն է խախտվել վիճարկվող նորմի կիրառման արդյունքում		
17	Դիմումում հստակ ցույց եք տվել վիճարկվող նորմի և Ձեր իրավունքների միջև պատճառահետևանքային կապը		
18	Դիմումը ստորագրված է իրավասու անձի կողմից		
19	Դիմումին կցել եք պետական տուրքի վճարման անդորրագիրը կամ դրա վճարումից ազատելու մասին միջնորդություն		
20	Եթե դիմողը անհատ է, դիմումին կցել է անձը հատսատող փաստաթղթի պատճեն		
21	Եթե դիմողը կազմակերպություն է, ապա դիմումին կցել եք՝ իրավաբանական անձի պետական գրանցման կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը		
22	Եթե դիմումը ներկայացնում եք ներկայացուցչի միջոցով, ապա դիմումին կցել եք լիազորագիր, ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճեն, փաստաբանի արտոնագրի պատճեն (բարձրագույն իրավաբանական կրթությունը հավաստող փաստաթղթի պատճեն)		
23	Եթե դիմողը կազմակերպություն է, ապա դիմումին կցել եք՝ իրավաբանական անձի պետական գրանցման կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը		

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդը առաջատար իրավապաշտպան կազմակերպությունն է մայրցամաքում: Կազմակերպությանն անդամակցում է 46 պետություն, այդ թվում՝ Եվրոպական միության անդամ բոլոր պետությունները: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային, որը մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագիր է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE